


ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅՄԱՍԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

«Նայասանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» գեկույց



ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿ

«Նայաստանի երիտասարդների ձգճումները եւ ակնկալիւիւները» գեկույց



Երևան
2012

ՀՏԴ 301 (042.3)
ԳՄԴ 60.5
Ղ 158

Հեղինակ՝

Դ. Ղազարյան

Խմբագրական խորհուրդ՝

Ա. Բակունց

Ա. Թադևոսյան, *կենս. գիտ. թեկն.*

Դ. Հայրապետյան, *հոգ. գիտ. թեկն*

Ն. Հարությունյան

Մ. Մալխասյան

Ռ. Մարկոսյան, *տեխ. գիտ. թեկն.*

Ա. Պապյան

Տ. Փիրումյան

Տեխնիկական խմբագիր՝

Գ. Մելիքբեկյան

Ձևավորումը և էջադրումը՝

Ա. Պատվականյան

Ղ 158 Ղազարյան Դ. Հայաստանի երիտասարդների ծգտումները և ակնկալիքները: Ձեկույց / Դ. Ղազարյան, Եր.: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակ, 2012. – 200 էջ:
Չափսը՝ 17x23, տպագրությունը՝ օֆսեթ, տպաքանակը՝ 400 օրինակ:

ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի պատվերով հետազոտությունն իրականացրել են «Հայաստանի հասարակայնության հետ կապերի ասոցիացիա» ՀԿ-ն (տնօրեն՝ Տ. Փիրումյան) և «Արինսայթ» հետազոտական ընկերությունը (տնօրեն՝ Դ. Ղազարյան): Ձեկույցի տեխնիկական խմբագրման, ձևավորման և տպագրության աշխատանքներն իրականացվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից:

Սույն զեկույցը ընդգրկում է Հայաստանի երիտասարդության շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Հետազոտության նպատակն էր պարզել Հայաստանի երիտասարդության խնդիրները, ծգտումներն ու ակնկալիքները ապագայի նկատմամբ: Ներկայացված են հարցումների, ֆոկլոր խմբերի և փորձագիտական ու խորքային հարցազրույցների տվյալները և դրանց առաջնային վերլուծությունները:

Աշխատանքը նախատեսված է ՀՀ կառավարության համապատասխան գերատեսչությունների, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդության խնդիրներով հետաքրքրված փորձագետների և երիտասարդության լայն շրջանակի համար:

Հետազոտությունը հիմնված է հանրային կարծիքի ուսումնասիրության վրա:

Ձեկույցում տրված կարծիքներն ու գնահատականները պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի և ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի տեսակետներին:

Սույն զեկույցի որևէ նյութի վերարտադրումը թույլատրելի է միայն ոչ առևտրային նպատակներով և աղբյուրի պատշաճ հղման պայմանով:

ISBN 978-99941-2-765-8

ՀՏԴ 301 (042.3)
ԳՄԴ 60.5

© ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակ

ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը իր երախտագիտությունն է հայտնում «Հայաստանի հասարակայնության հետ կապերի ասոցիացիա» ՀԿ-ին և «Արինսայթս» հետազոտական ընկերությանը հետազոտության իրականացման և զեկույցի պատրաստման համար, ինչպես նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոնին և ծրագրում ընդգրկված երիտասարդական ոլորտի փորձագետներին հետազոտության իրականացման և զեկույցի պատրաստման ընթացքում նրանց ունեցած մեծ ներդրման համար:



րիտասարդները յուրաքանչյուր երկրի հարստությունն են և կարևորագույն դեր են խաղում պետության զարգացման գործում: Տնտեսական, քաղաքական և հասարակական սրընթաց զարգացումներով արագ փոփոխվող մեր աշխարհում նրանք են, որ կոչված են մշակելու նորարարական լուծումներ մեր ցանկալի ապագայի համար:

Հայաստանում պաշտոնավարման ընթացքում ինձ զարմացրել են հայ երիտասարդների երկրում ժողովրդավարության զարգացմանը նպաստելու և բարգավաճումը խթանելու եռանդը, ձգտումները, հետաքրքրվածությունը և վճռականությունը: Երիտասարդներն առավել անկաշկանդ են և հստակ դիրքորոշում ունեն այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրի կայուն զարգացումը, սոցիալական արդարությունը, մարդու իրավունքները, արդարությունն ու հավասարությունը:

«Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» զեկույցը պատրաստվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համագործակցության արդյունքում: Ձեկույցը հայ երիտասարդների տրամադրությունները լավագույնս հասկանալու անհրաժեշտությամբ պայմանավորված փորձ է, որի նպատակն է նրանց զգացումների և պատկերացումների միջոցով բացահայտել իրենց առջև ծառայած կարևորագույն մարտահրավերները և դրանք հաղթահարելու նրանց տեսլականը: Հայաստանի երիտասարդների կողմից տրված անկեղծ պատասխանները և նրանց իրական ձգտումները ձևակերպվել են և ներառվել այս զեկույցում:

Յուրաքանչյուր երիտասարդական զեկույց վեր է հանում մի շարք խնդիրներ: Այսպես՝ ակտիվ երիտասարդների և երիտասարդական եռանդուն նախաձեռնությունների բազմաթիվ օրինակների կողքին մենք, այդուհանդերձ, տեսնում ենք, որ երիտասարդների մեծ մասը մտահոգված է իր ստեղծագործական կարողությունները, հսկայական էներգիան և շնորհներն ի նպաստ հասարակությանը ծառայեցնելու հնարավորությունների սահմանափակությամբ: Մեր զեկույցը ևս բացառություն չէ. համոզիչ կերպով ներկայացնելով երիտասարդության կողմից սոցիալական, տնտեսական, բնապահպանական և քաղաքական հարցերի լուծման գործում ակտիվորեն ներգրավվելու ցանկությունն ու պատրաստակամությունը՝ միաժամանակ այն ցույց է տալիս երիտասարդության ներգրավման անհամաչափ և չօգտագործված հնարավորությունները:

Հավատում են, որ զեկույցը նաև ուրվագծում է առաջընթացի ուղին և բացահայտում երիտասարդների՝ Հայաստանը հեռանկարային, գործունե ժողովրդավարությամբ, օրենքի գերակայությամբ ու շուկայական տնտեսությամբ ժողովրդավարական պետության փոխակերպելու կարողության զարգացման ու պահպանման, ինչպես նաև մասնակցության և հաշվետվողականության մեխանիզմների ստեղծման հնարավորությունները:

Երկրի զարգացման գործընթացում երիտասարդներին ներգրավելն այլևս ցանկություն չէ, այլ հրամայական պահանջ ու համապատասխան կերպով գործելու և հասարակության լիարժեք մասնակցությունն ապահովելու կոչ բոլոր շահագրգիռ կողմերին:

Դաֆինա Գերչևա
ՄԱԿ-ի մշտական համակարգող
ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ



արգելի՛ գործընկերներ,

Ձեր ուշադրությանն է ներկայացվում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ու ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից նախաձեռնված «Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» զեկույցը, որը հաջորդում է Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի առաջին՝ հետազոտական մասին՝ լրացնելով այն և վերլուծական որոշակի բազա ստեղծելով ազգային զեկույցի երկրորդ մասի համար:

Այս հետազոտությունն արգասիքն է 2011 թ-ին ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի և ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի միջև կնքված համագործակցության հուշագրի, որի հիմնական նպատակն էր երիտասարդական հետազոտությունների համատեքստում կատարել երիտասարդների ձգտումների և ակնկալիքների համապարփակ ուսումնասիրություններ:

Նկատի ունենալով արդեն հաջողված փորձը՝ առաջիկայում նախատեսվում է այս համագործակցությունը զարգացնել Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կայացման և զարգացման շրջանակներում, մասնավորապես երիտասարդական ուսումնասիրությունների կենտրոնի կայացման գործում: Այս կապակցությամբ ևս նախատեսվում է ստորագրել համապատասխան հուշագիր:

Առաջիկայում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը կիրականացնի նաև Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի երկրորդ՝ վերլուծական մասի հրապարակումը, որը կլինի վերոնշյալ երկու խոշորածավալ սոցիալական հարցումների համադրումը և Հայաստանի երիտասարդության հիմնախնդիրների, ինչպես նաև պետությունից նրանց սպասումների ու ակնկալիքների վերաբերյալ առավել օբյեկտիվ պատկերացում կազմելու հնարավորություն կտա:

Միաժամանակ երիտասարդական քաղաքականության ոլորտն արդիականացնելու ուղղությամբ գործնական քայլեր իրականացնելու նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, հիմնվելով Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի ուսումնասիրական հատվածի տվյալների վրա, ՀՀ բոլոր մարզերում կազմակերպել է լայնածավալ հանրային քննարկումներ՝ նպատակ ունենալով 2013-2017 թվականների պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության մեջ ներառել երիտասարդության առջև ծառայած հիմնախնդիրների հաղթահարման առավել իրատեսական ուղիների ուղղագծման համար անհրաժեշտ գործիքներ և միջոցներ, ինչի արդյունքում կունենանք փաստարկված և հստակ թիրախավորված պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարություն:

Արսեն Քարամյան
ՀՀ սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարի տեղակալ

ԲԱԺԻՆ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
1.1. Հետազոտության մեթոդաբանությունը	12
1.1.1 Հետազոտության ընտրանքը	12
1.2. Հետազոտության հայեցակարգային հիմքերը	16
1.3. Հաշվետվության կառուցվածքը	18
ԲԱԺԻՆ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	19
ԲԱԺԻՆ 3. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ	25
3.1. Երիտասարդների ընտանեկան ներկայիս դրությունը	26
3.2. Ընտանիքի կազմակերպումը, ընտանիք կազմելու ճանապարհին ընկած խոչընդոտների և դրանց հաղթահարման մեխանիզմների ընկալումները	29
3.3. Ընտանեկան արժեքների ընկալումները	35
ԲԱԺԻՆ 4. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ	39
4.1. Երիտասարդների վարքը կրթության ինստիտուտում	40
4.2. Երիտասարդների՝ հայաստանյան կրթական հաստատություններից տված գնահատականները	43
4.3. Կրթության արժեքը երիտասարդների ընկալումներում	46
4.4. Երիտասարդների կրթական ձգտումները	48
ԲԱԺԻՆ 5. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶՔԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	53
5.1. Երիտասարդների ներկայիս պրակտիկաները զբաղվածության ինստիտուտում	54
5.2. Աշխատանքային հարաբերությունների ընկալումները և արժեքները	58
ԲԱԺԻՆ 6. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏՐԱՍՎԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	65
ԲԱԺԻՆ 7. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԵՐԳՐՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ	81
7.1. Պետության և Հայաստանի Հանրապետության ընկալումները, պետականության պահպանման գործոնները	82
7.1.1. Երիտասարդների դիրքորոշումները բանակի վերաբերյալ	90

7.2. Երիտասարդների դիրքորոշումները ՀՀ արտաքին քաղաքականության վերաբերյալ.....	94
7.3. Երիտասարդների քաղաքացիական մասնակցությունը.....	97
7.3.1. Երիտասարդների մասնակցությունը տարբեր կառույցների գործունեությանը	100
7.3.2. Մասնակցությունն ընտրություններին.....	108

ԲԱԺԻՆ 8. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 111

8.1. Երիտասարդների բավարարվածությունն իրենց կյանքով և ապագայի պլանները	112
8.2. Երիտասարդների հիմնախնդիրների ընկալումները.....	117
8.3. Երիտասարդների սոցիալական տրամադրությունները.....	121
8.4. Երիտասարդների արժեքային կողմնորոշումները.....	124

ԲԱԺԻՆ 9. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆՅԸ131

9.1. Ժամանցի վայրերը.....	132
9.2. Երիտասարդների երաժշտական նախասիրությունները.....	135
9.3. Լրատվամիջոցների սպառումը.....	136

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ141

Հավելված 1. Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական տվյալները	141
Հավելված 3. Ընտանիքին վերաբերող աղյուսակներ.....	143
Հավելված 4. Կրթությանը վերաբերող աղյուսակներ	147
Հավելված 5. Երիտասարդների զբաղվածությանը վերաբերող աղյուսակներ	153
Հավելված 6. Երիտասարդների միգրացիոն տրամադրություններին վերաբերող աղյուսակներ	157
Հավելված 7. Երիտասարդների մասնակցությանը վերաբերող աղյուսակներ.....	161
Հավելված 8. Երիտասարդների սոցիալական տրամադրություններին վերաբերող աղյուսակներ	167
Հավելված 9. Երիտասարդների ժամանցին վերաբերող աղյուսակներ.....	181





ԲԱԺԻՆ 1.

Մերածություն

Երիտասարդները երկրի զարգացումը խթանող մարդկային կարևորագույն ռեսուրս են: Միաժամանակ նրանք երկրի սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական նորարարության ոլորտներում փոփոխությունների ջատագովներն են: Այսօր Հայաստանում երիտասարդները բախվում են բազմաթիվ մարտահրավերների, որոնք ազդում են քաղաքականություն մշակողների նկատմամբ վստահության մակարդակի վրա, ինչպես նաև հանգեցնում են դեմոստիվացիայի և արտագաղթի: Այդպիսի մարտահրավերներից են զբաղվածության սահմանափակ հնարավորությունները, կրթության և բնակարանի սահմանափակ մատչելիությունը և երիտասարդների մասնակցային ցածր մակարդակը:

Հայաստանում քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներին երիտասարդության ներգրավումը նույնպես անբավարար մակարդակի վրա է, և երիտասարդներն իրենց ներուժն ամբողջապես կիրառելու սահմանափակ հնարավորություններ ունեն: ՀՀ Կառավարությունն առաջնահերթ է համարում երկրի մարդկային կապիտալի զարգացումը, ինչպես նաև երիտասարդների ստեղծարար ամբողջ ներուժի ներդրումը՝ ի բարօրություն հասարակության:

ՄԱԿ-ն իր հերթին առաջնահերթ է համարում երիտասարդների ներգրավվածությունը երկրին առնչվող որոշումների կայացման գործընթացում: Երիտասարդներին վերաբերող իր փաստաթղթում ՄԱԿ-ը կոչ է անում ներդնել հանրային ռեսուրսներ՝ երեխաների և երիտասարդների զարգացումը խթանելու, և աջակցել երկրների կառավարություններին՝ համապատասխան քաղաքականություններ մշակելու և իրականացնելու համար:

2011 թվականին ՀՀ Կառավարությունը նախաձեռնել է Հայաստանի երիտասարդության ազգային երկրորդ զեկույցի մշակումը: ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակը, աջակցելով և համագործակցելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի հետ, զուգահեռաբար նախաձեռնել է համապետական հետազոտություն՝ երիտասարդների ձգտումները և ակնկալիքները բացահայտելու նպատակով: Այն իրականացվել է ՄԱԶԾ-ի «Հայաստանի համայնքների մոբիլիզացում սոցիալական համաձայնության նպատակով» ծրագրի շրջանակում:

«Երիտասարդների ձգտումների» սոցիոլոգիական հետազոտությունը 2011թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել է «Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիա» ՀԿ-ի և «Արինսայթս» հետազոտական ընկերության կողմից:

Սույն հաշվետվության շրջանակում, բացի հետազոտության արդյունքներից, ներկայացված են նաև ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից տրամադրված որոշ տվյալներ՝ հարցված երիտասարդների՝ այս կամ այն հարցի շուրջ ունեցած դիրքորոշումների համատեքստն ուրվագծելու նպատակով:

Այս նախաձեռնության նպատակն է նպաստել երիտասարդների քաղաքացիական իրավազորմանը, Հայաստանի կառավարման և քաղաքական ու տնտեսական զարգացման գործընթացներում նրանց՝ իրենց ուժերի առավելագույն չափով ներգրավմանը և մասնակցությանը: Նախաձեռնության սահմանված խնդիրն է վեր հանել երիտասարդների ձգտումները և ակնկալիքները, արժեքները, նպատակները, ինչպես նաև երկրի քաղաքական, սոցիալական և մշակութային կյանքում նրանց ունեցած հավակնությունները: Հարցման թիրախային խումբը կազմել են Հայաստանի 16-ից 30 տարեկան երիտասարդները:

Ընդ որում՝ հարցման արդյունքները դրվել են քննարկման և վավերացվել են բազմաթիվ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ կազմակերպված հանրային երկխոսությունների միջոցով: Այդ երկխոսություններին մասնակցել են երիտասարդներ, քաղաքացիական հասարակության, ինչպես նաև մարզային և տեղական իշխանությունների ներկայացուցիչներ: Քննարկումների արդյունքները միտված են եղել հայաստանցի երիտասարդների համար սոցիալ-տնտեսական հնարավորությունների ապահովման, քաղաքացիական քննարկումներում և քաղաքականության մշակմանն առնչվող որոշումների կայացման գործընթացում նրանց մասնակցությունն արձանագրող ազգային գործընկերության մոդելների մշակման խթանմանը:

Հարցման արդյունքների հիման վրա պատրաստված զեկույցը, ինչպես նաև դրան առնչվող նյութերը կդառնան Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի կարևորագույն բաղադրիչը:

Որպես հաջորդ քայլ ՄԱԶԾ-ն հասարակության առավել լայն զանգվածներին հասանելի կդարձնի հարցման արդյունքները: Դրանք կքննարկվեն երիտասարդության ոլորտին առնչվող շահառուների և փորձագետների հետ, ինչից հետո բացահայտված խնդրահարույց ոլորտների վերաբերյալ կմշակվեն համապատասխան առաջարկություններ: Միաժամանակ ՄԱԶԾ-ն երիտասարդության ոլորտում կշարունակի իր հետևողական աշխատանքը և կստեղծի երիտասարդների՝ որոշումների կայացման և փաստերի հիման վրա քաղաքականությունների մշակման գործընթացներում ներգրավվածության հարթակ:

Երիտասարդների հիմնահարցերին վերաբերող համապետական հետազոտություն իրականացվել է նաև 2006 թվականին, որի տվյալների հիման վրա պատրաստվել է Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց: Այն անդրադարձել է երիտասարդությանն առնչվող այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են՝ երիտասարդական պետական քաղաքականության վերաբերյալ երիտասարդության իրազեկվածության չափը, երիտասարդների զբաղվածությունը, միգրացիոն տրամադրությունները և դրանց պատճառները, երիտասարդների առողջապահական խնդիրները, կրթությունը, արժեքային կողմնորոշումները և այլն¹: Ձեկույցի՝ Հայաստանի Հանրապետությունում երիտասարդության քաղաքականությանը վերաբերող բաժնում, այդ քաղաքականության սուբյեկտների, իրավական կարգավորման մեխանիզմների ֆինանսավորման աղբյուրների հարցերին զուգահեռ, շոշափվում է նաև երիտասարդության ուսումնասիրությունների թեման՝ որպես երիտասարդության քաղաքականության կարևորագույն տարր և չափորոշիչ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ «Երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007թթ. ռազմավարություն» փաստաթղթում նշվում է, որ «պարբերաբար պետք է ուսումնասիրել և գնահատել երիտասարդների վիճակը»²: Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի շրջանակում համապարփակ հետազոտություն իրականացվել է նաև 2011 թվականին³:

1 «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց», ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի միախորհրդակցություն, Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն, Երևան, 2007, էջ 17:

2 Նույն աղբյուրը, էջ 29:

3 «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց», Երևան, 2011:

1.1. Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել ՀՀ երիտասարդության ձգտումները և ակնկալիքները, նպատակները, արժեքները:

Հետազոտության նպատակին հասնելու համար կիրառված՝ տեղեկատվության հավաքման մեթոդները և գործիքները ներկայացված են Աղյուսակ 1.1-ում:

1.1. Տեղեկատվության հավաքման մեթոդները և գործիքները

Տեղեկատվության հավաքման մեթոդները	Տեղեկատվության հավաքման գործիքները
Քանակական (կիսա)ստանդարտացված անմիջական հարցազրույցներ 16-ից 30 տարեկան երիտասարդների հետ	<ul style="list-style-type: none"> (Կիսա)ստանդարտացված հարցաթերթ
Ֆոկուս խմբային (ՖԽ) քննարկումներ 16-ից 30 տարեկան երիտասարդների հետ	<ul style="list-style-type: none"> Ֆոկուս խմբի հարցաշար
Հարցազրույցներ փորձագիտական և առանցքային տեղեկատուների՝ ոլորտի անկախ փորձագետների, շահագրգիռ խմբերի ներկայացուցիչների (քաղաքականություն մշակողներ, իրականացնողներ, մոնիթորինգներ իրականացնողներ և այլն) հետ	<ul style="list-style-type: none"> Փորձագիտական հարցազրույցի հարցաշարեր Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների հարցաշարեր

1.1.1. Հետազոտության ընտրանքը

Քանակական հետազոտության ընտրանքը կառուցվել է բազմաստիճան ստրատիֆիկացված կլաստերային ընտրանքի սկզբունքների հիման վրա:

Թիրախային բնակչությունը Հայաստանի Հանրապետությունում բնակվող 16-ից 30 տարեկան երիտասարդներն են:

Ընտրանքի ծավալը՝ 1200 հարցված:

Ընտրանքի սխալը կազմում է 2,9%, վստահելիության մակարդակը՝ 95%:

Ընտրանքի *առաջին փուլում* կլաստերների դերում հանդես են եկել բնակավայրերը: Բնակավայրերի ստրատիֆիկացիայի հիմքում ընկած են ՀՀ տարածքային կառավարման վարչատարածքային միավորները (մարզեր), բնակավայրի տեսակը (քաղաքային/գյուղական) և դրա չափը⁴:

Ընտրանքային միավորների բաշխումն ըստ ստրատաների կատարվել է վերջնական ընտրանքային միավորների հավասար հավանականությամբ ներառման սկզբունքի հիման վրա:

4 Բնակավայրի չափն ընտրանքում ներկայացվել է հետևյալ գրադացիաներով՝ 1,000-10,000; 10,001-20,000; 20,001-50,000; 50,001- 100,000; 100,001-500,000, 500001-1.200.000 բնակչությամբ բնակավայրեր:

Հարցվողների բաշխումն ըստ մարզերի և քաղաքային/գյուղական բնակավայրերի իրականացվել է 2011թ. ՀՀ ԱՎԾ-ի կողմից տրամադրված տվյալների համամասնությունների հիման վրա: Աղյուսակ 1.2-ում ներկայացված է հարցազրույցների թիվն ըստ բնակավայրի տիպի:

1.2. Հարցազրույցների բաշխումն ըստ ստրատաների

Մարզ	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
Երևան	376	0	376
Արագածոտն	12	43	55
Արարատ	33	79	112
Արմավիր	37	74	111
Գեղարքունիք	30	64	94
Լոռի	61	44	105
Կոտայք	62	50	112
Շիրակ	64	46	110
Սյունիք	39	17	56
Վայոց ձոր	8	14	22
Տավուշ	19	28	47
Ընդամենը	741	459	1200

Յուրաքանչյուր ստրատայում կոնկրետ բնակավայրերն ընտրվել են պարզ հավանականային ընտրանքի մեթոդով:

Ընտրության երկրորդ փուլում ընտրվել են տնային տնտեսությունները: Դրանց ընտրությունը կատարվել է պատահական ձախակողմյան քայլի ընթացակարգով: Յուրաքանչյուր բնակավայրում ընտրանքին համամասնորեն հաշվարկվել է երթուղիների քանակ: Յուրաքանչյուր երթուղում տնային տնտեսությունների քանակը 5 է, յուրաքանչյուր հաջորդ տնային տնտեսության ընտրության քայլը՝ 3: Յուրաքանչյուր երթուղում հասցեների բազայից սխտեմատիկ հավանականության մեթոդով ընտրվել են սկզբնակետեր:

Երրորդ փուլում իրականացվել է տնային տնտեսությունում հարցվողի ընտրություն: Եթե տվյալ տնային տնտեսությունում 16-ից 30 տարեկան երիտասարդների թիվը եղել է 1-ից ավելի, ապա հարցվողն ընտրվել է «զալիք ծննդյան ամսաթվի» պատահական ընտրության մեթոդով:

Որակական հետազոտության, մասնավորապես ֆոկուս խմբերի մասնակիցների ընտրանքն իրականացվել է *տիպային ընտրանքի* սկզբունքների հիման վրա:

Ֆոկուս խմբերի քանակը 12 է: Յուրաքանչյուր ֆոկուսում մասնակիցների քանակը կազմել է միջինը 8-11 հոգի:

Ընտրանքային տիպերը ձևավորվել են հետևյալ չափանիշների հիման վրա.

- մասնակիցների տարիքային խումբը,
- բնակավայրի տիպը:

Ըստ տարիքի՝ մասնակիցները բաժանվել են հետևյալ տարիքային խմբերի. 16-ից 18, 19-ից 23, 24-ից 30: Տվյալ բաժանման նպատակահարմարությունը հիմնավորվում է հետևյալ գործոններով.

- Նշված տարիքային միջակայքերն արտացոլում են «կենսագրության փուլեր», այն է՝ դպրոցական, «ուսանողական և հետուսանողական-աշխատանքային», որոնց ընթացքում միմյանցից էականորեն տարբերվում են ձգտումները, պլանները, նպատակադրումներն ու արժեքները:
- 1 ֆոկլուս խմբում ներգրավվել են կենսագրության միևնույն փուլում գտնվող մասնակիցները՝ խմբի համասեռության, խմբային դինամիկայի և հաղորդակցության սահունությունն ապահովելու նպատակով:

Ըստ բնակավայրի տիպի՝ մասնակիցները բաժանվել են հետևյալ տիպերի. *երևանաբնակ, մարզային քաղաքներում բնակվող, գյուղաբնակ*: Ֆոկլուս խմբերի քանակը, ըստ յուրաքանչյուր տիպի, կազմել է 4-ական խումբ:

Վերոնշյալ 2 չափանիշների հատման տիրույթում ձևավորված տիպերի հիման վրա ֆոկլուս խմբերի քանակը բաշխվել է հետևյալ կերպ (Աղյուսակ 1.3).

1.3. Ֆոկլուս խմբերի բաշխումն ըստ հարցվածների տարիքային խմբերի և բնակավայրի

	Երևան	Մարզային քաղաքներ	Գյուղեր	Ընդամենը
16-ից 18 տ.	1	1	2	4
19-ից 23 տ.	1	2	1	4
24-ից 30 տ.	2	1	1	4
Ընդամենը	4	4	4	12

Ֆոկլուս խմբերի մասնակիցների ընտրության ժամանակ հաշվի են առնվել նաև հարցվողների *սեռը, կրթությունը, զբաղվածությունը*:

Մարզային քաղաքների ընտրության հիմքում ընկած հիմնական չափանիշներ են հանդիսացել *քաղաքի/գյուղի հեռավորությունը Երևանից, քաղաքի մեծությունը*:

Նշված չափանիշների ընտրությունը պայմանավորված է երիտասարդների կենսագործունեության կազմակերպման վրա դրանց ունեցած ենթադրվող ազդեցությամբ:

Քաղաքների՝ նշված չափանիշով ընտրությունն իրականացվել է հետևյալ քայլերով.

1. ԶԶ մարզերը խմբավորվել են՝ ըստ դրանցից յուրաքանչյուրում առկա քաղաքների՝ Երևանից ունեցած **միջին հեռավորության**: Չևավորվել են հետևյալ ենթախմբերը. Երևանից մինչև 50, 50-150, 150-200, 200 և ավելի կմ միջին հեռավորության վրա գտնվող քաղաքներ ունեցող մարզեր:

2. 1-ին քայլում ձևավորված խմբերում քաղաքների ընտրությունն իրականացվել է ըստ քաղաքի մեծության (բնակչության թվի), աշխարհագրական դիրքի (հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք) և ֆինանսական արդյունավետության չափանիշների:

Գյուղերի ընտրությունը իրականացվել է գյուղական բնակավայրերի խմբի «լավագույն» դեպքերի⁵ ընտրության սկզբունքով: Տվյալ պարագայում դիտարկվել են մարզկենտրոններից ոչ ավելի, քան 50 կմ հեռավորության վրա գտնվող գյուղեր:

Վերոնշյալ չափանիշների հիման վրա ձևավորված խմբերը, ինչպես նաև ընտրված քաղաքները և գյուղերը ներկայացված են Աղյուսակ 1.4-ում:

1.4. Քաղաքների և գյուղերի ընտրությունը

Տվյալ մարզի բոլոր քաղաքների միջին հեռավորությունը երևանից (կմ)	ՀՀ մարզեր	Ընտրված քաղաքը	Ընտրված գյուղը
20-50	Արարատ, Արմավիր, Արագածոտն, Կոտայք	Վաղարշապատ	Տանձուտ
50-150	Շիրակ, Գեղարքունիք, Վայոց ձոր	Գյումրի	Մեղրաշեն
150-200	Տավուշ, Լոռի	Իջևան	Խաշթառակ
200 և ավելի	Սյունիք	Գորիս	Խնձորեսկ

Ֆև-ի մասնակիցների հավաքագրումը իրականացվել է նախօրոք կազմված՝ ընտրող հարցաթերթի հիման վրա, որը պարունակում է թիրախային խմբերը բնորոշող առանցքային չափանիշները:

Ֆև-երը ձայնագրվել են, այնուհետև ձայնագրությունները սղագրվել են՝ հետագա վերլուծության նպատակով: Սղագրությունները ձայնագրությունների և սղագրված տեքստերի համեմատության միջոցով անցել են որակի ստուգման փուլ:

Հետազոտության շրջանակում իրականացվել է 15 **փորձագիտական և խորին հարցազրույց**՝ երիտասարդության արդի հիմնախնդիրները վեր հանելու և մեկնաբանելու նպատակով:

Հարցազրույցներ են անցկացվել երիտասարդության հիմնախնդիրների հետ առնչություն ունեցող հետևյալ շահագրգիռ կողմերի հետ.

- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն,

5 Գյուղական հատվածում ֆոկլոս խմբերի սահմանափակ քանակը (4) հնարավորություն չէր տա ներկայացուցչական կերպով ընդգրկել մարզկենտրոններից տարբեր հեռավորությունների վրա գտնվող գյուղեր և համեմատություններ անցկացնել դրանց միջև: Ըստ այդմ ֆոկլոս խմբերի արդյունքների վրա մարզկենտրոնից հեռավորության գործոնի ազդեցությունը չեզոքացնելու համար կիրառվել է մարզկենտրոնից հավասարաչափ հեռացված գյուղեր ընտրելու սկզբունքը:

- ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդ,
- երիտասարդության (այդ թվում՝ նաև ազգային փոքրամասնություն կազմող և հատուկ կարիքներ ունեցող) հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ներ, ասոցիացիաներ, վերլուծական կենտրոններ,
- երիտասարդության հիմնախնդիրներով զբաղվող միջազգային կազմակերպություններ,
- երիտասարդների ակտիվ նախաձեռնող խմբերի ներկայացուցիչներ,
- հատուկ կարիքներով երիտասարդների խմբերի ներկայացուցիչներ,
- մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

1.2. Հետազոտության հայեցակարգային հիմքերը

Հետազոտության հայեցակարգային հիմքերը պայմանավորված են հետազոտության առանցքային, այն է՝ «ծգտումներ» հասկացության սոցիոլոգիական չափման մոտեցմամբ: Այս հասկացության չափումը ենթադրում է դրա տարրերի դուրսբերում, ինչը հնարավոր է իրականացնել հասկացության գիտագործնական սահմանումների և կոնցեպտուալիզացիայի հիման վրա:

Հասարակական գիտություններին վերաբերող գրականությունում առկա են «ծգտումներ» հասկացության տարաբնույթ սահմանումներ:

Վեբստերի բառարանում «ծգտումը» սահմանվում է որպես «որևէ դրական բանի հասնելու մեծ ցանկություն»⁶: Այս սահմանումը շեշտադրում է՝

ա) «ծգտման»՝ իր բնույթով **ցանկություն** լինելը,

բ) ամրագրում է սոցիալապես ընդունելի **նպատակը**՝ որպես ցանկությունների օբյեկտ:

Հետազոտողներ Քուազլիան և Քոբբը «ծգտումը» սահմանում են որպես «ապագային միտված նպատակներ սահմանելու և դնելու ունակություն, որը պայմանավորված է այդ նպատակներին հասնելու ուղղությամբ աշխատելու՝ ներկայում ունեցած ներշնչանքով»⁷: Այս սահմանման մեջ շեշտադրվում են՝

ա) սոցիալական սուբյեկտի **ակտիվությունը**,

բ) **ներկայի և ապագայի** ընկալումների դերակատարումը նպատակներ դնելու գործում:

Սոցիալական գիտությունների բառարանում «ծգտումներ» հասկացությունը սահմանվում է որպես «**ստանդարտ**, որի հետ հարաբերվելիս անձն ունենում է **հաջողության կամ ծախողման** զգացում»⁸:

6 <http://www.merriam-webster.com/dictionary/aspiration>

7 Quaglia, R. J. and Casey C. D. (1996). Toward a theory of student aspirations. Journal of Research in Rural Education, 12, pp. 127-132.

8 A dictionary of social sciences published by Atlantic publishers and Distributors, 1996 http://books.google.am/books?id=EfdqVtOk7rMC&pg=PA21&lpg=PA21&dq=social+aspiration+dictionary&source=bl&ots=96d_a2MLT&sig=H7KvIT1wrXKKI2h3R2A0ZxCfll&hl=hy&sa=X&ei=0AZnT6W8O8HsOceOjIsI&ved=0CClQ6AEwAA#v=onepage&q&f=false

Որոշ գնահատականների համաձայն՝ «ձգտումներ» հասկացության ամենատարածված կոնցեպտուալիզացիան այն դիտարկում է որպես **«ցանկալի ես-ին»** համանման երևույթ, որը, ըստ էության, ապագայում հասնելու իդեալական նպատակ է⁹:

Այս հասկացության մյուս կոնցեպտուալիզացիան այն դիտարկում է որպես սոցիալական սուբյեկտի կողմից ապագայի արդյունքների հնարավոր այլընտրանքների իմաստավորում: Կենսափորձի ավելացմանը զուգահեռ՝ ձգտումների ցանկը սահմանափակվում է, ինչի արդյունքում անձը կենտրոնանում է մեկ «ապագա-ես»-ի կերպարի վրա¹⁰:

Գրականության մեջ լայնորեն կիրառվում են «ձգտումներ» հասկացությանը հարակից այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ սպասումները, հույսերը, երազանքները: Տարբեր հեղինակների կողմից շեշտադրվում է ձգտումների իդեալիստական կամ պրագմատիկ կողմը. վերջինս ենթադրում է կանխատեսելի «ռեալիստիկ» պլանների հետապնդում իդեալիստական նպատակադրումների փոխարեն¹¹:

Սոցիալական սուբյեկտի ձգտումները ձևավորվում են **սոցիալական համատեքստում**, այլ ոչ թե վակուումում: Սա նշանակում է, որ դրանց ձևավորման վրա իր սոցիալական համակարգերով էական ազդեցություն է ունենում հասարակությունը: Այս առումով ամհատներն ունեն ձգտումների «պատուհան», որի միջոցով դիտարկում են իրենց սոցիալական միջավայրում առկա հնարավորությունները¹²:

Գրականությունում «ձգտումներ» հասկացությունը շրջանառվում է այս կամ այն ոլորտի հետ առնչության համատեքստում: Սասնավորապես երիտասարդության ձգտումների ուսումնասիրություններում այդ հասկացությունը մեծամասամբ առնչվում է կրթությանը և զբաղվածության ոլորտին:

Համադրելով վերը ներկայացված մոտեցումները՝ սույն հետազոտության շրջանակում **«ձգտումները»** սահմանվել են **որպես անձի կողմից ապագայի նպատակադրումների ամբողջություն, որը հասարակության ենթահամակարգերի ազդեցության ներքո ձևավորվում է ներկա կենսափորձի հիման վրա:**

«Ձգտումներ» հասկացության չափման չափորոշիչների ուրվագծման համար հիմք են ընդունվել հետևյալ կանխադրույթները.

1. Երիտասարդների առօրյա կյանքն ընթանում է մի շարք **սոցիալական ինստիտուտներում** (ընտանիք, կրթություն, զբաղվածություն, ընկերներ/սոցիալական ցանցեր, ՋԼՄ-ներ, պետություն, քաղաքացիական հասարակություն, բանակ և այլն):
2. Նշված ինստիտուտներում ծավալվող գործունեությունը կարգավորվում է որոշակի արժեքներով, դիրքորոշումներով և նորմերով:

9 Messersmith E.E. & Schulenberg J.E. (2008). When can we expect the unexpected? Predicting educational attainment when it differs from previous expectations. *Journal of Social Issues*, 64(1), pp. 195-211.
10 Gottfredson L.S. (1981). Circumscription and compromise: A developmental theory of occupational aspirations. *Journal of Counseling Psychology*, 28(6), pp. 545-579.
11 Schaefer V. and Meece J. (2009). Facing an Uncertain Future: Aspirations and Achievement of Rural Youth. National.
12 Ray, D. (2006). Aspirations, poverty, and economic change. In A. V. Banerjee, R. Benabou, and D. Mookherjee (Eds.), *Understanding Poverty* (pp. 409-422). Oxford: Oxford University Press.

Այս հետազոտության համար ընտրվել են այն սոցիալական ինստիտուտները, որոնք առավել առաջնային են երիտասարդների առօրյա կյանքում: Ուսումնասիրված յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտում չափվում են.

- երիտասարդի *ներկայիս* պրակտիկական սոցիալական ինստիտուտում,
- տվյալ ինստիտուտի հետ կապված *ապագա* պլանները, նպատակները,
- ձգտումները և դրանց հասնելու խոչընդոտների ընկալումները,
- տվյալ ինստիտուտի գործառնության գնահատականները,
- տվյալ ինստիտուտի գործառնությունը կանոնակարգող արժեքների ընկալումները և գնահատականները¹³:

Վերոնշյալ տրամաբանությամբ էլ առաջադրվել են **հետազոտական խնդիրները**, և կառուցվել են **հարցաթերթի բաժինները**:

Չարկ ենք համարում նշել, որ հետազոտության գործիքներում վերը նշված հիմնահարցերն արժարժված են տարբեր խորությամբ, ինչը պայմանավորված է տեղեկատվության հավաքման մեթոդների (հարցազրույցների) արդյունավետ տևողությունը հաշվի առնելով: Այս կամ այն թեմայի անհրաժեշտ խորությունը սահմանվել է մեթոդաբանությունը մշակած մասնագետների կողմից գնահատված և ՄԱԶԾ մասնագետների կողմից առաջադրված գերակայություններով:

1.3. Չափվելության կառուցվածքը

Չափվելությունը բաղկացած է 9 բաժիններից և 1 հավելվածից: 2-րդ բաժինն արտացոլում է հետազոտության հիմնական արդյունքները: 3-7-րդ բաժիններում ներկայացվում են առանցքային սոցիալական ինստիտուտներում (ընտանիք, կրթություն, զբաղվածություն, պետություն, ժամանց) երիտասարդների ներկայիս վարքագիծը, ապագայի նպատակները և արժեքային դիրքորոշումները:

8-րդ բաժինն անդրադառնում է երիտասարդների սոցիալական տրամադրություններին: 9-րդ բաժնում ներկայացվում են երիտասարդների ժամանցին վերաբերող տվյալները:

13 Սոցիալական արժեքների ցանկը բավականին մեծ է և բազմազան: Չասկանալի է, որ տվյալ հետազոտության շրջանակում հնարավոր չէ դիտարկել յուրաքանչյուր ինստիտուտում առկա և արդիական բոլոր արժեքները և դրանց նկատմամբ դիրքորոշումները: Ուստի հարցաթերթում ներառվել են ընդամենը մի քանի արժեքներ, որոնց ուսումնասիրությունն առավել արդիական է թվացել: Այս կամ այն արժեքի ընտրությունը մեծապես կախված է մեթոդաբանության մշակման գործընթացում ներգրավված կողմերի գերակայություններից:



ԲԱԺԻՆ 2.

Նեազոսության հիմնական արդյունքները

Այս բաժնում ներկայացված են երիտասարդների ձգտումներ հետազոտության հիմնական արդյունքները՝ ըստ նրանց կյանքում էական մշանակություն ունեցող սոցիալական տարբեր ինստիտուտների:

Երիտասարդներն ընտանիքում

Հետազոտության արդյունքներից պարզ է դառնում, որ հայաստանյան երիտասարդների շրջանում նկատվում են ընտանեկան ավանդական հարաբերությունների վերանայման *որոշակի միտումներ*: Մասնավորապես.

- Զգալի տոկոս է կազմում այն երիտասարդների թիվը (7,6%), ովքեր, առանց որևէ տեղ *ամուսնությունը գրանցելու*, համատեղ կյանք են վարում: Արժեքային կողմնորոշումների մակարդակում ամուսնության նմանօրինակ ձևաչափի ընդունելի լինելն արձանագրվել է երիտասարդների 46,3%-ի շրջանում. ընդ որում՝ այս տոկոսը ներառում է այն երիտասարդներին, ովքեր առանց պաշտոնական և եկեղեցական գրանցման համատեղ կյանք են վարում:
- Երիտասարդների գերակշիռ մասը՝ 79,4%-ը, համամիտ է, որ ընտանիքում որոշումներ կայացնելիս կինը և ամուսինը պետք է հավասար ծայնի իրավունք ունենան (հարցման բովանդակության հետ համաձայնության միջին գնահատականը կազմում է 3,27): Երիտասարդներն ընդհանուր առմամբ համամիտ են նաև, որ ընտանիքում տղամարդը և կինը գործնական առաջընթացի հավասար իրավունք պետք է ունենան:

Ընդհանուր միտումները ցույց են տալիս, որ

ա) արական սեռի հարցվածների շրջանում համեմատաբար ավելի շատ են տարածված գենդերային դերերի բաշխման պատրիարխալ ընկալումները: Մյուս կողմից կանայք ավելի հակվում են դեպի իրավահավասարություն, բ) գյուղաբնակ երիտասարդները, թեև ընտանեկան որոշումների կայացման գործընթացում կողմնակից են սեռերի հավասարությանը, այնուամենայնիվ աշխատանքային հնարավորությունների և ընտանիքի ֆինանսական ապահովման հարցերում շարունակում են համեմատաբար ավելի ավանդական պատկերացումներ ունենալ:

- Երիտասարդների 16,4%-ը այս կամ այն չափով համաձայնում է երեխաների բացակայության դեպքում ընտանիքը լիարժեք համարելու մտքին:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդներն աղջկա ամուսնության համար նախընտրելի միջին տարիք են համարում 22,3 տարեկանը, իսկ տղաների համար՝ 25,7: Միևնույն ժամանակ, համաձայն ԱՎԾ-ի տվյալների, 2010թ. ամուսնացած աղջիկների միջին տարիքը կազմել է 25,2, տղաներինը՝ 29,3: Ցանկալի և փաստացի ամուսնության տարիքի միջև այսպիսի տարբերությունները կարող են պայմանավորված լինել ընտանիք կազմելու ճանապարհին ընկած խոչընդոտների ընկալումներով: Ըստ հետազոտության արդյունքների՝ ընտանիք կազմելու ճանապարհին առկա ամենամշանակալի *խոչընդոտներ են* համարվում զբաղվածության հետ կապված¹⁴ (68,1%) և բնակարանային խնդիրները (24,8%):

Երիտասարդների պատասխանները վկայում են, որ նրանց մեծամասնությունը գերադասում է առկա խոչընդոտների հաղթահարման պրոակտիվ, նախաձեռնողական ռազմավարությունը. նշված խոչընդոտների հաղթահարման ամենարդյունավետ տարբերակներ են համարվել զբաղվածության ապահովման միջոցով (78,2%) և պետական աջակցության այս կամ այն ձևի կիրառմամբ խնդրի լուծման մեխանիզմները (11,8%):

14 Աշխատանքի բացակայությունը, դրա անկայունությունը և ցածր աշխատավարձը:

Ուսումնասիրված երիտասարդների շրջանում ամուսնալուծվածների թիվը կազմում է 1,4%: Երիտասարդները մեծամասամբ ամուսնալուծությունն անընդունելի են համարում: Ընդ որում՝ սկզբունքային նշանակություն ունի ընտանիքում երեխաների առկայության գործոնը: Եթե երեխաներ չունենալու կամ անհարթելի տարածայնություններ ունենալու պարագայում զույգի ամուսնալուծության փաստի նկատմամբ հանդուրժողականությունը միջինում կազմում է 2,47 առավելագույն 4-ից (դատողության հետ այս կամ այն չափով համաձայնել է հարցվածների 50,4%-ը), ապա երեխաների առկայության դեպքում այն 1,65 է (դատողության հետ այս կամ այն չափով համաձայնել է հարցվածների 18%-ը):

Երիտասարդները կրթության ինստիտուտում

Հայաստանյան երիտասարդների զգալի մասն ունի մասնագիտական կրթություն ստանալու ձգտումներ: Միաժամանակ երիտասարդների՝ համեմատաբար ավագ տարիքային խմբում (24-ից 30 տարեկան) առաջիկա 3 տարվա կտրվածքով կրթության հետ կապված ձգտումներ ունեցողները փոքրամասնություն են կազմում (26,9%): Փաստորեն 24 տարեկանից հետո երիտասարդներն իրենց կրթական զարգացումը մեծ մասամբ իրականացված են համարում: Այսինքն՝ Բոլոնիայի գործընթացի առաջնայնություններից մեկը՝ ամբողջ կյանքի ընթացքում սովորելը (life-long learning), տվյալ պահի դրությամբ այնքան էլ պահանջված չէ երիտասարդների շրջանում:

Հարցված երիտասարդների պնդմամբ՝ իրենց համար *ուսումնական հաստատության ընտրության* շարժառիթ են հանդիսացել մեծամասամբ «ռացիոնալ» գործոնները: Ընդ որում՝ նկատվում է ռացիոնալության 2 տիպի դրսևորում. ա) կողմնորոշվածություն դեպի կրթության բովանդակությունը, բ) ուսումնառության գործընթացը դյուրին դարձնելու ձգտմամբ պայմանավորված ռացիոնալություն:

Մյուս կողմից *մասնագիտության ընտրության* հարցում գերակա շարժառիթը զգացմունքային երանգավորում ունի. հարցվածների 47,9%-ի պնդմամբ՝ իրենք իրենց մասնագիտությունն ընտրել են, քանի որ այն իրենց «դուր է գալիս», «հետաքրքիր է», «երազել են այդ մասնագիտությունն ունենալու մասին»¹⁵:

Կրթությունը դիտարկվում է որպես ապագայում հաջողությունների հասնելու հիմնական միջոց: Դրան զուգահեռ՝ կրթություն ստանալուց հետո աշխատանք փնտրելու փորձառություն (մեծամասամբ՝ բացասական) ունեցողների շրջանում նկատվում է կրթության արժեքի անկման միտում:

Երիտասարդների զգալի մասը քննադատորեն է վերաբերում հայաստանյան կրթական հաստատություններում ներկայումս առկա որակին և ցանկանում է փոփոխություններ տեսնել ուսումնական գործընթացի թե՛ բովանդակության մեջ, թե՛ նյութատեխնիկական հագեցվածության գործում, թե՛ ուսումնական մթնոլորտում:

15 Մասնագիտությունների զգացմունքային մախընտրության զգալի տոկոսը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքը. սոցիալականացման ընթացքում դեռահասների կողմից յուրացվում են (ինտերնալացվում են) մասնագիտությունների հեղինակության և պահանջվածության հասարակական պատկերացումները՝ դառնալով անձի ընկալումները և մախընտրությունները կամիտորոշող (հաճախ՝ չգիտակցված) գործոններ:

Երիտասարդների զբաղվածությունը

Զբաղվածությունը հայաստանյան ներկայիս երիտասարդության ամենաարդիական հիմնախնդիրն է, որով էլ մեծապես պայմանավորված են նրանց ձգտումները: Ընդ որում՝ երիտասարդների կողմից մատնանշվում են ոչ միայն աշխատատեղերի բացակայությունը որպես գերակա հիմնախնդիր, այլև աշխատաշուկայում առկա այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ոչ ֆորմալ կապերի էական դերը, աշխատողների իրավունքների պաշտպանվածության մակարդակը:

Երիտասարդների զբաղվածության ձգտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջիկա 3 տարիներին նրանց 10,5%-ը սեփական գործը հիմնելու ծրագրեր ունի, 9,3%-ը մտածում է ցանկացած, իսկ 7,6%-ը՝ արտերկրում մասնագիտական աշխատանք գտնելու մասին, 2,6%-ն էլ արտերկրում բիզնես հիմնելու հավակնություններ ունի: Հարցվածների 30,1%-ը նշել է, որ աշխատանքի հետ կապված ծրագրեր չունի¹⁶: Ընդ որում՝ հարցված երիտասարդների 73,3%-ը ներկայումս չի զբաղվում եկամուտ ապահովող կամ կամավորական գործունեությամբ:

Աշխատանք չունեցողների մեծամասնությունը (62,9%-ը) նշել է, որ ներկայումս աշխատանք չի փնտրում: Վերջիններին շրջանում գերակշռում են իզական սեռի, ինչպես նաև 16-ից 18 տարիքային խմբի երիտասարդները: Ներկայումս աշխատանք ունեցողների և միևնույն ժամանակ աշխատանք փնտրողների տոկոսը 35,2 է:

Աշխատանք փնտրելու համար ամենատարածված վարքային մարտավարությունը ծանոթներին դիմելն է. աշխատանք փնտրող երիտասարդների 67%-ը ներկայումս փորձում է աշխատանք գտնել հենց այդ տարբերակով: Տարածվածության առումով այդ տարբերակին հաջորդում է թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններին հետևելը՝ ըստ նպատակահարմարության դրանց արձագանքելով. այս պրակտիկան կիրառում է հարցվածների 45%-ը:

Հայաստանում աշխատանք գտնելու ճանապարհին ընկած խոչընդոտների ընկալումների վերլուծությունը ցույց է տալիս, որ երիտասարդներն աշխատանք գտնելու ճանապարհին առկա ամենահիմնական խոչընդոտներ են համարում բավարար քանակությամբ աշխատատեղերի բացակայությունը (61,4%) և գործատուների կողմից իրենց ծանոթներին աշխատանքի ընդունելու իրողությունը (52,6%):

Զբաղվածության խնդրի լուծման սահմանափակ հնարավորությունների ընկալումը երիտասարդների զգալի մասի շրջանում միգրացիոն մտադրություններ է ձևավորում:

Երիտասարդների միգրացիան

Երիտասարդների միգրացիոն ձգտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարցվածների գերակշիռ մասը (78,5%) հնարավորության առկայության դեպքում կցանկանար այս կամ այն նպատակով (այդ թվում՝ հանգստանալու) արտերկիր մեկնել: Ընդ որում՝ ներկայումս աշխատող և չաշխատող, տարբեր կրթական մակարդակ և ֆինանսական ապահովվածություն ունեցող երիտասարդների շրջանում Հայաստանից դուրս մեկնելու պատրաստակամության տոկոսը գրեթե չի տարբերվում:

¹⁶ Այս երիտասարդների շարքում գերակշռում են իզական սեռի հարցվածները, ովքեր տվյալ պատասխանը նշածների 75%-ն են կազմում:

Երիտասարդների 41,8%-ը նշել է, որ առաջիկա 3 տարիներին արտերկիր մեկնելու պլաններ ունի:

Հայաստանից մեկնելու գերակա նպատակն արտերկրում աշխատելն է. հարցված երիտասարդների 44%-ը ցանկանում է Հայաստանից դուրս մեկնել հենց այդ նպատակով, իսկ ընդհանրապես մեկնել ցանկացող երիտասարդների այդ տոկոսը (աշխատելու) 56,5 է: Երիտասարդների շրջանում տարածված է այն ընկալումը, թե արտերկրում աշխատանք գտնելու հնարավորություններն ավելի մեծ են:

Ընդհանուր առմամբ պարզ է դառնում, որ երիտասարդների միգրացիոն մտադրությունները կրում են հարկադրված բնույթ: Այս հանգամանքը պայմանավորված է Հայաստանում երիտասարդների կենսական պահանջների բավարարման հնարավորությունների սահմանափակության ընկալմամբ:

Երիտասարդների քաղաքացիական մասնակցությունը

Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երիտասարդների մասնակցության բավականին ցածր ցուցանիշներ են արձանագրվել:

Երիտասարդներն *անդամությամբ* համեմատաբար բարձր ցուցանիշ են գրանցում քաղաքական կուսակցություններում. ընտրանքում այդպիսի երիտասարդները կազմել են 9,1%: Հարցված երիտասարդների 6,6%-ը նշել է, որ ներգրավված է ուսխորհուրդների աշխատանքներում, 5,7%-ն էլ՝ որպես կամավոր, ներգրավված է հասարակական կազմակերպություններում:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում առկա է, այսպես կոչված, «*պասիվ անդամությամբ*» երևույթը, այսինքն՝ անձը պաշտոնապես գրանցված է այս կամ այն կառույցում, սակայն այդ կառույցի պաշտոնական և ոչ պաշտոնական միջոցառումներին չի մասնակցում:

Երիտասարդների գերակշիռ մասը ներկայումս չի ցանկանում ներգրավվել քաղաքական կուսակցությունների, ՏԻՄ-երի, ՀԿ-ների, քաղաքացիական նախաձեռնող խմբերի, ներբուհական/ ներդպրոցական կառույցների աշխատանքներում: Նշված կառույցներում ներգրավվել չցանկանալու ամենատարածված հիմնավորումներն են «հետաքրքիր չլինելը», «ին ներգրավվածությունը ոչինչ չի փոխի» կամխադրույթը, ինչպես նաև ժամանակի սղությունը: Տվյալ կառույցին չվստահելը՝ որպես չմասնակցելու պատճառ, առավել հաճախ նշվել է քաղաքական կուսակցությունների պարագայում (12,5%):

Երիտասարդների քաղաքացիական մասնակցության ցածր ցուցանիշները հիմնականում կարելի է բացատրել սեփական խնդիրների լուծման վրա կենտրոնացվածությամբ, ինչպես նաև մասնակցության արդյունքների նկատմամբ ունեցած թերահավատությամբ:

Երիտասարդների ժամանցը

Հայաստանյան երիտասարդների *առօրյա ժամանցի* (ամեն օր և շաբաթը 1-2 անգամ հաճախականությամբ) ամենատարածված ձևերից են ինտերնետային սոցիալական ցանցերում գտնվելը, զբոսնելը և ընկերների տուն հաճախելը:

Մարզաբնակ, հատկապես գյուղաբնակ երիտասարդների համար այս ոլորտի ամենաարդիա-

կան խնդիրները ժամանցի կազմակերպման սահմանափակ հնարավորություններն են, ինչի պատճառը նշված բնակավայրերում ժամանցային ենթակառուցվածքների բացակայությունը կամ զարգացած չլինելն է:

Երիտասարդների պլանները և սոցիալական տրամադրությունները

Ներկայումս հայաստանյան 16-ից 30 տարեկան երիտասարդների **ամենաառաջնային պլանները** կապված են աշխատանքի և կրթության հետ:

Երիտասարդներն իրենց առջև ծառայած **ամենաարդիական հիմնախնդիրներ են** համարում գործազրկությունը (81,5%), ցածր աշխատավարձերը (47,4%) և բնակարանային խնդիրները (35,8%):

Հայաստանյան երիտասարդների գերակշիռ մասն առաջիկա 5 տարիների կտրվածքով լավատեսորեն է գնահատում իր ապագան. կանխատեսումների միջին գնահատականը կազմել է 4,12՝ առավելագույն 5-ից (երիտասարդների 50,7%-ը գտնում է, որ իր կյանքն էականորեն կբարելավվի, իսկ 31,4%-ը կարծում է, որ որոշ չափով կբարելավվի):

Սեփական ապագայի գնահատականներին զուգահեռ՝ դիտարկվել են նաև երիտասարդների՝ երկրի մի շարք ոլորտների զարգացումներին վերաբերող գնահատականները: Մոտակա 5 տարիներին երիտասարդներն էական փոփոխություններ չեն կանխատեսում հատկապես երկրի սոցիալ-տնտեսական պայմաններում և արդարադատության համակարգում. այս 2 ոլորտների կանխատեսման միջին գնահատականներն ավելի մոտ են սանդղակի՝ «ամեն ինչ կմնանույնը» կետին (համապատասխանաբար կազմում են 3,55 և 3,3):

Անձնական և հասարակական մի շարք ոլորտների ապագայի կանխատեսումներում առկա զգալի տարբերությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ երիտասարդները սեփական ապագան դիտարկում են երկրի ապագայից անկախ: Այսինքն՝ երիտասարդներն իրենց ապագան բարելավելու համար հավակած են ապավինել սեփական նախաձեռնություններին:

ԲԱԺԻՆ 3.

Երիտասարդներն ընթացահիմուն



3.1. Երիտասարդների ընտանեկան ներկայիս դրությունը

Ընտանիքը հայաստանյան հասարակության ամդամների առօրեական¹⁷ կենսագործունեության կազմակերպման առանցքային սոցիալական ինստիտուտն է. երիտասարդներն այս առումով բացառություն չեն կազմում:

Ինչպես այս հաշվետվության բոլոր բաժիններում, այնպես էլ տվյալ ինստիտուտին վերաբերող բաժնում կներկայացնենք երիտասարդների ներկայիս սոցիալական պրակտիկաներն¹⁸ ընտանիքում և այս ինստիտուտի գործունեությունը կարգավորող արժեքների ընկալումները:

Հարցված երիտասարդների բաշխումը, ըստ ամուսնական կարգավիճակի, ներկայացված է Աղյուսակ 3.1-ում:

3.1. «Նշե՞ք, խնդրեմ, Ձեր ամուսնական կարգավիճակը» հարցի պատասխանները

Ամուսնական կարգավիճակը	Ընդամենը	16-18 տարեկան	19-23 տարեկան	24-30 տարեկան
Չամուսնացած	60,1%	97,1%	75,7%	28,8%
Ամուսնացած (միայն ՋԱԳՄ ¹⁹ -ով)	12,5%	0,4%	4,0%	25,9%
Ամուսնացած (և՛ եկեղեցով, և՛ ՋԱԳՄ-ով)	12,5%	0,0%	7,7%	22,7%
Համատեղ ենք ապրում՝ առանց գրանցվելու	7,6%	2,1%	6,6%	11,0%
Ամուսնացած (միայն եկեղեցով)	5,1%	0,4%	4,0%	8,4%
Ամուսնալուծված	1,4%	0,0%	1,5%	2,0%
Այրի/ամուրի	0,5%	0,0%	0,0%	1,2%
ՋԱԳՄ-ով ամուսնացած ենք, բայց միասին չենք ապրում	0,2%	0,0%	0,4%	0,0%
Ընդամենը	100%	100%	100%	100%

Ինչպես երևում է Աղյուսակ 3.1-ից, 16-ից 30 տարեկան երիտասարդների շրջանում գերակշռում են չամուսնացածները (60,1%), ընդ որում՝ վերջիններս գերակայում են մինչև 23 տարեկան երիտասարդների շրջանում:

Հայաստանում ամուսնության ինստիտուտի փոխակերպման միտումների ուրվագծման տե-

17 Առօրեականությունը հասկացությունը տվյալ դեպքում կիրառվում է ֆենոմենոլոգիական սոցիոլոգիայի շրջանակում գործածվող իմաստով, այսինքն՝ որպես ինտերսուբյեկտիվ իրականություն, որը մարդկային կեցության ամբողջականության ռեպրեզենտացիայի տեսանկյունից մշանակալի է սոցիալական դերակատարների համար և «դեն առ դեն» ինտերպրետացիայի և տիպականացման գործընթացների միջոցով պարբերաբար վերարտադրվում է նրանց պրակտիկաներում:

18 Սոցիալական պրակտիկան տվյալ դեպքում ընկալվում է որպես սոցիալական սուբյեկտի կողմից իրականացվող գործունեություն, որը միտված է որոշակի նպատակների հասնելուն:

19 Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին (ՔՎԱԳՄ):

սանկյունից ուշագրավ է ամուսնության ֆորմալացման փաստացի ձևերի տոկոսային բաշխման դիտարկումը: Այսպես՝ ամուսնացած հարցվածների 33,2%-ն է (ընդհանուր հարցվածների 12,5%-ը) ամուսնությունը գրանցել և՛ եկեղեցում, և՛ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում (ՔԿԱԳԱ), 45,8 տոկոսն էլ գրանցվել է կամ միայն ՔԿԱԳԱ-ում (33,2%), կամ միայն եկեղեցում (13,6%): Ամուսնացած հարցվածների 20%-ը (ընդհանուր հարցվածների 7,6%-ը) նշել է, որ ամուսնու/կնոջ հետ վարում է համատեղ կյանք՝ առանց որևէ տեղ ամուսնությունը գրանցելու: Ամուսնական հարաբերությունների ֆորմալացման բացակայությունը համեմատաբար մոր երևույթ է հայաստանյան իրականությունում. այն կարող է վկայել երիտասարդների որոշ հատվածի շրջանում ամուսնական հարաբերությունների կարգավորման՝ ավանդակաճորեն ընդունված ձևերի վերաիմաստավորման մասին: Եթե վարքային մակարդակում առանց հարաբերությունների ֆորմալացման համատեղ ապրելը դրսևորվում էր ամուսնացած երիտասարդների 20%-ի շրջանում, ապա արժեքային կողմնորոշումների մակարդակում ամուսնության այդպիսի ձևաչափի ընդունելի լինելն արժանագրվել է երիտասարդների 46,3%-ի շրջանում: Ընդ որում՝ այդ տոկոսը ներառում է նաև այն երիտասարդներին, ովքեր համատեղ կյանք են վարում առանց պաշտոնական և եկեղեցական գրանցման:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս նշված երևույթին վերաբերող դատողության հետ երիտասարդների համաձայնության աստիճանը (Աղյուսակ 3.2):

3.2. «Ասացե՛ք, խնդրե՛մ, որքանո՞վ եք համաձայն²⁰ հետևյալ դատողության հետ. «Քաղաքացիական ամուսնությունը (համատեղ ապրելը՝ առանց ՋԱԳԱ-ում գրանցվելու կամ եկեղեցով ամուսնանալու) ինձ համար ամուսնության ընդունելի տարբերակ է»»

Ընդհանրապես համաձայն չեմ	37,5%
Ավելի շուտ համաձայն չեմ	15,7%
Ավելի շուտ համաձայն եմ	20,8%
Լիովին համաձայն եմ	25,5%
Դժվարանում եմ պատասխանել	0,6%

Պետք է նկատել, որ հարցվածների՝ քաղաքացիական ամուսնության նկատմամբ ունեցած դիրքորոշումները կապված չեն նրանց սեռի հետ²¹: Երիտասարդների՝ ամուսնության այս ձևաչափի վերաբերյալ ունեցած դիրքորոշման և նրանց տարիքի միջև վիճակագրորեն նշանակալի որոշ կապ է նկատվում.²² այն է՝ որքան հարցվածների տարիքը մոտենում է 30-ին, այնքան մեծանում է քաղաքացիական ամուսնության ընդունելի լինելու կողմնորոշվածությունը:

20 Համաձայնությունը չափվել է 1-4 բալով, որտեղ «1»-ը նշանակում է, որ «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն եմ»:

21 Այս 2 փոփոխականների միջև կապի գործակիցը 0,067 է և նշանակալի չէ:


22 2 փոփոխականների միջև կապի գործակիցը 0,08 է և վիճակագրորեն նշանակալի:

Ամուսնության ձևերի վերաբերյալ այլ աղբյուրներում առկա տեղեկությունների համաձայն՝ 2006 թվականի դրությամբ, առանց ամուսնությունը զրանցելու, համատեղ կյանք վարող զույգերի թիվը հանրապետությունում կազմում էր 0,4%²³: Այս ցուցանիշը «Երիտասարդների ձգտումների հետազոտության» շրջանակում ստացված ցուցանիշի հետ համեմատելը մեթոդաբանորեն հիմնավորված չի կարելի համարել, քանի որ հետազոտությունների գլխավոր համախմբությունները տարբեր են եղել:

Հարցված երիտասարդների շրջանում *ամուսնալուծվածների թիվը* կազմում է 1,4%:

Հարցված երիտասարդները ներկայումս մեծամասամբ ապրում են 2-4 (41,5%) և 5-6 (43,0%) անձերից բաղկացած ընտանիքներում (Չծապատկեր 3.1): Ընտանիքի անդամների միջին թիվը կազմում է 4,9:

3.1. Երիտասարդների ընտանիքների անդամների թվաքանակը



Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի տվյալների՝ մինչև 1 տարի ամուսնացածների շրջանում ամուսնալուծությունների թիվը 2010թ. կազմել է 3%, 1-ից 4 տարի ամուսնացածների շրջանում՝ 21%, 5-ից 9 տարի ամուսնացածների շրջանում՝ 17%:

Ուսումնասիրված երիտասարդների ընտանիքների մեծությունից բացի՝ հետաքրքիր է դիտարկել նաև նրանց ընտանիքների կառուցվածքը, տիպը: Ըստ հետազոտության արդյունքների՝ երիտասարդների 8,1%-ն ապրում է սեփական նուկլեար ընտանիքում²⁴, 36,8-ը՝ ծնողների նուկլեար ընտանիքում:

Տարբեր բնակավայրերում բնակվող երիտասարդների ընտանիքների կառուցվածքների միջև նկատվում են վիճակագորեն նշանակալի տարբերություններ. սեփական նուկլեար ընտանիքները գերակշռում են քաղաքային բնակավայրերում:

23 Այս տվյալը ներկայացված է 2006թ. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից ֆինանսավորված և ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված «Ընտանիքի հետազոտություն» ուսումնասիրության հաշվետվությունում: Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ 2500 տնային տնտեսությունների շրջանում: Տե՛ս՝ “Family Survey” implemented by Ministry of Labor and Social Affairs of RA National Statistical Service of RA, funded by UNFPA, Yerevan, 2006.

24 Նուկլեար է կոչվում ամուսնական զույգից և նրանց երեխաներից բաղկացած, 2 սերունդ ունեցող ընտանիքը:

Գյուղական բնակավայրերում մյուս կողմից գերակշռում են ընդլայնված ընտանիքի²⁵ տարբեր դրսևորումները. մասնավորապես՝ սեփական ընդլայնված ընտանիքը (այսինքն՝ երիտասարդ զույգը և զույգերից մեկի ծնողները մեկ ընտանիք են), ծնողների ընդլայնված ընտանիքը (այսինքն՝ ընտանիքում երիտասարդն է, նրա ծնողներն են և ծնողների ծնողները), ինչպես նաև ոչ ավանդական ընդլայնված ընտանիքները, որոնք ներառում են այլ ազգականների (օրինակ՝ տեգր, տալ, մորաքույր, հորաքույր և այլն) (ընտանիքի կազմի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են Հավելված 3-ում՝ Աղյուսակ 3.9-ում):

3.2. Ընտանիքի կազմակերպումը, ընտանիք կազմելու ճանապարհին ընկած խոչընդոտների և դրանց հաղթահարման մեխանիզմների ընկալումները

Ամուսնության տարիքի աճի համաշխարհային միտումների ներքո հետաքրքիր է ուսումնասիրել հայաստանյան երիտասարդների՝ ամուսնության ամենամախընտրելի տարիքի վերաբերյալ ունեցած ընկալումները:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ աղջկա ամուսնության համար մախընտրելի միջին տարիքը 22,3 է, իսկ տղաների համար՝ 25,7:

Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի տվյալների՝ ՀՀ-ում՝

- 2008թ. ամուսնացած աղջիկների միջին տարիքը կազմել է 24,2, տղաներինը՝ 29,2,
- 2009թ. ամուսնացած աղջիկների միջին տարիքը կազմել է 24,9, տղաներինը՝ 29,0,
- 2010թ. ամուսնացած աղջիկների միջին տարիքը կազմել է 25,2, տղաներինը՝ 29,3:

2008 թվականի դրությամբ ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում գրանցվել են ամուսնության միջին տարիքի հետևյալ ցուցանիշները²⁶.

Վրաստան. աղջիկներ՝ 25.1, տղաներ՝ 28,8,

Բելառուս. աղջիկներ՝ 23.9, տղաներ՝ 26.0,

Մոլդովա. աղջիկներ՝ 23, տղաներ՝ 25,8,

Բուլղարիա. աղջիկներ՝ 26.1, տղաներ՝ 29.3 ,

Ռումինիա. աղջիկներ՝ 27,5, տղաներ՝ 30,9,

Լատվիա. աղջիկներ՝ 26.7, տղաներ՝ 28,8:


25 Ընդլայնված է կոչվում 2-ից ավելի սերունդ ունեցող ընտանիքը. հայաստանյան իրականությունում ընդլայնված ընտանիքի առավել տարածված մոդելը ամուսնական զույգից, նրանց երեխաներից, ամուսիններից մեկի ծնողներից բաղկացած ընտանիքն է:

26 http://w3.unecp.org/pxweb/Dialog/varval.asp?ma=052_GEFHAge1stMarige_r&ti=Mean+Age+at+First+Marriage+by+Sex%2C+Country+and+Year&path=../DATABASE/Stat/30-GE/02-Families_households/&lang=1.


Գծապատկեր 3.2-ից երևում է, որ աղջկա համար ամուսնության ամենամախընտրելի տարիք է համարվում 21-23 տարեկանը, իսկ տղայի համար՝ 24-ից բարձր տարիքը: Ընդ որում՝ արական սեռի հարցվածներն առավել հակված են աղջիկներին ամուսնության ցածր տարիք վերագրելուն, քան աղջիկները՝ իրենք իրենց: Պետք է նկատել, որ իգական սեռի հարցվածները թե՛ իրենց, թե՛ տղաների համար ընդհանուր առմամբ կողմնակից են 24-ից բարձր տարիքում ամուսնությանը:

☑ 3.2 Ամուսնության նախընտրելի տարիքը աղջկա և տղայի համար

Ամուսնության նախընտրելի տարիքն աղջկա համար



Ամուսնության նախընտրելի տարիքը տղայի համար




Որոշակի տարբերություններ են նկատվում կրթական տարբեր մակարդակ ունեցող հարցվածների նախընտրություններում: Որքան բարձր է հարցվածի կրթական մակարդակը, այնքան ավելի բարձր է ամուսնության նրա կողմից նշված միջին տարիքը²⁷ (տես Չավելված 3, Աղյուսակ 3.5):

Կանխատեսելի կապ է նկատվում հարցվածների բնակավայրի և ամուսնության նախընտրելի տարիքի գնահատականների միջև. մարզային երիտասարդության համար ամուսնության նախընտրելի տարիքն ավելի ցածր է, քան նրանց երևանյան սերնդակիցների պարագայում (Գծապատկեր 3.3):

27 Աղջիկների ամուսնության տարիքի գնահատականի և հարցվածի կրթական մակարդակի միջև կոռելյացիան կազմում է 0,314: Տղաների ամուսնության տարիքի գնահատականի և հարցվածի կրթական մակարդակի միջև կոռելյացիան կազմում է 0,274:

3.3. Անուանության նախընտրելի տարիքն ըստ հարցվածների բնակավայրի



Ընտանիք կազմելու նախընտրելի տարիքի գնահատականների վրա էական ազդեցություն կարող է ունենալ ընտանիք կազմելու ճանապարհին ընկած **խոչընդոտների ընկալումը**: Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, առաջին հերթին ամենանշանակալի խոչընդոտներ են համարվում աշխատանքի բացակայությունը (57%) և բնակարանային խնդիրները (24,8%): Աղյուսակ 3.3-ում նշված մյուս խոչընդոտները նույնպես կապված են եկամտի աղբյուրների և դրանց չափի հետ:

3.3. Երիտասարդների՝ ընտանիք կազմելու ճանապարհին ընկած խոչընդոտները

Երիտասարդների՝ ընտանիք կազմելու ճանապարհին ընկած խոչընդոտները	Ամենաառաջնային խոչընդոտը	Երկրորդ նշանակալի խոչընդոտը ²⁸	Երրորդ նշանակալի խոչընդոտը
Աշխատանք չունենալը	57,0%	22,4%	4,3%
Բնակարանային խնդիրները (առանձին բնակարան չունենալը, առկա բնակարանի փոքր մակերեսը)	24,8%	27,3%	13,3%
Աշխատանքի/եկամտի աղբյուրների անկայունությունը	6,4%	11,6%	11,2%
Ցածր վարձատրությունը/եկամուտները	4,7%	18,8%	20,4%
Համապատասխան զուգընկեր չունենալը	3,3%	6,1%	8,7%
Երկրի տնտեսական անկայունությունը	1,8%	4,8%	11,3%
Այլ պատասխաններ	1,9%	4,8%	9,5%
Ընդամենը	100,0%	95,9%	78,7%


28 Երկրորդ և երրորդ տեղում նշանակալի համարվող պատասխանների գումարը չի կազմում 100%, քանի որ հարցվածների որոշ մասը նշել է ընդամենը 1 խոչընդոտ:

Պետք է նշել, որ բնակարանային խնդրի մատնանշումն առավել տարածված է երևանաբնակ երիտասարդների շրջանում. վերջիններիս 42,6%-ն այս խնդիրը նշում է որպես ամենաառկա խոչընդոտ: Աշխատանքի բացակայությունը որպես ամենաազդեցիկ խոչընդոտ առավել հաճախ հնչեցվել է մարզային քաղաքների (61,6%) և գյուղերի երիտասարդների կողմից (62,5%). Երևանաբնակ երիտասարդների շրջանում նույն ցուցանիշը կազմում է 45,7% (տե՛ս Հավելված 3, Աղյուսակ 3.7):

Երևանաբնակ երիտասարդների կողմից բնակարանային խնդրի բարձրաձայնման տարածվածությունը կարող է պայմանավորված լինել ինչպես երևանյան բնակարանների փոքր մակերեսով, այնպես էլ արժեքային կողմնորոշումներով: Վերջին ենթադրությունն ամրապնդվում է երիտասարդներին առաջադրված հետևյալ հարցի պատասխաններով. «Ասացե՛ք, խնդրե՛մ, որքանո՞վ եք համաձայն²⁹ ընտանիքի հետ կապված հետևյալ դատողության հետ. «Երիտասարդ ընտանիքը պետք է ապրի ծնողների ընտանիքից առանձին»»:

Գծապատկեր 3.4-ից պարզ է դառնում, որ երևանաբնակ երիտասարդների գերակշիռ մասը՝ գրեթե 70%-ը, համաձայն է ծնողների ընտանիքից առանձին ապրելու գաղափարի հետ, իսկ մարզաբնակ երիտասարդների կարծիքներն այս հարցի շուրջ կիսվում են:

☑ 3.4. «Ասացե՛ք, խնդրե՛մ, որքանո՞վ եք համաձայն ընտանիքի հետ կապված հետևյալ դատողության հետ. «Երիտասարդ ընտանիքը պետք է ապրի ծնողների ընտանիքից առանձին»»



Երիտասարդների նախաձեռնողականության և ինքնուրույնության աստիճանի մասին կարող են վկայել հետևյալ հարցին տրված պատասխանները. «Որո՞նք են վերը թվարկված խոչընդոտների հաղթահարման ամենացանկալի տարբերակները»: Երիտասարդների պատասխանները փաստում են, որ նրանց մեծամասնությունը գերադասում է առկա խոչընդոտների հաղթահարման պրոակտիվ (նախաձեռնողական) ռազմավարությունը, այն է՝ բարձր վարձատրվող (37,8%), ցանկացած կայուն աշխատանք (22,2%) և առնվազն միջին վարձատրությամբ աշխատանք ունենալը (8,9%) (Աղյուսակ 3.4):

29 Համաձայնությունը չափվել է 1-4 բալով, որտեղ «1»-ը նշանակում է, որ «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն եմ»:


3.4. Ընտանիք կազմելու ճանապարհին ընկած խոչընդոտների հաղթահարման ամենացանկալի տարբերակները

Ամենացանկալի տարբերակները	1-ին պատասխան	2-րդ պատասխան	3-րդ պատասխան
Բարձր վարձատրվող աշխատանք ունենալը	37,8%	8,6%	5,1%
Ցանկացած կայուն աշխատանք ունենալը	22,2%	15,3%	8,0%
Պետության կողմից երիտասարդներին աշխատանքով ապահովելը	9,3%	17,7%	18,2%
Առնվազն միջին վարձատրությամբ աշխատանք ունենալը	8,9%	5,5%	2,7%
Պետության կողմից երիտասարդներին աջակցելը՝ մատչելի գներով բնակարաններ ձեռք բերելու հնարավորություն տալով	7,8%	19,9%	10,0%
Սեփական քրտնաջան աշխատանքը	4,6%	5,8%	10,6%
Պետության կողմից բնակարանի անվճար տրամադրումը	4,0%	9,0%	8,1%
Այլ պատասխաններ	4,3%	12,2%	12,6%
Ընդամենը	98,8%	93,9%	75,4%

Ուշադրության է արժանի պետության աջակցությանն ապավինող երիտասարդների տոկոսը. նրանց 4%-ի համոզմամբ՝ բնակարանային խնդրի լուծման ամենաընդունելի տարբերակը պետության կողմից բնակարանի անվճար տրամադրումն է, իսկ 7,8%-ը նախընտրում է ստանալ պետական աջակցություն՝ մատչելի գնով բնակարան ձեռք բերելու հնարավորության տեսքով: Պետք է նշել, որ պետությունից անվճար կամ մատչելի գնով բնակարան ակնկալողները գերակշռում են մայրաքաղաքում (աջակցության առաջին տարբերակն ակնկալող 4% երիտասարդների շրջանում երևանաբնակները կազմում են 52,1%, իսկ 2-րդ՝ մատչելի գնով տարբերակի դեպքում՝ 42,6%): Խոչընդոտների հաղթահարման նախընտրելի ռազմավարությունների բաշխումը, ըստ հարցվածների բնակավայրի, մերկայացված է Հավելված 3-ում՝ Աղյուսակ 3.8-ում:

Տարբեր սեռերի հարցվածների՝ այս հարցի շուրջ ունեցած մոտեցումներում որոշակի տարբերություններ են նկատվում: Բարձր աշխատավարձով աշխատանք ունենալը որպես ընտանիք կազմելու ճանապարհին ընկած հիմնական խոչընդոտների հաղթահարման նախապայման առավել գերակշռում է արական սեռի հարցվածների շրջանում (Գծապատկեր 3.5): Նմանօրինակ մոտեցումը զարմանալի չէ, քանի որ վերջիններս ավանդականորեն առավել մեծ պատասխանատվություն են զգում ընտանիքի ֆինանսական ապահովման գործում:

☑ 3.5. Ընտանիք կազմելու ճանապարհին ընկած խոչընդոտների հաղթահարման ամենացանկալի տարբերակներն ըստ հարցվածների սեռի



Պետական աջակցության ակնկալիքների առումով իգական սեռի հարցվածները, մյուս կողմից, գերակշռում են արական սեռի հարցվածներին:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է նաև երիտասարդների համար ընտանիքում **երեխաների ցանկալի թիվը**. դրա միջինը կազմում է 2,53: Հարցվածների կրթական մակարդակի և երեխաների ցանկալի թվի միջև էական կապ չի արձանագրվում³⁰: Փոխարենը՝ որոշակի կապ է նկատվում նշված հարցի և հարցվածի բնակավայրի միջև. ի հակադրություն ընդունված կարծրատիպի՝ մայրաքաղաքի երիտասարդների կողմից երեխաների նախընտրելի թվի միջինը (2,66) մի փոքր ավելի բարձր է, քան գյուղաբնակ երիտասարդների նույն ցուցանիշը (2,52): Երեխաների նախընտրելի թվի միջև որոշ տարբերություններ են առկա արական (2,63) և իգական (2,46) սեռերի հարցվածների միջև, սակայն այդ տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ:

2006 թվականին 2500 տնային տնտեսությունների շրջանում ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված «Ընտանիքի հետազոտության» արդյունքների համաձայն՝ հարցվածների 64,4%-ը նշել է, որ ցանկանում է ունենալ 2-3 երեխա, 26,9%-ը՝ 4-6, 4,9%-ն էլ՝ 1 երեխա³¹:

Խոսում տվյալներ են ստացվել ընտանիքում երեխաների դերի ընկալումների վերաբերյալ: Հարցվողներին առաջադրվել էր համաձայնել կամ չհամաձայնել հետևյալ դատողության հետ. «Ընտանիքը լիարժեք է միայն այն դեպքում, եթե առկա են երեխաներ»³²: Հարցվածները

30 Կապի գործակցի արժեքը -0.013 է և վիճակագրորեն ոչ նշանակալի:

31 Տե՛ս «Family Survey» implemented by Ministry of Labor and Social Affairs of RA National Statistical Service of RA, funded by UNFPA, Yerevan, 2006.

32 Դատողության հետ համաձայնությունը գնահատվել է 1-4 բալլով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն եմ»:


րի 83,4%-ն այս կամ այն չափով համաձայնել է տվյալ դատողության հետ, իսկ 16,4%-ը՝ ոչ: Ստացվում է, որ հայաստանյան երիտասարդների 16,4%-ն ընդունելի է համարում երեխաների բացակայությունն ընտանիքում՝ հակադրվելով լիարժեք ընտանիքի՝ համընդհանուր ընդունված կարծրատիպին: Ընդ որում՝ որոշակի վիճակագրորեն նշանակալի տարբերություններ են արձանագրվում լիարժեք ընտանիքի ընկալման և հարցվածների կրթական մակարդակի միջև³³. կրթական ավելի բարձր մակարդակ ունեցող հարցվածների շրջանում առավել շատ են տվյալ դատողության հետ չհամաձայնողները, այսինքն՝ այնպիսիք, ովքեր առանց երեխաների ընտանիքը լիարժեք են համարում: Այս հարցի շուրջ առկա դիրքորոշումների և հարցվածների սեռի, բնակավայրի տիպի միջև վիճակագրորեն նշանակալի կապեր չեն արձանագրվում:

3.3. Ընտանեկան արժեքների ընկալումները

Ընտանեկան հարաբերությունների փոխակերպման ցուցանիշ են այդ հարաբերությունները կանոնակարգող արժեքները, արժեքային կողմնորոշումները: Տվյալ հետազոտության շրջանակում անդրադարձ է կատարվել այնպիսի արժեքների, ինչպիսիք են՝ երիտասարդի կյանքում ծնողների խորհուրդների դերը, երիտասարդների՝ ծնողների հետ ապրելու անհրաժեշտությունը, ընտանեկան հարաբերությունների գեներային կողմը, ամուսնալուծությունը: Հարցվողներին առաջադրվել են արժեքային դատողություններ, և ճշտվել է նրանց համաձայնության աստիճանը այդ դատողությունների հետ³⁴:

Ծնողական հոգածությունից երիտասարդների անկախության աստիճանը չափող դատողությունների պատասխանները ցույց են տալիս, որ հայաստանյան երիտասարդների կյանքում **ծնողների միջամտությունները** շարունակում են ընկալվել որպես ընդունելի: Գծապատկեր 3.6-ը ցույց է տալիս այդպիսի կողմնորոշումներն ամուղղակիորեն չափող դատողություններին տրված միջին գնահատականները:

3.6. Երիտասարդների կյանքում ծնողների ներկայության հետ համաձայնության աստիճանի միջին գնահատականները



33 Ընտանիքի լիարժեք լինելու ընկալման և հարցվածների կրթության միջև կապի գործակիցը 0,138 է և վիճակագրորեն նշանակալի է:

34 Համաձայնությունը չափվել է 1-4 բալով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն եմ»:

Հարցվածների գերակշիռ մասը համաձայն է այն դատողության հետ, որ աղջիկ զավակը պետք է մինչև ամուսնանալը պարտադիր ապրի իր ծնողների հետ, նույնիսկ եթե հասուն տարիքում է (միջին գնահատականը 3,55 է՝ հնարավոր 4-ից)³⁵: Այս դատողությունը միանշանակ ընդունելի է հարցվածների մեծամասնության կողմից³⁶: Պետք է նշել, որ այս դատողության հետ չհամաձայնած երիտասարդների շարքում (14,1%) գերակշիռ մաս են կազմում իգական սեռի հարցվածները:

Հատկանշական է, որ հասուն տարիքում ծնողներից առանձին ապրելը համեմատաբար ավելի ընդունելի է տղաների, քան աղջիկների համար (դատողության հետ համաձայնության միջին գնահատականը 3,08 է):

Վերը նկարագրվածին գրեթե համանման պատկեր է մարդու կյանքում ծնողների խորհուրդների կարևորության ընկալումների առումով (դատողության հետ համաձայնության միջինը 3,42 է):

Հարցված երիտասարդների տեսակետները բավականին անհամասեռ են ընտանիքում **գենդերային դերերի** և դրանցով պայմանավորված արտոնությունների շուրջ:

Գենդերային դերերը բնութագրող դատողություններից հայաստանյան երիտասարդներն ամենաշատը համաձայն են այն դատողության հետ, որ ընտանիքում որոշումներ կայացնելիս կինը և ամուսինը պետք է հավասար ծայնի իրավունք ունենան (երիտասարդների 79,4%-ը համաձայն է այս դատողության հետ, և համաձայնության միջին գնահատականը կազմում է 3,27): Ընդ որում՝ իգական և արական սեռերի, ինչպես նաև տարբեր տիպի բնակավայրերում բնակվող հարցվածների գնահատականների միջև էական տարբերություններ չկան:


Էգալիտարիստական մոտեցում արտահայտող հաջորդ՝ տղամարդու և կնոջ համար գործնական առաջընթացի հավասար իրավունքի դրույթի հետ համաձայնության միջին գնահատականը 3,18 է, այսինքն՝ հայաստանյան երիտասարդությունն ընդհանուր առմամբ համաձայն է այս դատողության հետ: Սակայն, զգալի տարբերություններ են նկատվում իգական և արական սեռերի հարցվածների տեսակետների միջև. ըստ արական սեռի հարցվածների գնահատականների՝ նրանք ավելի քիչ են համաձայն այս դատողության հետ (Գծապատկեր 3.7): Այս դատողության հետ համաձայնության աստիճանի առումով որոշակի տարբերություններ են նկատվում տարբեր բնակավայրերի հարցվածների միջև. այսպես՝ այս դատողության հետ համեմատաբար ավելի շատ համաձայն չեն գյուղաբնակ (26,6%), քան երևանաբնակ (19,9%) և մարզային քաղաքներում (18,3%) բնակվող երիտասարդները:

Ըստ հարցվածների գնահատականների միջինի՝ հայ երիտասարդներն այնքան էլ համաձայն չեն ընտանիքում ֆունկցիոնալ այնպիսի բաժանման հետ, որը կնոջ համար նախատեսում է տնային գործերի իրականացման, իսկ տղամարդու համար՝ ընտանիքի ֆինանսական ապահովման դերակատարություններ: Այս դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմել է 2,78, որը, սակայն, համասեռ չէ:

35 Հարցվածների 85,8%-ն այս կամ այն չափով համաձայնել է դատողության հետ, 14,1%-ը ոչ:

36 Ստանդարտ շեղումը կազմում է 0,8:

3.7. Ընտանեկան հարաբերությունների գենդերային կողմը



Իգական և արական սեռերի հարցվածների շրջանում առկա են զգալի տարբերություններ. իգական սեռի դեպքում համաձայնության միջինը 3,24 է, իսկ արական սեռի դեպքում՝ 2,48: Զգալի տարբերություններ են նկատվում նաև մայրաքաղաքաբնակ և մարզաբնակ երիտասարդների տեսակետների միջև. եթե երևանաբնակ երիտասարդների 48,3%-ն է համաձայն ընտանեկան դերերի վերոնշյալ ֆունկցիոնալ բաժանման հետ, ապա մարզային քաղաքներում այդ տոկոսը 61,8 է, իսկ գյուղերում՝ 69,6:

Տարբեր բնակավայրերում բնակվող երիտասարդների՝ գենդերային դերերի վերաբերյալ արտահայտած դիրքորոշումների տարբերությունները ցույց են տալիս, որ գյուղաբնակ երիտասարդները, թեև ընտանեկան որոշումների կայացման գործընթացում կողմնակից են սեռերի հավասարությանը, այնուամենայնիվ աշխատանքային հնարավորությունների և ընտանիքի ֆինանսական ապահովման հարցում շարունակում են համեմատաբար ավելի ավանդական պատկերացումներ ունենալ:

Տարբեր սեռերի հարցվածների շրջանում էական տարբերություններ են նկատվել ամուսնացած տղամարդու և կնոջ՝ արտամուսնական կապերի նկատմամբ ունեցած հանդուրժողականության առումով: «Արտամուսնական կապեր ունենալն առավել ընդունելի է ամուսնացած տղամարդու, քան ամուսնացած կնոջ պարագայում» դատողության հետ առավելապես համաձայն չեն եղել իգական սեռի հարցվածները (միջին գնահատականը կազմում է 1,88), մինչդեռ տղամարդիկ առավելապես հակված են համաձայնությանը (միջին գնահատականը կազմում է 2,86): Վիճակագրորեն նշանակալի տարբերություններ են նկատվում կրթական տարբեր մակարդակի և տարիքի հարցվածների տեսակետների միջև. որքան բարձր է հարցվածի կրթական մակարդակը³⁷, և փոքր է տարիքը³⁸, այնքան նա համաձայն չէ դատողության հետ:


37 Դատողության հետ համաձայնության և հարցվածի կրթության միջև կապի գործակիցը -0,113 է և վիճակագրորեն նշանակալի:

38 Դատողության հետ համաձայնության և հարցվածի տարիքի միջև կապի գործակիցը -0,08 է և վիճակագրորեն նշանակալի:

Վերը նշված տարբերությունները փաստում են այն մասին, որ արական սեռի հարցվածների շրջանում շարունակում են գերակայել գեոդերային դերերի բաշխման պատրիարխալ ընկալումները: Մյուս կողմից կանայք ավելի հակվում են դեպի իրավահավասարություն:

Ուսումնասիրված երիտասարդները մեծամասամբ անընդունելի են համարում **ամուսնալուծությունը**: Ընդ որում՝ այս դեպքում սկզբունքային նշանակություն ունի *երեխաների* առկայության գործոնն ընտանիքում: Եթե երեխաներ չունենալու կամ անհարթելի տարածայնություններ ունենալու պարագայում զույգի ամուսնալուծության փաստի նկատմամբ հանդուրժողականության գնահատականի միջինը կազմում է 2,47 (դատողության հետ այս կամ այն չափով համաձայնել է հարցվածների 50,4%-ը), ապա երեխաների առկայության դեպքում այն 1,65 է (դատողության հետ այս կամ այն չափով համաձայնել է հարցվածների 18%-ը) (Գծապատկեր 3.8):


☑ 3.8. Ամուսնալուծության ընկալումների միջին գնահատականները



Գծապատկեր 3.8-ից նկատելի է նաև, որ ամուսնալուծությունը՝ որպես տարածայնություններից խուսափելու այլընտրանք, ավելի շատ ընդունում են երևանաբնակ, քան մարզաբնակ երիտասարդները:

Ամփոփելով ընտանիքի ինստիտուտում երիտասարդների վարքի և կողմնորոշումների դրսևորումները՝ կարելի է փաստել, որ հայաստանյան երիտասարդների շրջանում նկատվում են ավանդական ընտանեկան հարաբերությունների վերանայման *որոշակի միտումներ*: Նախ՝ ակնհայտ է ամուսնության միջին տարիքի աճի միտումը, ինչը, արժեքային կողմնորոշումների փոփոխությունից բացի, պայմանավորված է նաև ընտանիք կազմելու ճանապարհին առկա խոչընդոտների ընկալումներով: Այդպիսի առանցքային խոչընդոտներ են նյութական ապահովվածության և բնակարանային խնդիրները, որոնք լուծելու ամենատարածված ընդունելի ռազմավարություն է համարվում այս կամ այն տիպի աշխատանք ունենալը:

Փոխակերպումների մասին են վկայում նաև երիտասարդների՝ ամուսնության ձևաչափերի նկատմամբ ունեցած դիրքորոշումներն ու փաստացի վարքը, ընտանիքի լիարժեքության ընկալումները: Մասնավորապես առանց հարաբերությունների ֆորմալացման համատեղ ապրելը, ինչպես նաև ընտանիքում երեխաների բացակայության փաստի ընդունելի լինելու ընկալումը տարածված են երիտասարդների զգալի մասի շրջանում:



ԲԱԺԻՆ 4.

Երիտասարդները կրթության ինստիտուտում

Կրթությունը երիտասարդների կենսագործունեությունում կենտրոնական տեղ զբաղեցնող սոցիալական ինստիտուտներից է: Այս հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են երիտասարդների ներկայիս սոցիալական պրակտիկաները կրթության ինստիտուտում, նրանց կողմից ՀՀ կրթական համակարգին և հաստատություններին տրված գնահատականները, ինչպես նաև կրթության արժեքի ընկալումները:

4.1. Երիտասարդների վարքը կրթության ինստիտուտում

Հարցված երիտասարդների մեծամասնությունն ունի միջնակարգ (38%), զգալի մասը՝ բարձրագույն (17,8%) և միջին մասնագիտական կրթություն (13,9%): Հարցվածների զգալի մասը ներկայումս սովորում է բարձրագույն ուսումնական հաստատություններում (17%): Հարցվածների շրջանում չնչին մաս են կազմում «կրթություն չունեցողները» (անավարտ միջնակարգ կրթություն), ինչպես նաև մասնագիտական ընդհատված կրթություն ունեցողները (Աղյուսակ 4.1):

4.1. Հարցված երիտասարդների ամենաբարձր ֆորմալ կրթությունը

Կրթական մակարդակը	Տոկոսը
Միջնակարգ (10-12 դասարան)	38,0%
Թերի բարձրագույն (ուսանող)	17,0%
Բարձրագույն (բակալավր)	15,2%
Միջին մասնագիտական	13,9%
Թերի միջնակարգ (1-8 դասարան)	8,0%
Բարձրագույն (մագիստրատուրա)	5,6%
Ընդհատված բարձրագույն (անավարտ բարձրագույն կրթություն)	1,7%
Ընդհատված միջին մասնագիտական	0,5%
Ոչ մի կրթություն չունեն	0,1%
Ընդամենը	100,0%

Ինչպես նշեցինք, ընտրանքում փոքր թիվ են կազմել մասնագիտական կրթության ընդհատման փորձառություն ունեցողները (ընդամենը՝ 2.2%)։ Վերջիններիս մեծ մասի կողմից որպես կրթության ընդհատման պատճառ նշվել են ուսման վարձի չվճարելը և ՀՀ զինված ուժեր զուգակոչվելը:

Հարցված երիտասարդների 36%-ը ներկայումս սովորում է որևէ կրթական հաստատությունում: Ընդ որում՝ նրանց 26,1%-ը սովորում է միջնակարգ դպրոցում, 19%-ը՝ միջին մասնագիտական, 46,2%-ը՝ պետական, իսկ 6,9%-ը՝ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում:

1-ից ավելի (բացառությամբ դպրոցի) տիպի կրթական հաստատություններ հաճախելու փորձառություն ունի հարցված երիտասարդների ընդամենը 3,7%-ը: Ստորև բերված Աղյուսակ 4.2-ում ներկայացված են երիտասարդների պատասխաններն այն հարցին, թե ինչպիսի կրթական հաստատություններ են հաճախել (այժմ էլ հաճախում են), և դրանցից որն է հիմնական կրթություն ապահովում: Ինչպես կարելի է ենթադրել աղյուսակում ներկայացված տվյալներից, 1-ից ավելի տիպի ուսումնական հաստատություններ հաճախելու դեպքում առավելապես որպես հիմնական կրթություն ապահովող կենտրոններ են ընկալվում միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունները:

4.2. Հարցվածների բաշխումն ըստ այն ուսումնական հաստատությունների, որոնք ավարտել են հարցվածները կամ դեռ սովորում են, և ըստ հիմնական ուսումնական հաստատության³⁹

Ուսումնական հաստատություն	Ներկայումս սովորող հարցվածների տոկոսը	Ավարտած հարցվածների տոկոսը	Ընդամենը հարցվածները	Հիմնական համարվող կրթությունը
Ավագ դպրոց/հիմնական դպրոց	26,1%	44,1%	37,5%	37,5%
Միջին մասնագիտական հաստատություն, քոլեջ, ուսումնարան	19,0%	22,7%	21,3%	20,4%
Պետական բարձրագույն ուսումնական հաստատություն	47,1%	22,6%	31,5%	31,0%
Մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն պետական մեծի դիպլոմով	7,3%	6,5%	6,8%	6,6%
Մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն ոչ պետական մեծի դիպլոմով	0,5%	0,7%	0,6%	0,5%
Միջպետական բարձրագույն ուսումնական հաստատություն	0,2%	0,4%	0,3%	0,3%
Արտերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություն (արտերկրում գտնվող)	0,2%	0,0%	0,1%	0,1%
Կարճաժամկետ դասընթացների, թրեյնինգների մասնակցություն որևէ կազմակերպությունում	1,8%	3,3%	2,7%	1,2%
Մասնագիտություն ապահովող դասընթացներ որևէ անհատի մոտ (օրինակ՝ արհեստավորի)	0,2%	3,5%	2,3%	2,1%
Արտերկրյա բուհի մասնաճյուղ ՀՀ-ում	0,9%	0,3%	0,5%	0,3%
Ընդամենը	103,4%	103,9%	103,7%	100,0%

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում երիտասարդների կողմից մասնագիտական կրթական ֆորմալ և ոչ ֆորմալ հաստատությունների, ինչպես նաև մասնագիտության ընտ-

39 Աղյուսակի 3 սյուններում պատասխանների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ 1 հարցվողը կարող է սովորել/ավարտել 1-ից ավելի հաստատություն:

րության շարժառիթների ուսումնասիրությունը: Հետազոտության արդյունքների համաձայն՝ **ուսումնական հաստատության ընտրության շարժառիթների առումով զգալի մաս են կազմում «ռազիոնալ» ընտրություն կատարած երիտասարդները:** Ըստ այդ շարժառիթների՝ երիտասարդներին կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- **«ռազիոնալ» ընտրություն** կատարած երիտասարդներ: Ընդ որում՝ ռազիոնալությունն այս դեպքում կարելի է բաժանել առնվազն 2 տիպի.
 - **կրթության բովանդակության կողմնորոշմամբ պայմանավորված ռազիոնալություն:** Հարցված երիտասարդների 22,3%-ը որպես ուսումնական հաստատության ընտրության ամենաառաջնային շարժառիթ է նշել տվյալ հաստատության կողմից իրենց համար նախընտրելի մասնագիտությամբ ամենաորակյալ կրթությունը տրամադրելու գործոնը, 8,9%-ի պնդմամբ էլ՝ իրենց համար նախընտրելի մասնագիտությունն ուսուցանվում է միայն տվյալ ուսումնական հաստատությունում: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ մասնաբնույթ շարժառիթներով առաջնորդված երիտասարդները կազմում են 31.2%:
 - **ուսումնառության գործընթացը դյուրին դարձնելու ձգտմամբ պայմանավորված ռազիոնալություն:** Հարցվածների 12,6%-ը որպես տվյալ մասնագիտական հաստատություն (ֆորմալ կամ ոչ ֆորմալ⁴⁰) ընդունվելու ամենաառաջնային շարժառիթ է նշել դրա՝ իրենց բնակության վայրին մոտ գտնվելը⁴¹: 9,3%-ն էլ որպես ամենաառաջնային շարժառիթ է նշել տվյալ մասնագիտական հաստատություն (ֆորմալ կամ ոչ ֆորմալ) ընդունվելու, իսկ 1,3%-ը՝ այնտեղ սովորելու դյուրին լինելը: 8,5%-ի համար վճռորոշ գործոն է հանդիսացել ուսումնական համեմատաբար ցածր վարձավճարը, 2,4%-ը մատնանշել է տվյալ հաստատությունում իրենց ծանոթների դասավանդման փաստը, 0,4%-ն էլ՝ տվյալ հաստատություն ընդունվելու պարագայում ժամկետային զինծառայությունից խուսափելու փաստը: Այսպիսով՝ մասնաբնույթ շարժառիթներով առաջնորդված երիտասարդների տոկոսը 34,5 է:
- Այսպես կոչված՝ **ինքնրիսկ** և հարազատների խորհուրդները ազդեցություն են ունեցել երիտասարդների 11,2%-ի վրա. նրանցից 9,2%-ն իր ուսումնական հաստատությունն ընտրել է ծնողների, հարազատների խորհրդով, իսկ 2,0%-ը հետևել է նրանց օրինակին:
- Մասնագիտական կրթական հաստատության ընտրության հարցում տվյալ բուհի **հեղինակությունն** ամենաառաջին գործոնն է եղել երիտասարդների 8,9%-ի պարագայում:
- Հաստատության պատահական ընտրության մասին էլ փաստել է հարցված երիտասարդների 5,2%-ը (տե՛ս Հավելված 4, Աղյուսակ 4.5):

Պետք է նշել, որ ուսումնական հաստատության հեղինակությունը գործոն է հանդիսացել մեծամասամբ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, իսկ ուսման ցածր վարձավճարները՝ կարճաժամկետ դասընթացներ, մասնավոր բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընտրելիս: Կրթական հաստատությունների ընտրության շարժառիթները, ըստ այդ հաստատությունների տիպերի, ներկայացված են Հավելված 4-ում (Աղյուսակ 4.6):


40 Ոչ ֆորմալ կրթական ինստիտուտ ասելով հասկանում ենք որևէ անհատի մոտ կամ որևէ կազմակերպությունում անցկացվող կարճաժամկետ դասընթացները:

41 Այս դեպքում գերակշիռ մաս են կազմում մարզային քաղաքների և գյուղական բնակավայրերի հարցվածները:

Եթե ուսումնական հաստատության ընտրության գործում գերակայում էին «ռացիոնալ» շարժառիթները, ապա **մասնագիտության ընտրության** հարցում գերակա շարժառիթը զգացմունքային երանգավորում ունի. հարցվածների 47,9%-ի պնդմամբ՝ իրենք իրենց մասնագիտությունն ընտրել են, քանի որ այն իրենց «դուր է գալիս», «հետաքրքիր է», «երազել են այդ մասնագիտությունն ունենալու մասին»: Ըստ հետազայում աշխատանք գտնելու բարձր հավանականության չափանիշի՝ մասնագիտությունն է ընտրել հարցվածների 16,2%-ը (Գծապատկեր 4.1): Մասնագիտական ուղղությունների ընտրության հիմնական շարժառիթների կառուցվածքը դիտարկելիս պարզ է դառնում, որ մասնագիտության դուր գալը գերակշռել է բժշկական, երաժշտական, ստեղծագործական, հումանիտար և տնտեսական գործունեությանն առնչվող մասնագիտությունների ընտրության դեպքում: Մյուս կողմից երիտասարդները հետազայում աշխատանք գտնելու շարժառիթով են առաջնորդվել արհեստներ, SS (տեղեկատվական տեխնոլոգիաներ) և կապի, հասարակական գիտությունների և գործավարության մասնագիտություններ ընտրելիս:

Մասնագիտությունների զգացմունքային նախընտրության զգալի տոկոսը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքը. սոցիալականացման ընթացքում դեռահասների կողմից յուրացվում են (ինտերնալացվում են) մասնագիտությունների հեղինակության և պահանջվածության հասարակական պատկերացումները՝ դառնալով անձի ընկալումները և նախընտրությունները կանխորոշող (հաճախ՝ չգիտակցված) գործոն: Ուստի մասնագիտության ընտրության շարժառիթների վերաբերյալ հարցին պատասխանելիս մեծամասամբ զգացմունքային շարժառիթների մատնանշումը էականորեն պայմանավորված է վերոնշյալ իրողությամբ:

4.1. Մասնագիտության ընտրության շարժառիթները




4.2. Երիտասարդների՝ հայաստանյան կրթական հաստատություններին տված գնահատականները

Կրթության ինստիտուտներում երիտասարդների վարքային պրակտիկաները մեծապես պայմանավորված են նրանով, թե ինչպես են նրանք գնահատում կրթական համակարգն առհասարակ և ինչպիսի փոփոխություններ են ցանկանում տեսնել կրթական հաստատություններում:

Հարցված երիտասարդները գնահատել են հայաստանյան կրթական համակարգի տարբեր մակարդակները՝ առաջադրված դատողությունների վերաբերյալ արտահայտելով իրենց համաձայնության աստիճանը⁴²:

☑ 4.2. Կրթության տարբեր մակարդակների միջին գնահատականները



Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 4.2-ից, ամենացածր միջին գնահատականը (հնարավոր 4-ից՝ 2,53) տրվել է *դպրոցների* կողմից աշակերտներին բոլոր անհրաժեշտ գիտելիքների տրամադրման չափանիշին⁴³: Ընդ որում՝ որքան բարձր է հարցվածի կրթական մակարդակը, այնքան ցածր են նրա կողմից տրված գնահատականները⁴⁴: Միջնակարգ կրթությանը տրված գնահատականները նաև որոշակիորեն տարբերվում են՝ կախված հարցվածների բնակավայրից. գյուղական բնակավայրերում այդ համակարգին տրված միջին գնահատականն ավելի բարձր է⁴⁵: Վերը նշված՝ կրթական մակարդակի ու բնակավայրի գործոնների ազդեցությունը պայմանավորված է նրանով, որ առավել բարձր կրթական մակարդակ ունեցող և քաղաքային բնակավայրերում ապրող երիտասարդներն առավել բարձր սպասումներ ունեն կրթական համակարգից: Ամենաբարձր միջին գնահատականը տրվել է հայաստանյան *բարձրագույն կրթության համակարգին* (հնարավոր 4-ից՝ 2,94): Բարձրագույն կրթական համակարգի գնահատականները նույնպես նշանակալիորեն կապված են հարցվածի կրթության և բնակության վայրի հետ (որքան բարձր է հարցվածի կրթական մակարդակը, այնքան ցածր են նրա կողմից տրված գնահատականները⁴⁶. գյուղական բնակավայրերում բարձրագույն համակարգին տրված միջին գնահատականն ավելի բարձր է⁴⁷): Նշված գնահատականները հնարավոր է մեկնաբանել՝ դիտարկելով հարցվածների առաջարկները՝ ուղղված իրենց համար հիմնական համարվող ուսումնական հաստատություններում փոփոխության ենթակա կողմերին:

Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 4.3-ը, հարցվածների 21,7%-ը գտնում է, որ իրենց հիմնական կրթական հաստատությունում ոչինչ բարելավել հարկավոր չէ: Պետական բուհերում կրթու-

42 Կրթության տարբեր մակարդակների վերաբերյալ համաձայնության աստիճանը չափվել է 1-4 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեն», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն են»:
 43 Հարցվածների կարծիքն այս հարցի շուրջ բավականին անհամասեռ է, ցրված: Չափանիշի գնահատականների ստանդարտի շեղումը հավասար է 1,066-ի:
 44 Հարցվածի կրթության և գնահատականի միջև կոռելյացիայի գործակիցը վիճակագրորեն նշանակալի է և հավասար է 0,203-ի:
 45 Կրաների գործակիցը՝ V=0.119:
 46 Կոռելյացիայի գործակիցը -0,2 է:
 47 Կրաների գործակիցը՝ V=0.145:

յուն ստացածներն ամենաքիչն են համաձայն այն դատողության հետ, որ իրենց բուհում ոչինչ բարելավել պետք չէ (վերջիններիս՝ 10,7%-ը): Նրանք գրեթե հավասարաչափ կերպով ցանկանում են բարելավումներ տեսնել ուսումնական գործընթացի թե՛ բովանդակությամ, թե՛ նյութատեխնիկական հագեցվածության մեջ, թե՛ ուսումնական մթնոլորտում՝ համեմատաբար ավելի շեշտադրելով գրադարանների հագեցվածությունը, համալսարանների շենքային պայմանները, կաշառակերության վերացումը և ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը (տես Չավելված 4, Աղյուսակ 4.8): Պետական բուհերի ուսանողների/չրջանավարտների՝ իրենց բուհերին տված առավել քննադատական գնահատականը կարող է պայմանավորված լինել նրանց ունեցած առավել բարձր սպասումներով:

Պետք է նկատել, որ մասնավոր բուհերի ուսանողները/չրջանավարտները փոփոխության ենթակա ամենաառաջնային երևույթների շարքում առավելապես շեշտադրել են ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը (12,9%) և գործնական հմտությունների ուսուցումը (11,8%) (տես Չավելված 4, Աղյուսակ 4.8):

4.3. Կրթական հաստատություններում բարելավման ենթակա ամենաառաջնային խնդիրները

Ոչինչ բարելավելու կարիք չկա, ամեն ինչ կարգին է	21,7%
Վերանորոգել շենքը, լսարաններն ու այլ օժանդակ տարածքները, ապահովել հարմարություններով (ջեռուցում, հիգիենիկ պայմաններ և այլն)	16,4%
Օգտագործել ժամանակակից ուսուցման մեթոդներ (ինտերակտիվ գործիքներ, ցուցադրական նյութեր և այլն)	8,7%
Վերացնել կաշառքը	7,3%
Բարձրացնել դասավանդողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը	6,6%
Բարելավել գրադարանների հագեցվածությունը, այդ թվում՝ էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները	6,3%
Սովորողներին ավելի շատ ինքնուրույն աշխատանք կատարելու հնարավորություն ընձեռել	5,6%
Բարելավել համակարգչային սրահների, լաբորատորիաների հագեցվածությունը	5,4%
Ուսումնական ծրագիրը և ներկայացվող նյութը արդիական դարձնել	5,2%
Շեշտն ավելի շատ դնել գործնական հմտությունների, կարողությունների զարգացման ու պրակտիկայի վրա	5,1%
Դասավանդվող նյութը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին	4,0%
Վերացնել «ծանոթների» միջոցով հարցեր կարգավորելու երևույթը	2,8%
Ընդլայնել համագործակցությունն ու փոխամակման ծրագրերը արտասահմանի կրթական հաստատությունների հետ	2,7%

Աղյուսակ 4.3-ից պարզ է դառնում, որ երիտասարդներն իրենց հիմնական կրթական հաստատություններում ամենաշատը ցանկանում են փոփոխություններ տեսնել շենքային պայմանների և հարմարությունների բարելավման գործում (16,4%): Կրթության կազմակերպման նյութատեխնիկական բազայի մյուս տարրի՝ գրադարանների հագեցվածության փոփոխություն ցանկանում է տեսնել հարցվածների 6,3%-ը:

Փոփոխությունների ենթակա երևույթներից նշվել են նաև դասավանդման գործընթացին առնչվող այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ ուսուցման ժամանակակից մեթոդների ու գործիքների կիրառումը (8,7%) և դասավանդողների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացումը (6,6%):

4.3. Կրթության արժեքը երիտասարդների ընկալումներում

Կրթության արժեքի ընկալումները նույնպես էական գործոն են երիտասարդների կրթական պրակտիկաների բացատրության համար: Ինչպես ցույց են տալիս երիտասարդների գնահատականները, նրանք գրեթե լիովին համաձայն են այն դատողության հետ, որ **բարձրագույն կրթություն** ունենալով՝ իրենք առավել **լավ ապագա** կունենան. նշված դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմել է 3,41՝ առավելագույն 4-ից (Գծապատկեր 4.3): Հարցվածների կարծիքն այս հարցի շուրջ բավականին համասեռ է⁴⁸: Պետք է նկատել, որ բարձրագույն կրթության՝ լավ ապագա երաշխավորելու հնարավորության գնահատականները որոշակիորեն կախված են հարցվածների տարիքից⁴⁹. որքան փոքր է հարցվածների տարիքը, նրանք այնքան համաձայն են նշված դատողության հետ:

Համեմատաբար փոքր տարիքի երիտասարդների՝ այս հարցի շուրջ դրսևորած լավատեսությունը նկատվում էր նաև ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ: Դպրոցահասակ երիտասարդները կրթությունը դիտարկում են որպես ինստրումենտալ արժեք, այսինքն՝ որպես լավ աշխատանք գտնելու և բարեկեցիկ կյանքի հասնելու *միջոց*: Կրթության արժեքի ընկալումների առումով որոշակի տարբերություններ են նկատվել աղջիկների և տղաների միջև. տղաները հակված են կրթությունը որպես ֆինանսներ վաստակելու միջոցի, իսկ աղջիկները՝ որպես ինքնուրույնության և անկախության հասնելու միջոցի ընկալմանը: Այսպես.

Իգալան. «...սովորում ես, որ որպես մարդ կայանաս ու որոշակի անկախություն ունենաս: ...մենք՝ բոլորս, ծնողներից ենք կախված, ու գերագույն նպատակներից մեկը ինքնուրույն փող վաստակել կարողանալն ա... որ ընդամենը ազատ մարդ լինես, ոչ մի կախում չունենաս...»:

16-18 տ., Երևան

Արական. «Մասնագետ են դառնում փողի համար...»:

16-18 տ., Խնձորեսկ

48 Ստանդարտ շեղումը կազմում է 0,93:

49 Կոռելյացիայի գործակիցը վիճակագրորեն նշանակալի է և կազմում է -0,138:

Հարցվածները բավականին տարակարծիք են այն հարցի շուրջ, որ Հայաստանում **լավ աշխատանք** գտնելու համար պարտադիր չէ **որակյալ կրթություն** ունենալը⁵⁰: Այս դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմում է 2,62⁵¹: հնարավոր 4-ից: Պետք է նշել, որ համեմատաբար առավել երիտասարդ հարցվածները (16 տարեկանին մոտ) առավել «լավատես» են այս առումով և առավելապես համաձայն չեն նշված դատողության հետ⁵²: Այս փաստը ևս մեկ անգամ արժանագրվել է ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ. դրանց մասնակիցների տարիքի աճին զուգահեռ՝ պարզորոշ նկատվել է հոռետեսության աճի միտում: Եթե դարոցահասակ և ներկայումս մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանող երիտասարդներն առավել հակված են կրթության և լավ աշխատանքի միջև սերտ կապին հավատալուն, ապա 24-ից 30 տարեկան երիտասարդները հերքում են այդպիսի կապի առկայությունը: Ստացած կրթության՝ աշխատանք գտնելու գործում փոքր դերակատարում ունենալու՝ բացասական փորձառության պատճառով այս տարիքի երիտասարդների շրջանում կրթությունը մեծամասամբ չէր դիտարկվում որպես կենսական արժեք: Մասնավորապես մարզային քաղաքներում և գյուղերում բնակվող երիտասարդների շրջանում առկա է որոշակի խումբ, որի անդամները, իրենց իսկ խոսքով ասած, «փոշմանել են», որ բարձրագույն կրթություն են ստացել: Այսպես.

Արական. «...պետությունը պիտի անի էն, որ եթե ես էս 5 տարին սովորել եմ, որ էդ 5 տարուց հետո ես գնամ, աշխատեմ, ոչ թե... Էսօր ես արդեն փոշմանել եմ, որ 5 տարի համալսարան եմ սովորել: Ես հաստատ փոշմանել եմ...»:

24-30 տ., երևան

Ֆոկուս խմբերի շրջանակում դիտարկված՝ կրթության արժեքի անկման ընկալումը երիտասարդների զգալի մասի կողմից հիմնավորվում էր **մասնագիտական աշխատանք** գտնելու սահմանափակ հնարավորություններով: Եվ հակառակը՝ ստացած կրթությունն արժևորվում էր այն երիտասարդների կողմից, ովքեր ներկայումս աշխատում են իրենց մասնագիտությամբ:

Հայաստանում **դիպլոմի հրական դերի** ընկալումները պարզորոշ երևում են երիտասարդների՝ հետևյալ դատողության հետ համաձայնության աստիճանով. «Հայաստանում դիպլոմի առկայությունը դեռ չի երաշխավորում, որ մարդը կրթված է»: Երիտասարդների 80%-ն այս կամ այն չափով համաձայնել է նշված դատողության հետ. համաձայնության միջին գնահատականը կազմել է 3,32՝ հնարավոր 4-ից: Ընդ որում՝ որքան բարձր է հարցվածի կրթական մակարդակը, այնքան մեծ է նրա համաձայնության աստիճանը⁵³: Որոշակի կապ է առկա նաև հարցվածների բնակության վայրի և նշված դատողության հետ համաձայնության միջև. գյուղական բնակավայրերի հարցվածներն առավելապես չեն համաձայնել դիպլոմի՝ մարդու կրթվածության երաշխիք չլինելու պնդման հետ:


50 Ստանդարտ շեղումը կազմում է 1,23:

51 Դատողության հետ այս կամ այն չափով համաձայնել է հարցվածների 54,2%-ը:

52 Առկա է վիճակագրորեն նշանակալի, սակայն ոչ մեծ կոռելյացիա, որը կազմում է 0,095:

53 Կոռելյացիան կրթության և գնահատականի միջև վիճակագրորեն նշանակալի է և կազմում է 0.177:

☑ **4.3. Կրթությանը վերաբերող դատողությունների հետ համաձայնության միջին գնահատականները**



Երիտասարդների մոտ կեսը կասկածի տակ է դնում հայաստանյան հասարակությունում **գիտնականի կարգավիճակի** հեղինակավոր լինելը: Այս պնդման հետ համաձայնության միջին գնահատականը կազմել է 2,42՝ առավելագույն 4-ից⁵⁴: Այս դեպքում նույնպես կրթական առավել բարձր մակարդակ ունեցողները հասարակության մեջ առավել ցածր են գնահատում գիտնականի դերը, իսկ գյուղաբնակները՝ ավելի բարձր: Որոշակի վիճակագործեն նշանակալի կապ կա նաև հարցվածի սեռի և գիտնականի դերի ընկալման միջև. կանայք համեմատաբար ավելի համաձայն են գիտնականի՝ հեղինակավոր լինելուն վերաբերող դատողության հետ:

Հարցված երիտասարդները բավականին տարակարծիք են այն պնդման շուրջ, որ բարձրագույն կրթություն ունենալն առավել կարևոր է տղաների, քան աղջիկների համար: Այս դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմում է 2,24⁵⁵: Պետք է նկատել, որ տղամարդիկ առավել հակված են այս դատողության հետ համաձայնելուն, իսկ առավել բարձր կրթություն ունեցողներն առավել հակված են չհամաձայնելուն:

4.4. Երիտասարդների կրթական ձգտումները

Կրթության արժեքի՝ վերը ներկայացված ընկալումների ներքո հետաքրքիր է դիտարկել երիտասարդների՝ **կրթության հետ կապված պլաններն առաջիկա 3 տարվա համար**:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների 47,6%-ն առաջիկա 3 տարվա կտրվածքով կրթության հետ կապված պլաններ չունի: Այս հարցի պատասխաններն առավել նպատակահարմար է ներկայացնել ըստ տարիքային ենթախմբերի, քանի որ ուսումնասիրված (16-ից 30 տարեկան) տարիքային խումբը ներառում է կյանքի տարբեր փուլերում գտնվող երիտասարդներ: Աղյուսակ 4.4-ում արտացոլված տվյալներից պարզ է դառնում, որ կրթության հետ կապված պլաններ չունեցողները գերակշռում են 24-ից 30 տարիքային խմբում. վերջիններիս 73,1%-ը կրթության հետ կապված պլաններ չունի: Մյուս կողմից 16-ից 18 տարեկան

54 Հարցվածների 53,2%-ը համաձայն չէ այս դատողության հետ:
 55 Դատողության հետ համաձայնել է հարցվածների 39,5%-ը:

երիտասարդների շրջանում գերակայում են բարձրագույն կրթություն ստանալու ձգտում ունեցողները (46,7%), որոշակի տոկոս էլ (12,8%) կազմում են այն երիտասարդները, ովքեր կրթության հետ կապված որևէ պլան չունեն: 16-ից 18 տարեկանների 9,9%-ի մոտեցումն այնպիսին է, որ վերջիններս կրթության հետ կապված ոչինչ չեն պլանավորում, մինչև չավարտեն ներկայիս ուսումնական հաստատությունը:

4.4. Կրթության հետ կապված պլաններն առաջիկա 3 տարվա համար

Պլանները	Հարցվածների տարիքային խմբերը			
	Ընդամենը	16-18	19-23	24-30
Կրթության հետ կապված պլաններ չունեն	47,6%	12,8%	37,4%	73,1%
Ստանալ բարձրագույն կրթություն (առաջին բարձրագույն կրթություն)	15,4%	46,7%	9,7%	5,5%
Ուսումը շարունակել մագիստրատուրայում (Հայաստանում)	10,7%	8,7%	19,2%	4,1%
Ավարտել ներկայիս ուսումնական հաստատությունը	8,6%	9,9%	14,8%	2,4%
Հայաստանում հաճախել կարճաժամկետ դասընթացների, քոչինգների	5,0%	5,8%	4,0%	5,5%
Ընդունվել միջին մասնագիտական հաստատություն (քոլեջ, տեխնիկում և այլն)	2,3%	6,6%	2,0%	0,6%
Ստանալ հավելյալ բարձրագույն կրթություն	2,2%	1,7%	3,5%	1,4%
Ուսումը շարունակել մագիստրատուրայում (արտերկրում)	2,0%	1,2%	3,1%	1,4%
Այլ պատասխաններ	6,2%	7,4%	6,2%	6,4%
Ընդամենը	100%	100%	100%	100%

Ըստ տարիքային խմբերի՝ կրթության հետ կապված պլանների տոկոսային բաշխումը ցույց է տալիս, որ 24 տարեկանից սկսած երիտասարդները մեծամասամբ իրենց կրթական զարգացումը համարում են ավարտված: Այսինքն՝ Բոլոնիայի գործընթացի առաջնայնություններից մեկը՝ ամբողջ կյանքի ընթացքում սովորելու (life-long learning) ուղղությունը, տվյալ պահի դրությամբ այնքան էլ արդիական չէ երիտասարդների շրջանում:

Որոշակի տարբերություններ են առկա տարբեր սեռերի հարցվածների՝ կրթության հետ կապված պլաններում. օրինակ՝ ակտիվություն ցույց տվող պլանների պարագայում իգական սեռի հարցվածները գերազանցում են արական սեռի հարցվածներին, և հակառակը՝ զիջում են պասիվություն ցույց տվող պլանների պարագայում:

ՀՀ ԱՎԾ-ի տվյալների համաձայն՝ 2010-2011թթ. պետական և ոչ պետական բուհերում սովորողների և ավարտածների սեռային բաշխումն ունի հետևյալ տեսքը.

սովորողներ. արական՝ 47,2%, իգական՝ 52,8%,

ավարտածներ. արական՝ 43,8%, իգական՝ 56,2%⁵⁶:

Արական սեռի հարցվածներն առաջին և հավելյալ բարձրագույն կրթություն ստանալու պլանների պարագայում որոշակիորեն գերազանցում են իգական սեռի հարցվածներին: Փոխարենը՝ Հայաստանում և արտերկրում մագիստրատուրա, միջին մասնագիտական հաստատություններ ընդունվելու, կարճաժամկետ դասընթացների մասնակցելու ձգտումների առումով աղջիկների տոկոսը գերազանցում է տղաների տոկոսին: Բացի դրանից՝ կրթության հետ կապված որևէ պլան չունեցողների թիվն ավելի մեծ է տղաների, քան աղջիկների շրջանում (համապատասխանաբար 48,2% և 47,2%) (տես Չավելված 4, Աղյուսակ 4.7):

Աղյուսակ 4.4-ի տվյալներից ուրվագծվում է միջին մասնագիտական հաստատություններ ընդունվելու ձգտում ունեցողների զգալիորեն փոքր թիվը (ընդհանուր հարցվածների շրջանում՝ 2,3%, իսկ 16-ից 18 տարեկանների շրջանում՝ 6,6%), ինչը վկայում է այն մասին, որ նշված հաստատությունները երիտասարդների շրջանում շարունակում են պակաս գրավիչ մնալ՝ չնայած այդ կենտրոններում ուսուցանվող որոշ մասնագիտությունների նկատմամբ շուկայում առկա մեծ պահանջարկին:

Կրթության հետ կապված պլանների առումով զգալի տարբերություններ կան տարբեր տիպի բնակավայրերում ապրող երիտասարդների միջև: Այսպես՝ ամենաշատը կրթության հետ կապված պլաններ չունեն գյուղաբնակ երիտասարդները (վերջիններս կազմում են կրթության հետ կապված պլաններ չունեցողների 43,8%-ը, Աղյուսակ 4.5): Միևնույն ժամանակ գյուղաբնակ երիտասարդները գերակշռում են առաջին բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ստանալ ցանկացողների շրջանում: Գծապատկեր 4.4-ից ակնհայտ է դառնում, որ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն առավել մեծ մասսայականություն են վայելում հենց գյուղաբնակ երիտասարդների շրջանում (60,7%): Մյուս կողմից ուսումը մագիստրատուրայում շարունակելու (ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում), հավելյալ բարձրագույն կրթություն ստանալու ձգտումներ ունեցողները գերակշռում են երևանում (Աղյուսակ 4.5):

56 http://www.armstat.am/file/article/soc_10_11-12.pdf, Social Situation of RA in 2010 (in Armenian), NSS RA.

4.5. Կրթության հետ կապված պլաններն ըստ բնակավայրի

Պլանները	Բոլոր հարցվածները	Երևան	Մարզային քաղաք	Գյուղ
Կրթության հետ կապված պլաններ չունեն	47,6%	25,1%	31,1%	43,8%
Ստանալ բարձրագույն կրթություն (առաջին բարձրագույն կրթություն)	15,4%	31,9%	30,8%	37,3%
Ուսումը շարունակել մագիստրատուրայում (Հայաստանում)	10,7%	41,9%	32,6%	25,6%
Ավարտել ներկայիս ուսումնական հաստատությունը	8,6%	35,9%	27,2%	36,9%
Հայաստանում հաճախել կարճաժամկետ դասընթացների, քոչմենթների	5,0%	31,7%	33,3%	35,0%
Ընդունվել միջին մասնագիտական հաստատություն (քոլեջ, տեխնիկում և այլն)	2,3%	7,1%	32,1%	60,7%
Ստանալ հավելյալ բարձրագույն կրթություն	2,2%	44,4%	25,9%	29,6%
Ուսումը շարունակել մագիստրատուրայում (արտերկրում)	2,0%	75,0%	12,5%	12,5%

Տվյալները ցույց են տալիս, որ կրթության հետ կապված պլաններ չունեցողների 63,5%-ն ունի աշխատանքին առնչվող տարբեր պլաններ, իսկ 36,5%-ն այդպիսի պլաններ էլ չունի: Այսինքն՝ կրթական պլաններ չունեցողների մեծամասնության համար առավել գերակա է աշխատելը:

Այսպիսով՝ հայաստանյան երիտասարդների զգալի մասի շրջանում տարածված են մասնագիտական կրթություն ստանալու ձգտումները: Միաժամանակ երիտասարդների համեմատաբար ավագ տարիքային խմբում (24-ից 30 տարեկան) առաջիկա 3 տարվա կտրվածքով կրթության հետ կապված ձգտումներ ունեցողները փոքրամասնություն են կազմում (26,9%): Փաստորեն 24 տարեկանից հետո երիտասարդները մեծամասամբ իրենց կրթական զարգացումն իրականացված են համարում: Այսինքն՝ Բոլոնիայի գործընթացի առաջնայնություններից մեկը՝ ամբողջ կյանքի ընթացքում սովորելու (life-long learning) ուղղությունը, տվյալ պահի դրությամբ այնքան էլ պահանջված չէ երիտասարդների շրջանում:

Կրթությունը դիտարկվում է որպես ապագայում հաջողությունների հասնելու հիմնական միջոց: Միևնույն ժամանակ կրթություն ստանալուց հետո աշխատանք փնտրելու փորձառություն (մեծամասամբ բացասական) ունեցողների շրջանում նկատվում է կրթության արժեքի անկման միտում:

Երիտասարդների զգալի մասը քննադատորեն է վերաբերում հայաստանյան կրթական հաստատություններում ներկայումս առկա որակին և ցանկանում է փոփոխություններ տեսնել ուսումնական գործընթացում:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ԲԱԺԻՆ 5.

Երիտասարդների զբաղվածությունը


Ձբաղվածությունը երիտասարդության կյանքի փուլի հաջորդ արդիական սոցիալական ինստիտուտն է: Ձբաղվածության գործոնն էականորեն ազդում է սեփական «ես»-ի, ինչպես նաև հասարակական ենթահամակարգերի ընկալման վրա՝ պայմանավորելով երիտասարդների կողմից իրենց հետագա կյանքի պլանավորումը:



5.1. Երիտասարդների ներկայիս պրակտիկաները զբաղվածության ինստիտուտում

Չեղարկության արդյունքների համաձայն՝ երիտասարդների 73,3%-ը ներկայումս չի զբաղվում եկամուտ ապահովող կամ կամավորական աշխատանքով: Ինչպես կարելի էր ենթադրել, չաշխատողները գերակշռում են 16-ից 18 տարեկան երիտասարդների շրջանում (Գծապատկեր 5.1):

5.1. Երիտասարդների զբաղվածության կարգավիճակը




Ներկայումս աշխատանք ունեցող երիտասարդների 62,7%-ը նշել է, որ իրենց աշխատանքը մշտական է, 6,5%-ը՝ ժամանակավոր, իսկ 12,4%-ը ներգրավված է սեզոնային աշխատանքներում: Աշխատանք ունեցողների մեծամասնությունը՝ 47,5%-ը, նշել է, որ աշխատում է մասնավոր տեղական ընկերություններում, 34,5%-ը՝ պետական հաստատություններում, 5,6%-ը՝ արտասահմանյան մասնավոր ընկերություններում:

Ջբաղվածության կարգավիճակի ինքնագնահատականը վերլուծելիս պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ հասարակական ընկալումներում ինքնազբաղվածությունը և գյուղական սեփական տնտեսությունում աշխատանքային ներգրավվածությունը հաճախ չեն ընկալվում որպես զբաղվածություն: Այս ընկալումը դիտարկվել է տարբեր հետազոտությունների շրջանակներում: Եթե ինքնազբաղվածության պարագայում այդ ընկալման վրա ազդում է որևէ գործատուի մոտ զբաղված չլինելը, ապա գյուղատնտեսությունում ներգրավվածության դեպքում այդ ընկալման վրա էական ազդեցություն է ունենում տնային տնտեսության շրջանակում գյուղատնտեսական արտադրանքի սպառումից կամխիկ եկամուտներ չստանալու փաստը: Ինչպես կարելի է տեսնել Գծապատկեր 5.2-ում, աշխատանք չունեցողների ամենամեծ տոկոսը կազմել են հենց գյուղաբնակ երիտասարդները (79,8%):

Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի տվյալների՝ պաշտոնապես գրանցված երիտասարդ գործազուրկները կազմում են ընդհանուր գործազուրկների 19,1%-ը⁵⁷:

100 մարդու հաշվով գործազուրկների թիվը 16-18 տարիքային խմբում կազմում է 0,6, 19-24 խմբում՝ 6,5, իսկ 25-30 տարիքային խմբում՝ 12:

☑ 5.2. Զբաղվածությունը ըստ բնակավայրի տիպի



Զբաղվածության կարգավիճակի սեռային բաշխումը ցույց է տալիս, որ իգական սեռի հարցվածների շրջանում աշխատանք չունեցողների թիվն ավելի մեծ է (81,0%), քան արական սեռի հարցվածների շրջանում (61,6%):

☒ 5.1. Զբաղվածության կարգավիճակն ըստ սեռի

Զբաղվածության ինքնագնահատականը	Արական	Իգական
Այո՛, ունենմ վարձատրվող աշխատանք	36,5%	18,6%
Այո՛, ունենմ կամավորական աշխատանք	1,9%	0,4%
Աշխատանք չունենմ	61,6%	81,0%
Ընդամենը	100,0%	100,0%

Աշխատանք չունենալու փաստի հիման վրա հարցված երիտասարդներին գործազուրկ համարելը կամ չհամարելը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք վերջիններս ներկայումս աշխատանք են փնտրում: Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, *աշխատանք չունեցողների 62,9%-ը ներկայումս աշխատանք չի փնտրում*: Նրանք շրջանում գերակշռում են իգական սեռի, ինչպես նաև 16-ից 18 տարիքային խմբի երիտասարդները: Հետաքրքիր է նկատել, որ ներկայումս աշխատանք ունեցողների և միևնույն ժամանակ աշխատանք փնտրողների տոկոսը կազմում է 35,2: Սա կարող է վկայել այն մասին, որ առկա աշխատանքն ինչ-որ առումով չի բավարարում երիտասարդներին:

57 <http://www.armstat.am/file/doc/99466628.pdf>.

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են *երիտասարդների ձգտումները գրադավաժության ոլորտում*, մասնավորապես ճշտվել է, թե նրանք աշխատանքի հետ կապված ինչ պլաններ ունեն առաջիկա 3 տարվա կտրվածքով: Հարցվածների 30,1%-ը նշել է, որ աշխատանքի հետ կապված պլաններ չունի (Աղյուսակ 5.2): Այս երիտասարդների շարքում գերակշռում են իզական սեռի հարցվածները (այդ պատասխանը նշածների 75%-ը):

5.2. Աշխատանքի հետ կապված պլաններն առաջիկա 3 տարվա կտրվածքով

Աշխատանքի հետ կապված պլաններ չունեն	30,1%
Մասնագիտական աշխատանք գտնել Հայաստանում	29,2%
Սեփական բիզնես հիմնել Հայաստանում	10,5%
Ցանկացած աշխատանք գտնել արտերկրում	9,3%
Մասնագիտական աշխատանք գտնել արտերկրում	7,6%
Առավել բարձր վարձատրվող աշխատանքի անցնել Հայաստանում	7,5%
Բարձր վարձատրվող աշխատանք գտնել Հայաստանում	6,9%
Ցանկացած աշխատանք գտնել Հայաստանում	5,2%
Մնալ նույն աշխատավայրում, փոփոխություններ չեն պլանավորում	5,1%
Պաշտոնի բարձրացում ունենալ ներկայիս աշխատավայրում	4,5%
Սեփական բիզնես հիմնել արտերկրում	2,6%
Գտնել ցանկացած աշխատանք	1,7%
Այլ պատասխաններ	1,2%
ԴՊ	0,3%

Չնայած այն փաստին, որ երիտասարդներն էական հիմնախնդիր են համարում Հայաստանում մասնագիտական աշխատանք գտնելը, այնուամենայնիվ նրանց 29,2%-ը պլանավորում է առաջիկա 3 տարվա ընթացքում այդպիսի աշխատանք գտնել: Հետաքրքիր է, որ երիտասարդների 10,5%-ը սեփական գործը հիմնելու պլաններ ունի: Առանձնահատուկ ուշադրության է արժանի արտերկրում աշխատանք գտնելու ձգտում ունեցողների տոկոսը. հարցվածների 9,3%-ը պլանավորում է արտերկրում գտնել ցանկացած, իսկ 7,6%-ը՝ մասնագիտական աշխատանք: 2,6%-ն էլ արտերկրում բիզնես հիմնելու ցանկություն ունի:

Աշխատանք փնտրող երիտասարդներին հարց է առաջադրվել աշխատանք գտնելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ: Հարցվածների պատասխանները վկայում են, որ *աշխատանք գտնելու համար վարքային ամենատարածված մարտավարությունը ծանոթներին դիմելն է*. աշխատանք փնտրող երիտասարդների 67%-ը ներկայումս փորձում է աշխատանք գտնել հենց այդ եղանակով: Տարածվածության առումով այդ տարբերակին հաջորդում է թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններին հետևելը՝ ըստ նպատակահարմարության դրանց արձագանքելով. այս պրակտիկան կիրառվում է հարցվածների 45%-ի կողմից (Աղյուսակ 5.3):

5.3. Աշխատանք փնտրող երիտասարդների կողմից ձեռնարկվող քայլերը

Ձեռնարկվող քայլերը	Աշխատանք փնտրողների տոկոսը
Դիմում են ծանոթներիս	67%
Հետևում են թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններին (ինտերնետում, թերթերում, հեռուստատեսությամբ)	45%
Ինքնակենսագրական են ուղարկում տարբեր կազմակերպություններ	16,8%
Դիմում են աշխատանքի տեղավորման գործակալություններ	16,4%
Մասնագիտություն են ձեռք բերում (այդ թվում՝ արհեստ)	8,2%
Ոչ մի քայլ չեն ձեռնարկում	5,2%
Դիմել են Զբաղվածության պետական գործակալություն	5%
Մասնակցում են աշխատանքային ցուցահանդեսների	3,9%
Ներգրավվում են կամավորական աշխատանքներում	3,2%
Հաճախում են օտար լեզվի և համակարգչի դասընթացների	3%
Այլ պատասխաններ	1,1%
ԸՆդամենը	174,8%⁵⁸

Աղյուսակ 5.3-ում արտացոլված տվյալներից պարզ է դառնում, որ *բավականին ցածր է Զբաղվածության պետական գործակալության ստորաբաժանումներ դիմողների տոկոսը (5%)*: Սա կարող է խոսել ինչպես տվյալ կառույցի գոյության կամ գործունեության մասին տեղեկացված չլինելու, այնպես էլ դրա արդյունավետությանը թերահավատորեն վերաբերվելու մասին: Ի տարբերություն այս կառույցի՝ աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալություններ երիտասարդներն ավելի հաճախ են դիմում (16,4%):


Երիտասարդների աշխատանքային հավակնությունների և նախընտրությունների մասին կարելի է դատել նկատի ունենալով այն հարցի պատասխանները, թե նրանք աշխատանքի որ հատկանիշներն են հատկապես կարևորում: Գծապատկեր 4.3-ում ներկայացված են աշխատանքի տարբեր հատկանիշների կարևորությանը տրված միջին գնահատականները. յուրաքանչյուր հատկանիշի կարևորությունը գնահատվել է 1-4 բալով, որտեղ «1»-ը նշանակում է, որ հատկանիշն «ընդհանրապես կարևոր չէ», իսկ «4»-ը՝ «չափազանց կարևոր է»: Ներկայացված գնահատականներից պարզ է դառնում, որ առաջադրված բոլոր հատկանիշների կարևորությունը գնահատվում է բավականին բարձր. ընդ որում՝ երիտասարդների կարծիքներն այս հարցի շուրջ բավականին համասեռ են: Ակնհայտ է նաև, որ *աշխատանքում ամենաշատը կարևորվում են աշխատավարձը, աշխատողների իրավունքների պաշտպանվածության մա-*

58 Պատասխանների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ տոկոսը հաշվարկված է աշխատանք փնտրող այն երիտասարդների թվից, ովքեր նշել են 1-ից ավելի պատասխաններ:

կարդակը, վերադասների վերաբերմունքն աշխատակիցների նկատմամբ և աշխատանքային կոլեկտիվը: Համեմատաբար ավելի քիչ է կարևորվում աշխատավայրի նյութատեխնիկական հագեցվածության մակարդակը, որի կարևորության միջին գնահատականը, սակայն, նույնպես բավականին բարձր է՝ 3.28 (Գծապատկեր 5.3):



☑ 5.3. Աշխատանքի հատկանիշների կարևորության միջին գնահատականները



Որոշակի ոչ մեծ տարբերություններ են առկա տարբեր սեռերի հարցվածների՝ աշխատանքի տարբեր հատկանիշների կարևորությանը վերաբերող գնահատականներում: Համաձայն այդ գնահատականների՝ արական սեռի հարցվածների համար առաջին տեղում է աշխատավարձը, իսկ իգական սեռի հարցվածների պարագայում՝ աշխատողների իրավունքների պաշտպանվածության մակարդակը (տե՛ս Հավելված 5, Աղյուսակ 5.6): Տղամարդկանց համար աշխատավարձի գործոնի գերակա լինելը կարելի է բացատրել ընտանիքի ֆինանսական ապահովման գործում նրանց ունեցած գերակա դերի ընկալմամբ:

5.2. Աշխատանքային հարաբերությունների ընկալումները և արժեքները

Աշխատաշուկայում երիտասարդների վարքագիծը բացատրելու համար կարևոր է հասկանալ նրանց ընկալումները և գնահատականները հայաստանյան աշխատաշուկայում ներկայումս տիրող իրավիճակի վերաբերյալ:

Հայաստանում աշխատանք գտնելու ճանապարհին ընկած խոչընդոտների ընկալումների վերլուծությունը ցույց է տալիս, որ երիտասարդներն աշխատանք գտնելու ճանապարհին առկա *ամենահիմնական խոչընդոտներ են համարում բավարար քանակությամբ աշխատատեղերի բացակայությունը (61,4%) և գործատուների կողմից իրենց ծանոթներին աշխատանքի ընդունելու հանգամանքը (52,6%)* (Աղյուսակ 5.4): Զգալի տոկոս է կազմում նաև գործատուների կողմից աշխատանքի ընդունելու համար ոչ իրատեսական պահանջների առաջադրումը (24,8%): Այս հարցի շուրջ արական և իգական սեռերի հարցվածների գնահատականներում նշանակալի տարբերություններ չեն նկատվում:

5.4. Աշխատանք գտնելու ճանապարհին առկա խոչընդոտների ընկալումները

Խոչընդոտների ընկալումները	Բոլոր հարցվածների տոկոսը ⁵⁹	Արական սեռի հարցվածներ	Իգական սեռի հարցվածներ
Չկան բավարար քանակությամբ աշխատատեղեր	61,4%	62,8%	60,4%
Գործատուները հիմնականում աշխատանքի են ընդունում իրենց ծանոթներին	52,6%	51,1%	53,5%
Գործատուները ոչ իրատեսական պահանջներ են դնում աշխատանքի ընդունելու համար (աշխատանքային փորձ, լեզուների իմացություն և այլն)	24,8%	24,4%	25,0%
Կրթություն, դիպլոմ չունենալը	23,4%	22,5%	24,0%
Աշխատանք փնտրողների որակավորումը ցածր է աշխատաշուկայի պահանջներից	8,3%	10,6%	6,8%
Արտաքին տեսքը	8,3%	4,6%	10,8%
Աշխատանքի տեղավորման գործակալությունները չեն կատարում իրենց գործառույթները	6,0%	6,5%	5,7%
Կրթական հաստատությունները չեն ապահովում պրակտիկ գիտելիքներ/հմտություններ	6,0%	5,2%	6,5%
Հաշմանդամություն	5,6%	4,8%	6,1%
Ցածր աշխատավարձը	4,5%	5,6%	3,7%
Աշխատանք փնտրողների որակավորումը բարձր է աշխատաշուկայի պահանջներից	2,3%	1,7%	2,8%
Զբաղվածության տարածքային ծառայությունները չեն կատարում իրենց գործառույթները	2,0%	1,9%	2,1%
Գործատուները կաշառք են պահանջում	2,0%	1,3%	2,5%
Սեռը	1,2%	2,1%	0,7%
Այլ պատասխաններ	4,4%	2,9%	5,4%

59 Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ 1 հարցվողը կարող էր նշել 3 պատասխան:

Այս հարցի շուրջ քանակական հարցման արդյունքներն ամրապնդվել են ֆոկուսխմբային քննարկումների տվյալներով: Այս դեպքում նույնպես աշխատատեղերի բացակայությունը դիտարկվում էր որպես երիտասարդների առջև ծառայած ամենաէական խնդիր: Նման իրավիճակում, երբ աշխատատեղը հանդես է գալիս որպես սահմանափակ ռեսուրս, աշխատանքի ընդունվելիս կապերի գործոնի չարաշահումն առավել ակնառու է դառնում աշխատանքի համար դիմող երիտասարդների շրջանում:

Ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ ծանոթների գործոնի մասին առավելապես բարձրաձայնում էին համեմատաբար բարձր տարիքի երիտասարդները, որոնց փորձառությունն աշխատանք գտնելու հարցում ավելի մեծ է: Նշված թեմայի շուրջ ստորև ներկայացված է մեջբերում ֆոկուսխմբային քննարկումից.

«...խեղճ քույրիկս դատարանում ամեն անգամ քննություն ա տալիս, անցնում ա հարցազրույցով, ամեն ինչով, ասում են շատ լավ ա (ծիծաղում է), բայց էդ ծանոթը քանի որ չկա, նույնիսկ գումարը չի օգնում... Ծանոթը պիտի լինի...»:

Իգական սեռի ներկայացուցիչ, 19-23 տ., Երևան

«...մեկ ուրիշը մեջք ունի հեռուստատեսությունում, ինքը... եթերում երևում է, բայց ո՛չ ձայն ունի, ո՛չ խոսք ունի, ո՛չ էլ...»:

Արական սեռի ներկայացուցիչ, 24-30 տ., Երևան

Չնայած հայաստանյան աշխատաշուկայում աշխատանքային հարաբերությունների կարգավորման հարցում ոչ ֆորմալ գործոնների գերակայության մատնանշմանը՝ հարցված երիտասարդներն իրենց համար նախընտրելի աշխատանք գտնելու առումով անհրաժեշտ նախապայմաններ առանձնացնելիս, այնուամենայնիվ, կարևորում են որակյալ կրթությունը (35,7%) և մասնագիտական բարձրակարգ գիտելիքներն ու հմտությունները (10,3%): Նշանակալի համարվող նախապայմաններից երկրորդ տեղում ամենահաճախը նշվում է աշխատանքային փորձը: Այն երիտասարդները, ովքեր ազդեցիկ ծանոթներ ունենալը համարում են աշխատանք գտնելու հիմնարար նախապայման, կազմում են հարցվածների 16,7%-ը (Աղյուսակ 5.5):

5.5. Նախընտրելի աշխատանք գտնելու համար անհրաժեշտ նախապայմանների ընկալումները

Նախապայմանների ընկալումները	Առաջին նախապայմանը	Երկրորդ նախապայմանը	Երրորդ նախապայմանը
Որակյալ կրթություն	35,7%	9,6%	3,4%
Հովանավոր/ազդեցիկ ծանոթներ	16,7%	13,0%	7,6%
Մասնագիտական բարձրակարգ գիտելիքներ և հմտություններ	10,3%	14,0%	5,7%
Աշխատանքային փորձ	6,1%	15,1%	10,6%
Համապատասխան աշխատատեղի առկայություն	6,1%	6,5%	10,0%
Դիպլոմ	4,2%	4,2%	5,2%
Կաշառք	3,9%	6,1%	3,3%
«Բախտը բերելը»	3,9%	4,8%	8,1%
Նպատակասլաց լինելը	3,9%	6,4%	8,4%
Ճարպիկ լինելը	3,6%	6,4%	9,1%
Այլ պատասխաններ	5,6%	8,9%	12,7%
Ընդամենը	100%	95%	84%

Բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում մի փոքր առավել տարածված է որակյալ կրթությանն ու մասնագիտական գիտելիքներին կարևորություն տալը. միևնույն ժամանակ վերջիններիս շրջանում ազդեցիկ ծանոթների դերը կարևորողներն ամենաշատն են կրթական մյուս աստիճաններն ունեցողների համեմատ (տե՛ս Հավելված 5, Աղյուսակ 5.10):


Աշխատատեղերի բացակայության և աշխատանքի ընդունվելու ժամանակ ծանոթի գործոնի գերակայության ընկալման խորապատկերում աշխատողի որակավորման կարևորության վերաբերյալ շեշտադրումը կարող է վկայել հետևյալի մասին.

- Աշխատաշուկայի սահմանափակ պահանջարկի և աշխատուժի մեծ առաջարկի պայմաններում որակյալ կրթություն, մասնագիտական բարձրակարգ գիտելիքներ ու հմտություններ ունեցողները համարվում են առավել մրցունակ:
- Առկա է դիրքորոշում այն մասին, որ բարձրորակ մասնագետներն այլ հավասար պայմաններում, որպես կանոն, աշխատանք են գտնում:

Պետք է նաև նկատել, որ այս հարցի շուրջ օպորտունիստական դիրքորոշում ունեցողները (օրինակ՝ «բախտը բերելը» կամ «ճարպիկ լինելը» որպես հիմնարար նախապայման համարողները) հարցվածների շրջանում բավականին ցածր տոկոս են կազմել:

Աշխատաշուկայում տիրող իրավիճակի ընկալումները երևում են նաև հարցվածների՝ աշխատանքային հարաբերությունների այս կամ այն կողմի վերաբերյալ առաջադրված դատողությունների հետ համաձայնության գնահատականներից (Գծապատկեր 5.4):

☑ 5.4. Աշխատանքային հարաբերություններին վերաբերող դատողությունների հետ համաձայնության⁶⁰ միջին գնահատականները



Հարցվածները հիմնականում համաձայնել են, որ *Հայաստանում հնարավոր չէ բարեկեցության հասնել առանց քրտնաջան աշխատելու*: Այս հարցի շուրջ, սակայն, տեսակետներն այնքան էլ համասեռ չեն: Նշանակալի տարբերություններ են առկա տարբեր սեռերի և բնակավայրերի հարցվածների միջև. արական սեռի երիտասարդներն ավելի քիչ են համաձայն այս դատողության հետ (միջինը կազմում է 3,11՝ իգական սեռի հարցվածների 3,21-ի համեմատ): Մնացածից ավելի քիչ են համաձայն նաև երևանաբնակ երիտասարդները (միջինը կազմում է 2,94՝ մարզային քաղաքների 3,23-ի և գյուղաբնակ երիտասարդների 3,3-ի համեմատ):

Աշխատանքային հարաբերությունները բնորոշող՝ *«աշխատողների իրավունքներին վերաբերող օրենքները միայն «թղթի վրա» են և չեն գործում»* դատողության հետ հարցվածները նույնպես մեծամասամբ համաձայն են. համաձայնության միջինը կազմում է 3,14՝ առավելագույն 4-ից: Պետք է նկատել, որ հարցվածների 3%-ը դժվարացել է գնահատական տալ այս հարցին, ինչի ամենահավանական պատճառը ուղրտից անտեղյակ լինելն է: Այս հարցի շուրջ որոշակի տարակարծություններ կան տարբեր տարիքի հարցվածների գնահատականների միջև: Այս դեպքում նույնպես 16-ից 18 տարեկան երիտասարդներն աչքի են ընկնում լավատեսությամբ. նրանք գրեթե համաձայն չեն դատողության հետ (միջինը 2,91 է՝ ի հակադրություն 19-ից 23 և 24-ից 30 տարեկան երիտասարդների, որոնց համաձայնության միջին գնահատականները համապատասխանաբար կազմում են 3,14 և 3,26):

Աշխատողների իրավունքների պաշտպանվածության ցածր մակարդակը որպես հիմնախնդիր բարձրացվել է նաև ֆոկոսխմբային քննարկումների ժամանակ: Ընդ որում՝ այդ իրավունքների մասին մեծամասամբ խոսվում էր աշխատավարձի չափի և կատարած աշխատանքի ծավալների ու աշխատաժամանակի անհամապատասխանության համատեքստում:

Հարցվածները բավականին տարակարծիք են հետևյալ դատողության շուրջ. *«Աշխատանքում հաջողության հասնելու համար առավել կարևոր է լավ ծանոթներ ունենալը, քան քրտնաջան աշխատելը»*: Հարցվածների 57,8%-ն այս կամ այն չափով համաձայն է նշված դատողության հետ. համաձայնության միջին գնահատականը կազմում է 2,98: Այս հարցում առավել լավա-

60 Պատողությունների հետ համաձայնությունը չափվել է 1-4 բալով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն եմ»:

տես են իգական սեռի հարցվածները, ովքեր ավելի շուտ համաձայն չեն դատողության հետ (իգական սեռի հարցվածները համաձայն են 2,8 միջին գնահատականով, իսկ արական սեռի հարցվածները՝ 3,2): Լավատեսությամբ աչքի են ընկնում նաև 16-ից 18 տարեկան երիտասարդները (վերջիններիս միջինը կազմում է 2,62՝ ի հակադրություն 19-ից 23 տարեկանների 2,88-ի և 24-ից 30 տարեկանների 3,04-ի):

Երիտասարդների շրջանում չեն արձանագրվում աշխատանքի հետ կապված ֆատալիստական մեկնաբանություններ: «Աշխատանքում հաջողության հասնելու համար առավել կարևոր է բախտ ունենալը, քան աշխատելը» արժեքային դատողության հետ նրանք առավելապես համաձայն չեն: Բախտի գործոնին ամենաքիչն են նշանակություն տալիս 16-ից 18 տարեկան երիտասարդները (միջինը՝ 2,39՝ մյուս 2 տարիքային խմբերի 2,7-ի և 2,73-ի համեմատ): Իգական սեռի հարցվածներն այս գործոնին նշանակություն տալուն մի փոքր ավելի են հակված (միջինը 2,57 է՝ արական սեռի հարցվածների 2,7-ի համեմատ):

Երիտասարդներն ամենաքիչը համաձայն են այն դատողության հետ, որ «Հայաստանում լավ մասնագետներն իրենց մասնագիտությամբ միշտ էլ կարողանում են աշխատանքի անցնել» (միջինը կազմում է 2,57): Այս հարցում մյուսներից համեմատաբար ավելի լավատես են իգական սեռի հարցվածները (միջինը 2,44 է՝ արական սեռի հարցվածների 2,65-ի համեմատ): Մնացած չափանիշներով հարցվածների գնահատականների միջև էական տարբերություններ չկան: (Նշված դատողությունների հետ համաձայնության միջին գնահատականները, ըստ հարցվածների սեռի, տարիքի և բնակավայրի, տես Հավելված 5-ում՝ Աղյուսակներ 5.7-5.9-ում):

Քննարկումների ժամանակ որպես աշխատաշուկայում առկա արդիական հիմնախնդիր երիտասարդների կողմից բարձրացվել է մասնագիտությամբ աշխատելու խնդիրը: Ինչպես փաստում են քանակական հարցման տվյալները, աշխատող երիտասարդների 37,6%-ը, իսկ մասնագիտություն ունեցող երիտասարդների 52%-ը պնդում են, որ չեն աշխատում իրենց մասնագիտությամբ (Աղյուսակ 5.6): Ընդ որում՝ բարձրագույն կրթություն ունեցողների 37,9%-ն է պնդում, որ իր ներկայիս աշխատանքը «լիովին համապատասխանում է» իր մասնագիտությանը, իսկ միջին մասնագիտական կրթություն ունեցողների շրջանում նույն ցուցանիշը 27,3% է: Կրթության և մասնագիտությամբ աշխատելու ինքնագնահատականի միջև առկա է վիճակագրորեն նշանակալի կապ⁶¹:

5.6. «Ձեր ներկայիս աշխատանքը համապատասխանում է արդյո՞ք Ձեր մասնագիտությանը»

Լիովին՝ այո՝	22,7%
Ավելի շուտ՝ այո՝	12,1%
Ավելի շուտ՝ ո՛չ	6,2%
Ընդհանրապես չի համապատասխանում	31,4%
Մասնագիտություն չունեն	27,3%
ԴՊ	0,3%
Ընդամենը	100,0%

61 Կապի գործակիցը 0,27 է և վիճակագրորեն նշանակալի:

Այն պայմաններում, երբ երիտասարդների առջև առհասարակ որևէ աշխատանք գտնելու խնդիր է դրված, մասնագիտությամբ աշխատելը, իրենց իսկ ձևակերպմամբ, կարելի է «ճոխություն» համարել: Մյուս կողմից, ինչպես ներկայացրել ենք կրթությանը վերաբերող բաժնում, քննարկումները ցույց են տալիս, որ մասնագիտական աշխատանք չգտնելն էականորեն ազդում է երիտասարդների՝ իրենց աշխատանքային կյանքով բավարարվածության, իսկ գլոբալ առումով՝ երիտասարդների ընկալումներում առհասարակ մասնագիտական կրթության արժեզրկման վրա:

Այսպիսով՝ զբաղվածությունը հայաստանյան ներկայիս երիտասարդության ամենաարդիական հիմնախնդիրն է, որով մեծապես պայմանավորված են նրանց ձգտումները: Հարցված երիտասարդների գերակշիռ մասը (73,3%-ը) ներկայումս չի զբաղվում եկամուտ ապահովող կամ կամավորական գործունեությամբ: Աշխատանք չունեցողների մեծամասնությունը (62,9%-ը) նշել է, որ ներկայումս աշխատանք չի փնտրում: Վերջիններիս շրջանում գերակշռում են իգական սեռի, ինչպես նաև 16-ից 18 տարիքային խմբի երիտասարդները: Ներկայումս աշխատանք ունեցողների և միևնույն ժամանակ աշխատանք փնտրողների տոկոսը կազմում է 35,2:

Աշխատանք փնտրելու համար վարքային ամենատարածված մարտավարությունը ծանոթներից դիմելն է:

Երիտասարդների կողմից մատնանշվում են ոչ միայն աշխատատեղերի բացակայությունը՝ որպես գերակա հիմնախնդիր, այլև աշխատաշուկայում առկա այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ոչ ֆորմալ կապերի էական դերը, աշխատողների իրավունքների պաշտպանվածության մակարդակը:

Զբաղվածության խնդրի լուծման սահմանափակ հնարավորությունների ընկալումը երիտասարդների զգալի մասի շրջանում միգրացիոն մտադրություններ է ձևավորում:






ԲԱԺԻՆ 6.

Երիտասարդների միգրացիոն սրամադրությունները

Երիտասարդների՝ հասարակության սոցիալական ենթահամակարգերում տիրող իրավիճակին և դրանց գործառնությանը տված գնահատականների մասին կարող են վկայել նրանց միգրացիոն տրամադրությունները: Այս հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են երիտասարդների շրջանում միգրացիոն մտադրությունների առկայությունը, միգրացիայի հնարավոր նպատակներն ու պատճառները, կարճաժամկետ հեռանկարում Հայաստանը լքելու պլանների առկայությունը, ինչպես նաև Հայաստանից հեռանալու դեպքում՝ վերադառնալու մտադրությունները:

Ինչպես ցույց են տալիս քանակական հարցման արդյունքները, հարցվածների գերակշիռ մասը (78,5%) հնարավորության առկայության դեպքում կցանկանար այս կամ այն նպատակով Հայաստանից դուրս մեկնել: Հարցվածների շրջանում, ըստ վերջիններիս սեռի, տարիքի և բնակավայրի, որոշակի տարբերություններ են նկատվում (Գծապատկեր 6.1):

☑ 6.1. «Եթե հնարավորություն լիներ, կցանկանայի՞ք Հայաստանից դուրս մեկնել» հարցի պատասխաններն ըստ հարցվածների սեռի, տարիքի և բնակավայրի



Ինչպես երևում է Գծապատկեր 6.1-ից, Հայաստանից դուրս մեկնելուն ավելի հակված են արական սեռի (79,7%), քան իգական սեռի հարցվածները (77.6%): Տարբեր բնակավայրերի երիտասարդների մտադրությունների տարբերությունը դրսևորվում է ոչ այնքան մեկնելու ցանկության առկայությամբ, որքան այդ ցանկության մեջ վստահ լինելու աստիճանով: Այսպես՝ երևանաբնակ և գյուղաբնակ երիտասարդների շրջանում զգալիորեն գերակշռում են նրանք, ովքեր «միանշանակ կցանկանային» Հայաստանից դուրս մեկնել, իսկ մարզային քաղաքների երիտասարդների շրջանում զգալի են նրանք, ովքեր «ավելի շուտ կցանկանային մեկնել» (31,6%):

Երիտասարդների մեծամասնության շրջանում միգրացիոն նախահակվածությունները հաստատվել են նաև ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ. դրանց տվյալները կներկայացնենք այս բաժնում:

Հետաքրքիր է նկատել, որ ներկայումս աշխատող և չաշխատող երիտասարդները Հայաստանից դուրս մեկնելու իրենց պատրաստակամությամբ գրեթե չեն տարբերվում. աշխատանք ունեցողների՝ մեկնելու վերաբերյալ հարցին տված դրական պատասխանների թիվն աշխատանք չունեցողների թվից տարբերվում է մոտ 4%-ով (Աղյուսակ 6.1):

6.1. Հայաստանից դուրս մեկնելու պատրաստակամությունն ըստ զբաղվածության կարգավիճակի

«Եթե հնարավորություն լիներ, կցանկանայի՞ք Հայաստանից դուրս մեկնել»	Ներկայումս աշխատանք ունե՞ք		
	Այո՝ վարձատրվող	Այո՝ կամավորական	Ո՛չ
Միանշանակ ո՛չ	13,2%	8,3%	13,2%
Ավելի շուտ ո՛չ	10,6%	8,3%	7,3%
Ավելի շուտ՝ այո՛	26,8%	25,0%	27,7%
Միանշանակ՝ այո՛	48,7%	58,3%	51,8%
ԴՊ	0,6%	0,0%	0,1%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%

Նկատելի է նաև, որ Հայաստանից դուրս մեկնելու ցանկությունը և առաջիկա 3 տարիների համար հստակ ուրվագծված պլանները բացարձակ կախված չեն հարցվածների կրթական մակարդակից: Հարցվածների միգրացիոն տրամադրվածության և կրթական մակարդակի միջև վիճակագրորեն նշանակալի կապ առկա չէ⁶²: Միգրացիոն մտադրությունը կախված չէ նաև հարցվածների նյութական բարեկեցության մակարդակից:

Այս պահի դրությամբ արտերկրում լինելու փորձառություն է ունեցել հարցված երիտասարդների 27,4%-ը: Վերջիններս առավել հաճախ այցելել են Ռուսաստան (արտերկրում եղածների

62 Մեկնելու ցանկության և կրթական մակարդակի միջև կապի գործակիցը -0,057 է, մեկնելու հստակ մտադրության և կրթական մակարդակի միջև կապի գործակիցը՝ 0,019: 2 դեպքում էլ կապը վիճակագրորեն նշանակալի չէ:

58,5%-ը) և Վրաստան (արտերկրում եղածների 33,3%-ը): Պետք է փաստել, որ զգալի կապ է նկատվում արտերկրում լինելու փորձառության և մեկնելու ցանկության ու պլանների միջև: Առաջիկա 3 տարիներին արտերկիր մեկնել պլանավորելու և արտերկրում լինելու փորձառության փոփոխականների միջև կապի գործակիցը 0,216 է և վիճակագրորեն նշանակալի: Այսինքն՝ արտերկիր արդեն իսկ այցելած երիտասարդների շրջանում մեկնելու պլան ունեցողների թիվն ավելի մեծ է, քան դեռևս չայցելածների:

Հայաստանից դուրս մեկնելու պատրաստակամության արձանագրված բարձր ցուցանիշը հասկանալու և մեկնաբանելու համար էական է **մեկնելու նպատակների** բացահայտումը: Ինչպես ցույց են տալիս քանակական հարցումները, Հայաստանից մեկնելու գերակա նպատակն արտերկրում աշխատելն է. այդ նպատակով կցանկանային Հայաստանից դուրս մեկնել հարցված երիտասարդների 44%-ը և մեկնել ցանկացող երիտասարդների 56,5%-ը (Աղյուսակ 6.2):

6.2. Արտերկիր մեկնելու նպատակները

Նպատակները	Մեկնել ցանկացողների տոկոսը⁶³	Բոլոր հարցվածների տոկոսը
Սովորելու	20,4%	16%
Աշխատելու	56,5%	44%
<i>Մշտական բնակություն հաստատելու</i>	23,4%	18%
Բարեկամներին, հարազատներին, ընկերներին այցելելու	17,6%	14%
Ընտանիքի անդամին այցելելու	4,8%	4%
Հանգստանալու, շրջագայելու	42,5%	33%
Այլ պատասխաններ	1,1%	1%
Դժվարանում են պատասխանել	0,1%	0%
Ընդամենը	127,4%	100%

Ակնառու տարբերություններ են առկա տարբեր սեռերի հարցվածների նպատակների միջև: Եթե արական սեռի հարցվածների գերակա նպատակների եռյակը հանգում է արտերկրում աշխատելուն (58,0%), հանգստանալուն/շրջագայելուն (22,3%) և մշտական բնակություն հաստատելուն (17,1%), ապա իգական սեռի հարցվածների շրջանում առավել տարածված են շրջագայելու/հանգստանալու (40,7%), աշխատելու (35,3%) և սովորելու նպատակները (20,3%) (Աղյուսակ 6.3):

63 Տոկոսների գումարը գերազանցում է 100-ը, քանի որ հարցվողը նշել է մի քանի նպատակ:

6.3. Արտերկիր մեկնելու նպատակներն ըստ հարցվածների սեռի

Նպատակները	Բոլոր հարցվածների տոկոսը		Մեկնել ցանկացողների տոկոսը ⁶⁴	
	Արական	Իգական	Արական	Իգական
Սովորելու	9,6%	20,3%	12,0%	26,1%
Աշխատելու	58,0%	35,3%	72,8%	45,5%
Մշտական բնակություն հաստատելու	17,1%	19,2%	21,5%	24,7%
Բարեկամներին, հարազատներին, ընկերներին այցելելու	11,3%	15,4%	14,1%	19,9%
Ընտանիքի անդամին այցելելու	2,7%	4,4%	3,4%	5,7%
Հանգստանալու, շրջագայելու	22,3%	40,7%	28,0%	52,4%
Այլ պատասխաններ	0,4%	1,1%	0,5%	1,4%
ԴՊ	0,0%	0,1%	0,0%	0,2%
Ընդամենը	121,5%	136,6%	125,4%	128,8%

Արական սեռի հարցվածների շրջանում արտերկրում աշխատելու ցանկության տարածվածությունը կարելի է օրինաչափ համարել, քանի որ վերջիններս ավելի մեծ պարտավորվածություն են զգում ընտանիքի ֆինանսական ապահովման գործում:

Բավականին օրինաչափ տարբերություններ են գրանցվել տարբեր տարիքի երիտասարդների արտերկիր մեկնելու նպատակների միջև: Վաղ տարիքի երիտասարդների նպատակների կառուցվածքում գերակշռում են հանգստանալու/շրջագայելու, աշխատելու և սովորելու նպատակները (համապատասխանաբար՝ 45,5%, 34,3% և 24,8%): 19-ից 30 տարեկան երիտասարդների շրջանում առավել տարածված են աշխատելու, հանգստանալու և մշտական բնակություն հաստատելու ձգտումները (տե՛ս Հավելված 6, Աղյուսակներ 6.5-6.6):

Ուշագրավ է այն հարցվածների տոկոսի դիտարկումը, ովքեր արտերկրում մշտական բնակություն հաստատելու նպատակով կցանկանային մեկնել Հայաստանից: Վերջիններս գերակշռում են 24-ից 30 տարիքային խմբում և ՀՀ նարգային քաղաքներում (տե՛ս Հավելված 6, Աղյուսակներ 6.5-6.6): Այս խմբերի երիտասարդների արտերկրում մշտական բնակության մեկնելու պատճառներին առավել մանրամասն կանդիդատմանք տվյալ բաժնի վերջում:

Քանակական հարցման շրջանակում երիտասարդներին առաջադրվել է հիմնավորել արտերկիր մեկնելու ցանկության պատճառները: Արդյունքները ցույց են տալիս, որ որպես միգրացիայի գերակա պատճառ են հանդես գալիս արտերկրում աշխատանք գտնելու ավելի մեծ հնարավորությունները (մեկնել ցանկացողների 47,9%) և բարձր աշխատավարձերը (40,9%) (Աղյուսակ 6.4):

64 Տոկոսների գումարը գերազանցում է 100-ը, քանի որ հարցվողը նշել է մի քանի նպատակ:

6.4. Արտերկիր մեկնելու ցանկության պատճառները

Ցանկության պատճառները	Արտերկիր մեկնել ցանկացողների տոկոսը ⁶⁵	Բոլոր հարցվածների տոկոսը
Արտերկրում ավելի մեծ են աշխատանք գտնելու հնարավորությունները	47,9%	38,0%
Արտերկրում աշխատավարձերն ավելի բարձր են	40,9%	32,4%
Ցանկանում են այլ երկրներ տեսնել, շրջագայել	36,0%	28,5%
Արտերկրում կրթությունն ավելի որակյալ է	12,5%	9,9%
Արտերկրում չեն ուտնահարվում մարդու իրավունքները	12,2%	9,6%
Հայաստանում առկա անօրինակամտությունների պատճառով	8,0%	6,3%
Այլ պատասխաններ	7,3%	5,8%
Կրթություն ունեցող մասնագետները պահանջված են արտերկրում	7,0%	5,6%
Ընտանիքիս անդամներն այնտեղ են ապրում	6,3%	5,0%
Հայաստանում տիրող հոգեբանական մթնոլորտի պատճառով	4,5%	3,6%
Հայաստանում առկա քաղաքական իրավիճակի պատճառով	2,9%	2,3%
ԴՊ	0,4%	0,3%
Ընդամենը	185,8%	147,3%

Երիտասարդների միգրացիոն ձգտումների շարժառիթների վերաբերյալ առավել խորը տեղեկատվություն է ստացվել **Ֆոկուսխմբային քննարկումների** միջոցով, որոնց շրջանակում երիտասարդները հայրենի երկիրը լքելու իրենց ձգտումները (կամ դրանց բացակայությունը) հիմնավորելու և փաստարկելու հնարավորություն ունեին: Պետք է նշել, որ մեկնելու շարժառիթների աստիճանակարգությունը, ըստ դրանցով առաջնորդվողների քանակի, գրեթե համընկնում է քանակական հարցման տվյալների հետ:

Որպես կանոն, միգրացիայի հիմքում ընկած են լինում տվյալ երկրից «դուրս մղող» և այլ երկրում «գրավող» գործոններ, որոնք միևնույն ժամանակ ժառայում են որպես միգրացիոն վարքի **շարժառիթներ**: Ուսումնասիրված երիտասարդների մեկնաբանությունները ցույց են տալիս, որ Հայաստանից դուրս մղող և արտերկրում գրավող գործոնները համդեմ են գալիս որպես միևնույն գործոնի հակառակ բևեռներ. օրինակ՝ եթե Հայաստանից դուրս մղող գործոնն աշխատատեղերի բացակայությունն է, ապա արտերկրում գրավող գործոնն աշխատանքի ընդունվելու մեծ հնարավորությունն է: Միգրացիոն նախահավակածության փաստարկման հիմքում մի կողմից ընկած է Հայաստանում տվյալ գործոնին խտացված բացասական երանգա-

65 Տոկոսների գումարը գերազանցում է 100-ը, քանի որ հարցվողը նշել է մի քանի պատճառ:

վորում տալու, մյուս կողմից արտերկրում տվյալ գործոնն ուռճացված դրական երանգներով նկարագրելու հակումը:

Քննարկումները ցույց էին տալիս, որ միգրացիոն տեսանկյունից երիտասարդների համար առավել գրավիչ են ԱՄՆ-ն, Եվրոպայի երկրները, Ռուսաստանը: Ընդ որում՝ զգալի տարբերություններ են նկատվում ԱՄՆ-ի և Եվրոպական երկրների ու Ռուսաստանի ընկալումների միջև:

Երիտասարդների շրջանում ուրվագծվում է Արևմուտքի երկրների հավաքական *միֆոլոգիզացված ընկալում*: Արևմուտքը մեկնաբանվում է որպես համասեռ սոցիալական տարածություն, որտեղ *«ամեն ինչ լավ է»*: Բարեկեցիկ Արևմուտքի միջերի ձևավորման համար, որպես կանոն, տեղեկատվական հիմք է ծառայում մտերիմների, ժամոթների՝ արտերկրում մշտապես կամ ժամանակավորապես ապրելու փորձառությունը: Այսպես.

«...մեր հինգհարկանի շենքում այսօրվա դրությամբ մի երեսուն հոգի ջահելություն չկա, արտերկրում են ապրում ու բոլորն էլ գոհ են: Այնքան լավ են, որ կարողանում են այստեղ ապրող իրենց ծնողներին կամ բարեկամներին ֆինանսապես օգնել»:

Արևական սեռի հարցված, 24-30 տ., Երևան

Ստորև ներկայացնում ենք երիտասարդների *միգրացիոն ձգտումների շարժառիթները*՝ ըստ դրանցով առաջնորդվող երիտասարդների քանակի նվազման.

- **Աշխատանք գտնելու շարժառիթ** կամ *«Հայաստանում աշխատանք չկա, աշխատավարձերը ցածր են»* ընկալումը՝ ի հակադրություն *«արտերկրում հեշտ է աշխատանք գտնել, այնտեղ աշխատավարձերը բարձր են»* ընկալման:

Ուսումնասիրված երիտասարդների շրջանում այս շարժառիթն ամենագերակայոցն է: Երիտասարդներն իրենց սեփական և անմիջական շրջապատի փորձառությամբ փաստարկում են Հայաստանում աշխատատեղերի բացակայությունը, աշխատավարձերի ցածր լինելը, աշխատանքի ընդունվելու ժամանակ ոչ ֆորմալ կապերի նշանակալի դերը: Այսպես.

«Մեկը՝ ես, կուզենայի ժամանակավոր մեկնել, մի սեզոն ես դրսում աշխատել եմ, գիտեմ: Սպասարկման ոլորտի հետ կապված՝ Սոչիում երեք ամսվա ընթացքում աշխատում եմ ավելի շատ, քան այստեղ՝ տարվա ընթացքում»:

Արևական սեռի հարցված, 24-30 տ., Երևան

Մյուս կողմից՝ նույն փորձառության հիման վրա երիտասարդները ներկայացնում են արտերկրում աշխատանք գտնելու ավելի լայն հնարավորությունները: Այսպես.

«...Ուղղակի աշխատանք հնարավոր ա գտնել: ...էնտեղ ապրելը ավելի հեշտ ա, էլի, թե գործի առումով...»:

Մեջբերում Ֆև քննարկումից, 19-23 տ., Երևան

Երիտասարդների որոշակի մասը Հայաստանն արտերկրին հակադրում էր պետության կողմից տրամադրվող սոցիալական երաշխիքների տեսանկյունից: Հայաստանի Հանրապետություն պետության նկատմամբ բացասական տրամադրվածություն էր առաջացնում կրթություն-աշխատաշուկա ակնկալվող կապի բացակայությունը: Այսպես.

«Օրինակ ստեղ, որ ուսումնդ ավարտում ես, պիտի քո համար աշխատավայր ման գաս... Բայց արտասահմանում էդպես չի... Էնտեղ, եթե ուսումնդ ավարտել ես, եթե պայմաններին համապատասխանում ես, իրանք են աշխատանք տալիս»:

Արական սեռի հարցված, 16-18 տ., Խնձորեսկ

- **Կրթություն ստանալու շարժառիթ** կամ «դրսում կրթությունը որակյալ է» ընկալում:

Արտերկրի մեկնելու հաջորդ տարածված շարժառիթը կրթություն ստանալն է:

Երիտասարդների շրջանում տարածված են այն ընկալումները, ըստ որոնց՝ արևմտյան կրթական և գիտական մակարդակներն ավելի բարձր են, կրթությունն առավել որակյալ է: Նմանաբնույթ ընկալումները հանգեցնում են արտերկրում կրթություն ստանալու ձգտումների ձևավորմանը: Այսպես.

«Եթե ես ուզում եմ սովորելու գնալ, ուրեմն պետք ա զարգացած երկիր գնամ. իրանք մեզնից իրանց ձեռքբերումներով մի քանի տարի առաջ են: Պետք ա սովորել, իրանցից էդ փորձը ձեռք բերել, գալ, Հայաստանում օգտագործել»:

Արական սեռի հարցված, 19-23 տ., Վաղարշապատ

«...Համենայն դեպս, ես էսպես եմ գտնում, որ մեր գիտական մակարդակը... Չգիտեմ, ես եվրոպանետ չեմ, բայց եվրոպական գիտական մակարդակից ցածր ա»:

Արական սեռի հարցված, 19-23 տ., Գորիս

- **Օրենքի գերակայությամբ կառավարվող երկրում ապրելու շարժառիթ** կամ «Եվրոպան օրենքի երկիր է» ընկալում:

Նախորդներից ավելի քիչ տարածված շարժառիթների շարքին է դասվում մարդու իրավունքների պաշտպանվածության և օրենքի գերակայությամբ առաջնորդվող երկրում ապրել ցանկանալու շարժառիթը: Որպես միգրացիոն հակվածության հիմնավորում ներկայացնելիս երիտասարդներն այս հանգամանքով պայմանավորված հայաստանյան իրավիճակը նույնպես հակադրում են արևմտյան երկրների՝ տրամագծորեն հակադիր իրավիճակին: Այսպես.

Արական. «...եթե ուզում ես մի բան անել, չես կարողանում, հարկայինը կանգնում է գլխիդ ու այսպես-այնպես... և այլն: Իսկ Եվրոպայում բարեկամներս են ապրում, գոհ են, ու այնտեղ դու քո իրավունքները կարողանում ես պաշտպանել, դիմել թեկուզ դատարան, թեկուզ... իրենք քո իրավունքը երբեք չեն ոտնահարի...»:

Արական. «Օրենքի երկիր է...»:

**19-23 տ., Երևան
Մեջբերումներ Ֆե քննարկումներից**

- **Սոցիալական արդարությունը որպես շարժառիթ** կամ «այնտեղ մարդուն գնահատում են ըստ արժանվույն» ընկալում:

Նախորդ շարժառիթների հետ սերտորեն կապված է սոցիալական արդարության պահանջմունքի շարժառիթը: Երիտասարդների կողմից մասնավորապես շեշտադրվում են աշխատողին աշխատաշուկայում ըստ արժանվույն գնահատելու, սոցիալական մոբիլության մերիտոկրատական հիմքերի հանգամանքները: Այսինքն առկա է ընկալում, որի համաձայն արևմտյան երկրներում մասնագիտական առաջընթացը տեղի է ունենում ըստ անձի որակավորման, աշխատանքով էլ ապահովվում և բարեկեցության են հասնում արժանիները (ի հակադրություն հայաստանյան իրականության, որտեղ որպես առաջընթացի հիմնական գործոն է ընկալվում «ծանոթ» ունենալը): Այսպես.

«Խելացի մարդն էնտեղ առաջ ա գնում, իսկ մեր Հայաստանում ընդհանրապես...»:

Իգական սեռի հարցված, 19-23 տ., Մեղրաշեն

«...աշխատելը ընդեղ ավելի հեշտ ա, քո կատարած աշխատանքի համար քեզ գնահատում են, իսկ ստեղ օրը 12 ժամ աշխատում ես, քեզ կարող ա տան 3000 դրամ աշխատավարձ, իսկ ընդեղ էտ 12 ժամի համար քեզ ահագին կվճարեն: Էն-քան, որ դու կկարողանաս ապրել սովորական, իսկ ստեղ... 4 տարի սովորում ես, էտքան գումար ես վճարում, հետո գնում ես... կներեք, բայց համբալություն ես անում ու քեզ չեն գնահատում... Իսկ եթե դու գնաս, ուրիշ տեղ սովորես, աշխատես քո մասնագիտությամբ կամ թեկուզ քո մասնագիտությամբ էլ չէ, քեզ կգնահատեն որտեղից էլ որ լինես...»:

Իգական սեռի հարցված, 19-23 տ., Երևան

- **Բարեկեցության բարձր մակարդակը որպես շարժառիթ** կամ «այն երկիրը լայն հնարավորությունների երկիր է» ընկալում:

Ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ նկատելի էր երիտասարդների կողմից արևմտյան երկրները որպես անսահմանափակ բարիքների երկրներ նկարագրելը: Բարիքների դերում հանդես են գալիս մասնագիտական ինքնաարտահայտման լայն հեռանկարները, բարձր վարձատրվող աշխատանքը, կենցաղային բարվոք պայմանները, զարգացած ենթակառուցվածքները, ժամանցի կազմակերպման մեծ հնարավորությունները: Այսպես.

Արական. «Լայն հնարավորությունների երկիր ա...»:

- Ի՞նչ առումով:

Արական. «Ամեն: Թե ուսման, թե աշխատանքի, թե սպորտի... ամեն, թե կյանքը վայելելու»:

19-23 տ., Երևան

Իգական. «...էնտեղի ավլող-թափողը ըստեի իրավաբանի փողն ա ստանում»:

24-30 տ., Երևան

Մեջբերումներ Ֆև քննարկումներից

Արտասահմանում ավելի շատ կյանք կա, քան Երևանում: Գիշերը՝ ժամը 3-ին, զարթնում ես, նույն աշխուժությունն է»:

Իգական սեռի հարցված, 16-18 տ., Իջևան

Քննարկումների ժամանակ արևմտյան երկրները երիտասարդների կողմից բնութագրվել են նաև որպես «սոցիալական հավասարության» ու «առանց խավերի» երկրներ: Այսպես.

Իգական. «Իմ տալն ամուսնացել է Հոլանդիայում, երեք տարի է այնտեղ է, գոհ է, որ այնտեղ չկան հարուստ, աղքատ, բոլորը հավասար են: ...հարուստ, աղքատ խավեր գոյություն չունեն...»:

24-30 տ., Երևան

Մեջբերում Ֆև քննարկումներից

• **Հայաստանում առկա մթնոլորտը՝ որպես մղող գործոն**

Ֆոկուսմբային քննարկումների արդյունքում պարզ է դարձել, որ արտերկիր մեկնելու հարցում երիտասարդների որոշ մասի համար պատճառ են հանդիսանում հայաստանյան հասարակությունում առկա մթնոլորտը, բարձրորդ: Վերջիններիս արտերկրում գրավում է «ազատ մթնոլորտը», ինչի շնորհիվ երիտասարդների շրջանում ձևավորվում է այն ընկալումը, թե արևմտյան երկրներն առավել «քիչ հոգսեր» և «թեթև կյանք» են ապահովում: Այսպես.

Իգական. «Դե, հետամնաց է հայ ազգը»:

- Ինչո՞վ է հետամնաց:

Իգական. «Ամեն ինչով, մտածելակերպով... Ժողովուրդը ստեղ ապրում ա կողքինին գոհացնելու, կողքինին ինչ-որ բան ապացուցելու համար, շատ հաճախ ինքը դժգոհ ա մնում իրա կյանքից: Իսկ ընդեղ, ես տեսնում եմ, մարդը ապրում ա իրա համար, իրան էդ հարմար ա, ու վերջ: Հետո՞ զարգացած են մտածելակերպով, ավելի առաջ գնացած են, հետո՞ ֆինանսապես ավելի ապահով են, քան մեր երկրում»:

19-23 տ., Մեղրաշեն




Իզական. «Ապրելու նպատակով թեկուզ կուզենամ գնամ, որովհետև այնտեղ կյանքն ավելի թեթև է, մարդիկ այստեղի մնան չեն մտածում, մտածելակերպն էլ է տարբեր, որ ամենքն ապրում են իրենց կյանքով, ուրիշի հետևից չեն խոսում, չեն բանբասում...»:

**19-23 տ., Երևան
Մեջբերումներ Ֆև քննարկումներից**

Հետաքրքիր է, որ այս գործոնն առավել նշանակալի է իզական սեռի հարցվածների պարագայում:

Քանակական հարցման ժամանակ արտերկիր մեկնելու ցանկություն հայտնած երիտասարդներին հարց է ուղղվել այն մասին, թե արդյոք նրանք առաջիկա 3 տարվա ընթացքում արտերկիր մեկնելու պլաններ ունեն: Երիտասարդների 43,2%-ը (իսկ ընդհանուր հարցվածների 41,8%-ը) նշել է, որ այդպիսի պլաններ ունի (Գծապատկեր 6.2):


6.2. «Պլանավորում եք արդյո՞ք Հայաստանից դուրս մեկնել առաջիկա 3 տարիների ընթացքում» հարցի պատասխանները



Հայաստանից մեկնելու մտադրություններ ունեցողները, ըստ տարիքի և բնակավայրի, ներկայացված են Հավելված 6-ում (Աղյուսակներ 6.7-6.8):

Մեկնելու հստակ պլաններ ունեցողները գնահատել են մեկնելուց հետո Հայաստան վերադառնալու հավանականությունը: Արդյունքները ցույց են տալիս, որ արտերկիր մեկնելու պլաններ ունեցողների 30,2%-ը մեկնելուց հետո չի վերադառնա Հայաստան: Այդպիսի երիտասարդների կազմում են ընդհանուր հարցվածների 12,6%-ը: Այսինքն 77 երիտասարդության 12,6%-ն արտերկիր մեկնելուց հետո չէր ցանկանա վերադառնալ Հայաստան (Գծապատկեր 6.3):

☑ 6.3. «Եթե մեկնելուց հետո ընտրելիս լինեիք՝ վերադառնալ Հայաստան, թե մնալ արտերկրում, որ տարբերակն առավել կնախընտրեի՞ք» հարցի պատասխանները



Քանակական հարցման համաձայն՝ չվերադառնալուն առավել հակված են արական սեռի, քան իգական սեռի հարցվածները, 24-ից 30 տարիքային խմբի երիտասարդները, ինչպես նաև՝ ավելի շատ երևանաբնակները, քան մարզերի երիտասարդները: Այս հարցի պատասխանները, ըստ հարցվածների սեռի, տարիքի և բնակության վայրի, ներկայացված են Հավելված 6-ում (Աղյուսակներ 6.9-6.11):

Արտերկիր մեկնելուց հետո Հայաստան վերադառնալուն վերաբերող հարցի շուրջ ծավալված **ֆոկուսխմբային քննարկումները** ցույց են տալիս, որ Հայաստանը լքել ցանկացողների մեծ մասը ցանկանում է հետ վերադառնալ Հայաստան: Այս դեպքում նույնպես վերադառնալու մտադրություններն առավել գերակշռում են հետևյալ խմբերի հարցվածների շրջանում.

- 16-ից 18 տարեկան երիտասարդներ,
- իգական սեռի և մարզերում բնակվող երիտասարդներ:

Նշված խմբերի երիտասարդներն արտերկիր մեկնելը դիտարկում են որպես կարճաժամկետ հեռանկարում *որոշակի խնդիր լուծելու միջոց*: Եթե վաղ տարիքի երիտասարդների պարագայում այդ խնդիրը որակյալ կրթություն ստանալն է, ապա առավել հասուն տարիքի, հիմնականում իգական սեռի և մարզաբնակ երիտասարդներն իրենց առջև արտերկրում ժամանակավորապես բնակվելու և աշխատելով ֆինանսական միջոցներ կուտակելու խնդիր են դնում, որի լուծումը Հայաստան վերադառնալու և բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորություն կտա: Այսպես.

☰ «...ես հույս ունեն, որ էստեղ կփոխվի ամեն ինչ, ու էս վատ վիճակը չի լինի... Այլ երկրում, ես չգիտեմ, իմ երեխաները ինչ վիճակում կլինեն: Ուզում եմ աշխատեմ, որ շատ փողով գամ, իմ ուզածին հասնեմ»:

Իգական սեռի հարցված, 24-30 տ., Երևան

16-ից 18 տարեկան երիտասարդների՝ վերադառնալու ձգտումը մեծամասամբ պայմանավորված է Հայաստանում իրենց համար ցանկալի ապագա ունենալու լավատեսական տրամադրվածությամբ:

Իգական սեռի և մասնավորապես մարզերի երիտասարդների վերադառնալու ձգտումը մեծամասամբ հիմնավորվում է այնպիսի զգացմունքային գործոնով, ինչպիսին է հայրենի հողի, ջրի, հարազատների հետ կապվածությունը: Այսպես.

☰ **Արական.** «Աշխատելու համար ժամանակավոր կգնամ, իհարկե՝ հանուն ընտանիքի, բայց ես ամուր կառչած եմ իմ հողին, ես սիրում եմ իմ հողը ու ջուրը, ու այսպիսի երկիր չկա աշխարհում...»:

24-30 տ., Երևան

☰ **Արական.** «...ինչքան էլ արտասահմանի իշխանությունները լավը լինեն, մերը չեն: Մեր հողերը ստեղ են, ...ամեն մեկս մեր թաղամասում, մեր տանը ամեն մի բանի հետ կապված հուշ ունի, իսկ արտասահմանում, ինչքան ասեմք, լավ ուզում ա լինի՝ տենց բան չկա»:

19-23 տ., Երևան

☰ **Արական.** «Իսկ եթե չե՞ս կարում Հայաստանում քո ապագան, ոնց որ կարգն ա, ապահովես»:

19-23 տ., Երևան

☰ **Արական.** «Կարաս զնաս ընտեղ ժամանակավորապես...»:

19-23 տ., Երևան

Մեջբերումներ Ֆե քննարկումներից

Երիտասարդների մեծ մասի դատողությունները վկայում են այն մասին, որ առկա է, այսպես կոչված, «**հարկադրված» միգրացիոն տրամադրվածություն**. այսինքն՝ արտերկիր մեկնելու մտադրությունը պայմանավորված է ոչ թե հայրենիքը լքելու ցանկությամբ, այլ հայրենիքում պահանջմունքները պատշաճ կերպով բավարարելու սահմանափակ հնարավորություններով: Այսպես.

☰ «...եթե կարողանաս նորմալ ապրել, նորմալ վայելել կյանքը... ոչ մեկն էլ հաստատ չի ուզեմա... Այստեղից լավ տեղ չկա, բայց այսօրվա դրությամբ ոչ մի բան թեզ չի բավարարում, որ դու կարողանաս լավ ապրել, երջանիկ...»:

Արական սեռի հարցված, 24-30 տ., Երևան

☰ «...Դե՛, եթե այստեղ հնարավորությունները, սաղ օրենքները, որ դրսում են գործում, ապրելակերպը այստեղ լինեն, հաստատ չեմ ուզի: Բայց դժվար էլ լինի այստեղ...»:

Արական սեռի հարցված, 24-30 տ., Երևան

Ինչպես պարզ դարձավ և՛ քանակական, և՛ որակական հարցազրույցների արդյունքներից, արտերկիր մեկնել չցանկացող երիտասարդները փոքրամասնություն են կազմում: Ֆուկուս խմբերի քննարկումների ժամանակ հնարավոր է եղել վեր հանել այդ երիտասարդների հիմնավորումները: Ըստ այդմ՝ նրանք արտերկիր մեկնելու ցանկության բացակայությունը հիմնավորել են հետևյալ 2 գործոններով.

- **զգացմունքային կապվածություն** հայրենիքի հետ.

☰ **Արական.** «Չէ՛, ես չեմ ուզում Չայաստանից գնալ, ճիշտ է, շատ տեղեր են եղել, շատ են տեսել, ու պայմանները շատ ավելի լավն են, քան մեր Չայաստանում, ամեն ինչը՝ սկսած մարդկանց ապրելակերպից, աշխատանքից, իրենց առօրյայից, բայց ես չեմ ուզում գնալ, ես ինչ-որ չափով պատրիոտ եմ ու սիրում եմ Չայաստանը, առավել ևս՝ ես ինձ գտել եմ Չայաստանում, կարող եմ հանգիստ ապրել»:

24-30 տ., Երևան

☰ **Արական.** «...ու, կներեք, ժամը պայմաններում պիտի մնա հայը, ես չէ՛, հայը, բա՞՞ ով պիտի պահի այս հողը, եթե բոլորը մտածեն, որ պիտի գնան»:

24-30 տ., Երևան

Սեջբերումներ Ֆև քննարկումներից

- այլ երկրում առկա **ճնշվածության զգացում**՝ կապված ոչ տեղաբնակ լինելու և դրանից բխող ֆորմալ և ոչ ֆորմալ սահմանափակումների հետ:

Այլ երկրում բնակվելիս ճնշվածության զգացում առավելապես առաջացնում են այդ երկրում առկա կարծրատիպերը, միգրանտներին պիտակավորելու, խտրական վերաբերմունք ցուցաբերելու երևույթները: Այսպես.

☰ **Արական.** «Որովհետև էմտեղ իրանք ինձ համարելու են ինչ-որ օտարերկրացի, ինձ միշտ վատ են վերաբերվելու, իսկ ինձ ստեղ չեն կարա վատ վերաբերվեն, որովհետև հայ ենք...»:

24-30 տ., Երևան

☰ **Իգական.** «...իսկ Ռուսաստանում հենց Կովկասի ժողովուրդներին չեն սիրում, չեն ընդունում»:

19-23 տ., Վաղարշապատ

Արական. «Իմ համար իմ հողն ու ջուրը ավելի կարևոր էին, ստեղ ավելի կարևոր էր ամեն ինչը, թեկուզ շատ չնչին չափով կազմակերպես էդ աշխատանքը, բայց հաստատ ավելի լավ ա՛ ստեղ կազմակերպես, քան թե ընտեղ»:

- Ինչո՞ւ:

Արական. «Որովհետև ընտեղ միշտ երկրորդ պլան ես...»:

**24-30 տ., Երևան
Մեջբերումներ Ֆև քննարկումներից**

«...միշտ երկրորդ սորտ ես»:

Իգական սեռի հարցված, 19-23 տ., Մրգաշեն

«Էսօր Ռուսաստանում ամծնագիր չես ունենում, վախենում ես քայլել... կամ մազերիդ գույնը պիտի փոխես, որ ամմիջապես չիմանան»:

Իգական սեռի հարցված, 24-30 տ., Երևան

Ընդհանրացնելով կարելի է մշել, որ հայաստանյան երիտասարդների գերակշիռ մասն արտերկիր մեկնելու ցանկություն ունի՝ անկախ Հայաստանում աշխատանք ունենալու կամ չունենալու փաստից: Արտերկիր մեկնելու ցանկության հիմնական շարժառիթն այնտեղ աշխատանք գտնելն է: Ընդ որում՝ երիտասարդների շրջանում տարածված է այն ընկալումը, թե այնտեղ աշխատանք գտնելու հնարավորություններն ավելի մեծ են:

Ընդհանուր առմամբ պարզ է դարձել, որ երիտասարդների միգրացիոն մտադրությունները կրում են հարկադրված բնույթ: Այս իրողությունը պայմանավորված է Հայաստանում երիտասարդների համար կենսական պահանջմունքների բավարարման սահմանափակ հնարավորությունների ընկալմամբ:

Պետություն, արտաֆին ֆադաֆականություն և ֆադաֆական ներգրավվածություն

Նախորդ բաժիններում ներկայացրել ենք երիտասարդների կենսագործունեության կազմակերպման առանձնահատկությունները սոցիալական առանցքային ինստիտուտներում՝ երիտասարդների ներգրավվածության իրականացման համար հաղորդակցությունների միկրոմիջավայր հանդիսացող կոնկրետ հաստատություններում (դպրոց, բուհ, աշխատավայր և այլն): Երիտասարդների վարքը, ընկալումները և ձգտումները բացատրելու համար ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նրանց կենսագործունեության մակրոմիջավայրի, այն է՝ պետության նկատմամբ վերջիններիս տրամադրությունների ուսումնասիրությունը:

Հետազոտության շրջանակում (տեղեկատվության հավաքման քանակական և որակական մեթոդներով) ուսումնասիրվել են պետությանն առնչվող այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ պետության գործառույթների ընկալումը, ներկայումս Հայաստանի Հանրապետության կողմից այդ գործառույթների իրականացման աստիճանը, պետականության պահպանման գրավականների ընկալումները, բանակի նկատմամբ տրամադրվածությունը, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գնահատականները, ինչպես նաև քաղաքացիական մասնակցության ներկայիս մակարդակը, ձևերը, «իսկական քաղաքացու» ընկալումները:

7.1. Պետության և Հայաստանի Հանրապետության ընկալումները, պետականության պահպանման գործոնները

Պետության նկատմամբ սոցիալական տրամադրությունների ուղղվածության վրա էական ազդեցություն ունեն այն գործոնները, թե ինչպես են հասարակության անդամներն ընկալում այդ պետության գործառույթները և ինչպես են գնահատում դրանց իրականացման մակարդակը:

Այս հարցերի վերաբերյալ տեղեկություններ են հավաքվել ֆոկլուսխմբային քննարկումների միջոցով:

Ստորև կներկայացնենք երիտասարդների կողմից պետությանը վերագրված հիմնական գործառույթները՝ ըստ դրանց վերաբերյալ հնչած կարծիքների տարածվածության նվազման:

- Քննարկումներին մասնակցած երիտասարդների շրջանում պետությանը վերագրվող ամենատարածված գործառույթն **աշխատատեղերի և քաղաքացիների կենսամակարդակի ապահովումն է**: Երիտասարդների կարծիքներն այս հարցի շուրջ համասեռ էին և կախված չէին նրանց սեռից, տարիքից, կրթությունից ու բնակության վայրից: Այսպես.

Իգական. «...ամեն ինչ նենց պիտի անի, որ ժողովուրդը, որ մարդը չգնան արտասահման, Ռուսաստան»:

24-30 տ., Երևան

Արական. «Աշխատանքի պայմաններ ստեղծեն զոնե...»:

16-18 տ., Իջևան

Արական. «...ստաբիլացնի մեր աշխատավարձերի ու ծախսերի բալանսը: Եթե մենք ստանում ենք էսքան աշխատավարձ, մեր ծախսերը զոնե էսքան լինի, որ մնացածը կարողանանք...»:

24-30 տ., Երևան

Իգական. «Իրա քաղաքացին ոչ թե գոյատևի, այլ ապրի»:

24-30 տ., Խաչթառակ
Մեջբերումներ Ֆև քննարկումներից

- Գրեթե բոլոր 12 խմբերում էլ երիտասարդները պետությանը վերագրել են **հավասարության ապահովման** գործառույթ: Այս դեպքում խոսքը մեծամասամբ տնտեսական հավասարության մասին է: Այսպես.

Արական. «Ասենք՝ վերցնենք նուռը: Իրա միջի հատիկները, ասենք, ժողովուրդն ա, նուռը մի դիրքով մի հատիկներին սնունդ ավելի շատ է հասնում... իսկ պետք ա պետության մի հատ նենց դեկավար բերեն, որ ամեն ինչ հավասար բաժանի բոլորին»:

19-23 տ., Վաղարշապատ

Իգական. «Մարդկանց հավասարության խնդրի մասին եմ ուզում խոսել, որ մարդիկ հավասար չեն, բայց պետությունը պարտավոր ա իրանց հավասարությունը ապահովի»:

16-18 տ., Երևան

Արական. «...դրա համար պետք ա, որ մեր նախարարներն էլ նույն հեծանվով գնան գործի, ոնց որ արտասահմանում»:

24-30 տ., Խաչքառակ
Մեջբերումներ Ֆև քննարկումներից

- Քննարկման մասնակիցների մեծամասնության կարծիքով՝ պետությունը պետք է **օրենքներ ընդունի և ապահովի դրանց կիրառումը**: Հատկապես շեշտադրվում էր պետության կողմից օրենքների պահպանման, դրանց առջև բոլոր քաղաքացիների հավասարության ապահովման կարևորությունը: Այսպես.

Արական. «Օրենքը պետք է լինի բոլորի համար»:

24-30 տ., Երևան

Արական. «...պիտի լինի հավասարություն ամենակարևորը, «Զիպ» քշողն ու «Մոսկվիչ» քշողը պիտի լինեն հավասար: Այսօր տեսախցիկներ են տեղադրել, բայց այն հաստավիզն ու սափրագլուխը էլի արագությունը գերազանցելու են, բայց գումար չի վճարվում...»:

24-30 տ., Երևան
Մեջբերումներ Ֆև քննարկումներից

- Երիտասարդների զգալի մասը շեշտադրում էր պետության կողմից **շուկայի կարգավորման, տնտեսավարման նպաստավոր պայմանների ստեղծման գործառույթը**:

Երիտասարդները պետության կողմից ակնկալում են շուկայում կատարելիք այնպիսի միջամտություններ, ինչպիսիք են՝ մենաշնորհների կանխումը, գնաճի վերահսկողությունը, աշխատավարձերի և շուկայական գների միջև համապատասխանության պահպանումը, մանր և միջին բիզնեսի համար հարկային բարենպաստ քաղաքականությունը: Այսպես.

Արական. «...կոմունալ վճարումները, հարկերը, սպասարկումը պտի ստաբիլացվեն, դրանք պիտի լինեն են մակարդակի վրա, ինչ որ մարդը ստանում ա, չի կարա ստանա 50 հազար դրամ, բայց ծախսի 150 հազար դրամ»:

24-30 տ., Երևան

Արական. «Պիտի մոնոպոլիան վերացնի... լրիվին էլ հնարավորություն տրվի, որ մարդիկ ամեն ինչ էլ փորձեն: Եթե հասարակ գնում ես, ուզում ես՝ ապելսին բերես, ստեղ ծախես, չեն թողնում»:

**24-30 տ., Խաչթառակ
Մեջբերումներ Ֆև քննարկումներից**

Նշենք, որ օրենքի գերակայության հետ կապված իրավիճակի ընկալումը գնահատվել է նաև քանակական հարցման շրջանակում: Երիտասարդները բացարձակապես համաձայն չեն այն դատողության հետ, ըստ որի՝ «օրենքները ԳՂ բոլոր քաղաքացիների նկատմամբ գործում են հավասար կերպով»: Այս դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմել է 1,7՝ առավելագույն 4-ից, հարցվածների 80,4%-ը համաձայն չի եղել այս դատողության հետ:

Օրենքի գերակայության վերաբերյալ դիրքորոշումների մասին անուղակիորեն կարող է վկայել ԳՂ քաղաքացիների վստահության աստիճանը օրենսդիր և օրենքի կիրառումն ապահովող մարմինների նկատմամբ: 2011թ. իրականացված Սոցիալական համախմբվածության հետազոտության տվյալների համաձայն՝ ԳՂ Ազգային ժողովին այս կամ այն չափով վստահում է բնակչության 32%-ը, ոստիկանությանը՝ 38%-ը, իսկ դատական համակարգին՝ 26%-ը⁶⁶:

- Վերը նշվածներից ավելի փոքր հաճախականությամբ երիտասարդները պետությանը վերագրում են այնպիսի մասնավոր գործառույթներ, ինչպիսիք են, օրինակ, կոռուպցիայի վերացումը, երթևեկության կարգավորումը, բնության պահպանությունը, մաքրության ապահովումը և այլն:
- Առավել հազվադեպ հնչել են նաև պետության կողմից քաղաքացիների և զինծառայողների անվտանգության ապահովմանն ու երկրի զարգացմանը վերաբերող կարծիքներ:

Հայաստանի Հանրապետության նկատմամբ առկա տրամադրությունները մեծամասամբ արտահայտվում էին վերը թվարկված **գործառույթների իրականացման աստիճանի** տեսանկյունից: Երիտասարդների ճնշող մեծամասնությունը թերացումներ է արձանագրում նշված գործառույթների իրականացման ժամանակ՝ վկայակոչելով հասարակական կյանքում առկա այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ *գործազրկությունը, մենաշնորհային տնտեսությունը, կոռուպցիան, քաղաքացիների անհավասար պատասխանատվությունը*

66 Survey on the level of Social Cohesion, implemented by CRRC, funded by UNDP, Yerevan, 2011.

օրենքի առջև, նկատելի չափերի հասնող սոցիալական անհավասարությունը և այլն: Այս անցանկալի երևույթների առկայությունը հիմնավորվում է անձնական և անմիջական շրջապատի փորձառությամբ: Ստորև ներկայացնում ենք երիտասարդների որոշ մեկնաբանություններ՝ ՀՀ կողմից ակնկալվող գործառույթների իրականացման ժամանակ առկա թերացումների վերաբերյալ:

Իգալյան. «...որ ամեն ինչը իրենցով են անում, պետք ա վերցնեն, հավասար բաժանեն, հիմա ամեն ինչը մեծահարուստների ձեռքն է, դու մոտենում ես, զենք են բարձրացնում վրադ, հասարակ մարդ ես...»:

Իգալյան. «Պետք է վերացնել այդ հարուստներին, մեծահարուստներին, որ...»:

24-30 տ., Երևան

Արալյան. «Ենթադրենք՝ մի մարդը մի հատ խանութ է բացել, չորս-հինգ հոգու աշխատատեղ է ստեղծել, չէ՞: Ինքը եղ խանութի համարյա կես գինը հարկ կուղիս»:

**24-30 տ., Գյումրի
Մեջբերումներ Ֆև քննարկումներից**

Նկատելի է դառնում, որ հասարակությունում առկա հիմնախնդիրների բարձրաձայնման ժամանակ պետությունը նույնացվում է իշխանությունների, Կառավարության հետ, որոնք էլ դիտարկվում են որպես նշված խնդիրների լուծման համար պատասխանատու սուբյեկտներ:

Որոշ խմբերում էլ հնչել են այնպիսի կարծիքներ, թե պետությունը չափից ավելի շատ է ապավինում մասնավոր հատվածին, հատկապես՝ աշխատատեղերի ստեղծման խնդրի լուծման գործում: Այսպես.

Իգալյան. «...բայց Հայաստանը պետական չի, սեփական է, հիմա պետական ոչինչ չկա, բոլորը սեփականություն են...»:

**24-30 տ., Երևան
Մեջբերում Ֆև քննարկումներից**

ՀՀ-ում վերը նշված հիմնախնդիրների պատճառների մասին խոսելիս երիտասարդները վկայակոչում էին ինչպես Կառավարության կողմից սեփական շահերի վրա կենտրոնացվածությունը, այնպես էլ ՀՀ-ի՝ համեմատաբար երիտասարդ պետություն լինելը: Վերջին հանգամանքը շեշտադրվում էր հատկապես երկարամյա պատմություն ունեցող պետությունների հետ զուգահեռներ անցկացնելիս: Այսպես.

Իգալյան. «Մեր մոտ եղ պաշտոնի կռիվը շատ-շատ է: Եթե շատ մեծահարուստները իրանց պաշտոնի, իրանց տանիքի համար չպայքարեն, այլ գնան Ազգային ժողով, իրենց համար, ժողովրդի համար նորմալ օրենք ընդունեն, ոչ թե իրենք իրանց համար տանիք ապահովեն, ամեն ինչն էլ նորմալ կլնի»:

24-30 տ., Գյումրի

Արական. «Օրինակ Հայաստանը՝ 20 տարվա պետություն, Ֆրանսիան՝ 200 տարվա, ինչու Ֆրանսիայում ավելի արդար չպիտի լինի, քան Հայաստանում...»:

16-18 տ., Խնձորեսկ Մեջբերումներ Ֆես քննարկումներից

ՀՀ-ի՝ երիտասարդ պետություն լինելու փաստի վկայակոչումը որոշ դեպքերում ամկա ձեռքբերումները գնահատելու և ապագայի նկատմամբ լավատեսորեն տրամադրվելու հիմք է հանդիսանում: Այսպես.

Արական. «Ես էսպես եմ մտածում. Հայաստանի պետությունը քաղաքացիների համար ապահովել ա միևնույն 80%, արել ա էն, ինչը պետք ա ամեր յուրաքանչյուր պետություն»:

Իգական. «...որովհետև մենք նորանկախ պետություն ենք»:

19-23 տ., Մեղրաշեն

Արական. «...մենակ էդ աշխատատեղերի խնդիրն է, որ պետությունը... Ես մտածում եմ, որ ժամանակի առումով դեռ նոր է»:

Արական. «Շատ բաներ զրոյից սկսած պետություն է, պատերազմը շահած պետություն է, էդ ինչի հաշվի չեք առնում...»:

24-30 տ., Գյումրի Մեջբերումներ Ֆես քննարկումներից

Ֆես քննարկումների արդյունքներից նկատելի է դառնում, որ պետության նկատմամբ լավատեսական տրամադրվածություններ, ինչպես նաև դրա հետ ինքնանույնականացման հավակնություններ առավելապես առկա են վաղ տարիքի երիտասարդների շրջանում: Վերջիններիս որոշ հատվածն ունի «պետությունը մենք ենք» ընկալումը, այսինքն՝ որպես պետության հիմնարար բաղկացուցիչ են ընկալվում այնտեղ ապրող անհատները, ովքեր իրենց հերթին որոշակի ներդրում պետք է ունենան պետության զարգացման գործընթացում: Ստորև ներկայացնում ենք հատվածներ Ֆես մասնակից երիտասարդների՝ այս թեմայի շուրջ կայացած քննարկումներից.

Իգական. «Պետությունը հենց մենք ենք...»:

Արական. «Ծիշտ ա ասում»:

Իգական. «Հա՛, համ էլ քանի տարվա պետություն ենք, որ...»:

Իգական. «Պետությունը անձրևանոց ա, որ ժողովուրդը գալիս ա էդ անձրևանոցի տակ»:

Իգական. «Էդ ժողովուրդը պտի պահպանի էդ անձրևանոցը»:

Արական. «Պիտի հարգի իրա դեկավարին»:

16-18 տ., Տանձուտ

Արական. «Պետությունը ժողովուրդն ա էլի... Պետությունն ասելով մենք հիմնականում հասկանում ենք իշխանություն, բայց պետությունը մենք ենք, մենք պտի էտ ամեն ինչի մասին մտածենք»:

**19-23 տ., Գորիս
Մեջբերումներ Ֆես քննարկումներից**

Ֆոկուս խմբերի ընթացքում քննարկվել է նաև ՀՀ պետականության հարցը. մասնավորապես փորձ է արվել հասկանալու, թե ըստ երիտասարդների՝ որն է **ՀՀ պետականության պահպանման գրավականը**: (Այս հարցի վերաբերյալ ստացված տվյալները կներկայացնենք ստորև):

- Երիտասարդների գերակշիռ մասը ՀՀ պետականության պահպանման ամենաառաջնային գրավական է համարում **համախմբվածությունը**: Ընդ որում՝ այս հասկացությունը մեկնաբանվում է բազմազան կերպով. մի դեպքում այն ընկալվում է որպես որոշակի գաղափարների շուրջ համախմբում (այդպիսի գաղափարների դերում հանդես են գալիս *ազատությունը, անկախությունը*), մյուս դեպքում՝ որպես հասարակության արդիական խնդիրների լուծման վերաբերյալ համատեղ, մասնակցային որոշումների կայացում: Այսպես.

Իգական. «Պատմությունը ցույց է տվել մեզ, որ առանձին, առանց համախմբման ոչ մի բանի չենք հասնի»:

16-18 տ., Իջևան

Արական. «Համախմբվածություն պետք ա լինի... Եթե ինչ-որ հարց ա լինում, բոլորը պետք ա նստեն, մտածեն, ասեն՝ էսի ստեղծից վերցնեն, դնեն ըստեղ... Պա բոլորով պետք ա անեն, այլ ոչ թե, ասենք, մեկը գա, ասի՝ ստեղ եմ դնում, իսկ մի 10 հոգի ասի՝ խի տենց էղավ»:

**16-18 տ., Երևան
Մեջբերումներ Ֆես քննարկումներից**

Հարցված երիտասարդների դիտարկմամբ՝ ներկայումս համախմբվածության մակարդակը ցածր է, ինչը նրանք բացատրում են սեփական շահերի վրա հասարակության կենտրոնացվածությամբ, երբեմն նաև սոցիալական անհավասարությամբ, համապատասխան գիտակցության և կրթական մակարդակի բացակայությամբ: Այսպես.

Իգական. «...որովհետև մեծահարուստները չեն ցանկանում, որ իրենցից ցածր խավի հետ շփվեն կամ նրանց հետ ինչ-որ սեղան մստեն, դրա համար համախմբվածություն չկա»:


16-18 տ., Խնձորեսկ

- Իսկ ինչո՞ւ համախմբված չենք:

Արական. «Որովհետև կիսազրազետ ենք»:

**19-23 տ., Վաղարշապատ
Մեջբերումներ Ֆես քննարկումներից**


- Ըստ նշվելու հաճախականության՝ հաջորդ տեղում երիտասարդների կողմից որպես պետության պահպանման գրավական է համարվել **սեփական շահերից վեր կանգնող և կրթված Կառավարությունը**: Երիտասարդները հավասարապես շեշտադրում են թե՛ առաջին, թե՛ երկրորդ հատկանիշը: Այսպես.

 - **Ըստ Ձեզ՝ ի՞նչ է անհրաժեշտ ՀՀ պետականությունը պահպանելու համար: Արական.** «Նորմալ աշխատող Կառավարություն, խելքը գլխին մարդիկ»:

19-23 տ., Երևան


 **Իգական.** «Խելացի կադրեր»:

19-23 տ., Մեղրաշեն

 **Իգական.** «...որ կարողանան ճիշտ դեկավարել էս երկիրը, ժողովրդին ճիշտ դեկավարեն»:

19-23 տ., Մեղրաշեն
Մեջբերումներ Ֆև քննարկումներից

- Երիտասարդների կողմից որպես պետականության պահպանման գրավական առավել քիչ նշվել են հետևյալ գործոնները՝ **կրոնը, լեզուն, ազգային ավանդույթների և մշակույթի պահպանումը, ինչպես նաև հասարակության անդամների կրթվածության բարձր մակարդակը**: Մշակույթի պահպանման մասին խոսելիս մտահոգություն է հայտնվել օտար մշակույթների ազդեցությունների վերաբերյալ: Այսպես.

 **Իգական.** «...ուրիշ հոսանքներին չտրվենք»:

- **Այդ ուրիշ հոսանքները որո՞նք են:**

Իգական. «Օրինակ, որ լսենք հայկական երաժշտություն... Ինչի՞ ենք Հայաստանում մենք ավելի բարձր դասում հզոր երկրներին...»:

Իգական. «Ավանդույթումները... պահպանենք»:

16-18 տ., Խնձորեսկ

 **Իգական.** «Քաղաքակիրթ ժողովուրդ ու մտավորականություն լինեն»:

19-23 տ., Վաղարշապատ
Մեջբերումներ Ֆև քննարկումներից

- Որոշ երիտասարդներ էլ պետականության պահպանման գործոն են համարել **հզոր տնտեսությունը**: Ընդ որում՝ առկա են տեսակետներ, ըստ որոնց՝ Հայաստանի տնտեսությունը հնարավոր է հզորացնել արտաքին ներդրումների շնորհիվ: Այսպես.

☰ - Պետության պահպանման համար ի՞նչ է պետք:

Արական. «Լավ տնտեսություն»:

- Ուրի՞շ...

Արական. «Հիմնարկների ստեղծում»:

24-30 տ., Գյումրի

☰ Իգական. «Արտասահմանցու կողմից ներդրում»:

24-30 տ., Երևան

Պետության հետ ինքնանույնականացման առումով որոշակի տվյալներ են ստացվել նաև քանակական հետազոտության շրջանակում: Մասնավորապես գնահատվել են երիտասարդների՝ ՀՀ քաղաքացի և հայ լինելու վերաբերյալ դիրքորոշումները: Այսպիսով՝ ՀՀ երիտասարդները մեծամասամբ հպարտության զգացում ունեն հայ և ՀՀ քաղաքացի լինելու կապակցությամբ: Այս թեմային առնչվող հարցերի պատասխանների միջին գնահատականները ներկայացված են Աղյուսակ 7.1-ում:

☰ 7.1. Քաղաքացիության և էթնիկության վերաբերյալ դիրքորոշումները⁶⁷

	«Ես հպարտ եմ իմ ազգությամբ» ⁶⁸	«Ես հպարտ եմ, որ ՀՀ քաղաքացի եմ»
Բոլոր հարցվածների միջին գնահատականը, որից՝	3,76	3,62
Արական	3,77	3,63
Իգական	3,76	3,62
16-18	3,77	3,64
19-23	3,73	3,62
24-30	3,78	3,63
Երևան	3,67	3,57
Մարզային քաղաք	3,75	3,59
Գյուղ	3,84	3,70

67 Դատողությունների հետ համաձայնությունը գնահատվել է 1-4 բալով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն եմ»:

68 Հարցվածների 97,8%-ը որպես իր էթնիկ խումբ համարում է հայ լինելը, ուստի հարցաթերթում տեղ գտած «ես հպարտ եմ իմ ազգությամբ» դատողությունը կարելի է վերագրել հայ լինելուն:


Ինչպես երևում է Աղյուսակ 7.1-ում ներկայացված գնահատականներից, երիտասարդներն առավել հպարտ են իրենց ազգային պատկանելիությամբ (3,76), քան քաղաքացիությամբ (3,62), թեև նշված 2 գնահատականներն էլ բավականին բարձր են և մոտեցնում են սանդղակի վերին շեմին: Նկատելի է նաև, որ տարբեր սեռի և տարիքի հարցվածների դիրքորոշումներում էական տարբերություններ չկան: Որոշակի տարբերություններ առկա են ըստ հարցվածների բնակավայրի. գյուղաբնակ երիտասարդների շրջանում ազգային և քաղաքացիական հպարտությունն ավելի բարձր է, քան քաղաքաբնակ և երևանաբնակ երիտասարդների շրջանում (Աղյուսակ 7.1):

7.1.1. Երիտասարդների դիրքորոշումները բանակի վերաբերյալ

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են երիտասարդների դիրքորոշումները ՀՀ ՁՈՒ-ում ծառայության վերաբերյալ: Այդ դիրքորոշումները ներկայացնելուց առաջ նշենք, որ բանակում ծառայել է հարցված արական սեռի ներկայացուցիչների 53,4%-ը: Բանակում չծառայածների շարքում մեծ տոկոս են կազմում 16-ից 18 (45,3%) և 19-ից 23 տարեկան երիտասարդները (33,9%): 24-ից 30 տարիքային խմբում բանակում չծառայած երիտասարդները կազմում են այդ տարիքային խմբի 18,9%-ը:

Բանակում ծառայության նկատմամբ տրամադրվածության մասին կարելի է դատել ըստ այն հարցին տրված պատասխաններից, թե ընտրության հնարավորության դեպքում որ տարբերակը կնախընտրեին երիտասարդները. ծառայել՝ ՀՀ բանակում, թե՞ ոչ: Նշենք, որ տվյալ հարցն առաջադրվել է ոչ միայն արական, այլև իգական սեռի հարցվածներին:

☑ 7.1. Բանակում ծառայելու պատրաստակամության աստիճանն ըստ հարցվածների սեռի («Եթե հնարավոր լիներ ընտրություն կատարել՝ ծառայել՝ ՀՀ բանակում, թե՞ ոչ, Դուք անձամբ ո՞ր տարբերակը կընտրեիք»)



Ինչպես երևում է Գծապատկեր 7.1-ից, ընտրության հնարավորության դեպքում բանակում ծառայելու պատրաստակամություն է հայտնում հարցվածների 43,3%-ը: Ընդ որում՝ նկատելի է, որ իգական սեռի հարցվածների պատրաստակամությունը մի փոքր ավելի բարձր է, քան արական սեռի հարցվածներինը (43,6%՝ արական սեռի հարցվածների 42,8%-ի համեմատ): Պետք է նկատել նաև, որ իգական սեռի հարցվածների պարագայում բանակում ծառայությունը ցանկալի է առավելապես այն դեպքում, եթե այն լինի *ոչ թե պարտադիր, այլ կամավոր*: Այս նախընտրության մասին են վկայում իգական սեռի հարցվածների պատասխաններն այն հարցին, որ Հայաստանում աղջիկները նույնպես պետք է ծառայեն բանակում: Այսպես՝ «իմ կարծիքով՝ Հայաստանում աղջիկները նույնպես պետք է ծառայեն բանակում» դատողության հետ չի համաձայնել հարցված իգական սեռի ներկայացուցիչների 63,1%-ը: Սիւնույն ժամանակ պետք է փաստել, որ այս դատողության հետ համաձայնողների տոկոսը զգալի է (26,4%): Հատկանշական է, որ բանակում աղջիկների ծառայության պարտադիր լինելու այլ-ընտրամիջի հետ համաձայն է արական սեռի հարցվածների ընդամենը 10,4%-ը, փոխարենը՝ տղաների 90%-ի համար այդ երևույթն անընդունելի է:

Արական սեռի հարցվածների շրջանում ծառայելու պատրաստակամության ոչ բարձր աստիճանը կարող է պայմանավորված լինել անձնական ծառայության բացասական փորձառությանը: Այս ենթադրությունը որոշակիորեն ամրապնդվում է բանակում ծառայած և չծառայած երիտասարդների դիրքորոշումները համեմատելիս (Աղյուսակ 7.2):

7.2. Արական սեռի ներկայացուցիչների՝ բանակում ծառայելու պատրաստակամությունն ըստ բանակում ծառայելու փորձառության

Ծառայել եք արդյո՞ք ՀՀ բանակում	Եթե հնարավոր լիներ ընտրություն կատարել՝ ծառայել՝ ՀՀ բանակում, թե՞ ոչ, Դուք անձամբ ո՞ր տարբերակը կընտրեիք					Ընդամենը
	Միանշանակ կծառայեի	Ավելի շուտ կծառայեի	Ավելի շուտ չէի ծառայի	Միանշանակ չէի ծառայի	ԴՊ	
Այո	26,6%	8,6%	17,2%	47,3%	0,4%	100,0%
Ոչ	31,8%	19,7%	17,9%	30,5%	0,0%	100,0%
Ընդամենը	29,0%	13,8%	17,5%	39,5%	0,2%	100,0%

Ինչպես ակնհայտ է Աղյուսակ 7.2-ից, բանակում չծառայած երիտասարդների պատրաստակամությունն էականորեն ավելի բարձր է, քան ծառայածներինը. չծառայած երիտասարդների շրջանում ծառայելու պատրաստակամությունը 16,4%-ով ավելի բարձր է:

Վիճակագրորեն նշանակալի կապ է նկատվում հարցվածի կրթական մակարդակի և ծառայելու պատրաստակամության միջև⁶⁹. որքան բարձր է հարցվածի կրթական մակարդակը, այնքան մեծ է բանակում ծառայելու պատրաստակամությունը:


Բանակում ծառայելու պատրաստակամության առումով որոշակի տարբերություններ են

69 Կապի գործակիցը 0,138 է և վիճակագրորեն նշանակալի:

Ունենալու անհավանական է, որ անհատները իրենց հարցվածները համարեն իրենց հարցվածները համարապատասխանող (49,7%), քան այլ քաղաքացիական և գյուղաբնակ երիտասարդները (համապատասխանաբար՝ 44,1% և 37,3%) (տե՛ս Չավելված 7, Աղյուսակ 7.13): Այս միտումն առկա է նաև տարբեր բնակավայրերի իգական և արական սեռի ներկայացուցիչների պարագայում. այսինքն՝ երևանաբնակ աղջիկների՝ բանակում ծառայելու պատրաստակամությունն ավելի բարձր է, քան մարզաբնակ աղջիկներինը (տե՛ս Չավելված 7, Աղյուսակ 7.14): Այս երևույթը կարելի է բացատրել մարզերում գեներալային դերերի ընկալման ավանդականությամբ, այն է՝ մարզերում բնակվող իգական սեռի ներկայացուցիչները ավանդականորեն «տղամարդկային» համարվող գործունեության ոլորտներում ներգրավվելու հեռանկարին առավել զգուշավորությամբ են մոտենում:

Հարցվածների՝ բանակում ծառայելու դիրքորոշումներն արտահայտող ևս մեկ հարց է առաջադրվել՝ «Կցանկանալիք արդյո՞ք, որ Ձեր եղբայրը, մտերիմ ընկերը ծառայեին ՀՀ բանակում»: Ինչպես ցույց են տալիս հարցի պատասխանները, հարցվածների 64,3%-ն այս կամ այն չափով դրական դիրքորոշում է հայտնում: Իգական սեռի հարցվածների շրջանում այս դեպքում նույնպես ավելի շատ են հարցին դրական պատասխան տվածները (71,2%՝ արական սեռի հարցվածների 50,6%-ի համեմատ) (Գծապատկեր 7.2):

7.2. «Կցանկանալիք արդյո՞ք, որ Ձեր եղբայրը, մտերիմ ընկերը ծառայեին ՀՀ բանակում» հարցի պատասխանները



Նշված հարցի շուրջ հարցվածները հիմնավորել են իրենց տեսակետները: Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, եղբայրների, մտերիմ ընկերների համար բանակում ծառայելու անհրաժեշտությունը մեծամասամբ բացատրվում է «պետության սահմանը պաշտպանելու» (հարցվածների 53,6%-ը), «բանակում տղաների՝ ինքնահաստատվելու և ինքնուրույն դառնալու» (48,2%), ինչպես նաև բանակում ծառայությունը որպես տղաների պարտականություն ընկալելու իրողություններով (31,7%) (Աղյուսակ 7.3):

7.3. Եղբայրների, մտերիմ ընկերների՝ բանակում ծառայելու անհրաժեշտության հիմնավորումները

Բանակում ծառայելու հիմնավորումները	Տոկոսը
Պետության սահմանը պաշտպանելու համար	53,6%
Բանակում տղաներն ինքնահաստատվում են, դառնում են ինքնուրույն	48,2%
Բանակում ծառայելը տղաների պարտականությունն է	31,7%
Սեփական ընտանիքի և հարազատների անվտանգությունը պաշտպանելու համար	17,3%
Բանակի հզորացման համար	12,3%
Զինգործույթ ձեռք բերելու համար	2,6%
Բանակում մնալու և ծառայելու ցանկություն կա	0,6%
Այլ պատասխաններ	2,3%
ԴՊ	0,3%
Ընդամենը	168,9%

Ներկայացնենք նաև այն, թե երիտասարդներն ինչպես են հիմնավորում իրենց հարազատների՝ բանակային ծառայության անցանկալի լինելը: Այսպիսի դիրքորոշում ունեցողների 63,8%-ն իր դիրքորոշումը հիմնավորում է բանակում ծառայողների անվտանգության ապահովման ցածր մակարդակով. ընդ որում՝ խոսքը վերաբերում է ոչ միայն հակառակորդի, այսինքն՝ արտաքին, այլև ներքին սպառնալիքներին: Հարցվածների 33,2%-ն էլ որպես իր տեսակետի հիմնավորում վկայակոչում է բանակում կարգապահության բացակայությունը (Աղյուսակ 7.4):

7.4. Եղբայրների, մտերիմ ընկերների՝ բանակում ծառայելու անցանկալի լինելու հիմնավորումները

Բանակում չծառայելու հիմնավորումները	Տոկոսը
Ծառայողների անվտանգությունն ապահովված չէ	63,8%
Բանակում չկա կարգապահություն	33,2%
Ժամանակի անհիմաստ վատնում է	23,8%
Ծառայողների համար ապահովված չեն անհրաժեշտ նվազագույն պայմանները	22,9%
Բանակում հարցերը կարգավորվում են ծանոթների միջոցով	13,8%
Այլ պատասխաններ	10,3%
Ֆինանսական բեռ է ընտանիքի համար	4,7%
ԴՊ	1,6%
Ընդամենը	100,0%

7.2. Երիտասարդների դիրքորոշումները ՀՀ արտաքին քաղաքականության վերաբերյալ

Հետազոտության շրջանակում երիտասարդներն իրենց տեսակետներն են արտահայտել մաս ՀՀ արտաքին քաղաքականությանը վերաբերող որոշ հարցերի առնչությամբ: Սասնափորապես ուսումնասիրվել են երիտասարդների համար արտաքին քաղաքական նախընտրելի ուղղությունները, հարևան պետությունների հետ հարաբերությունների ներկա և հետագա զարգացումների վերաբերյալ դիրքորոշումները:

Երիտասարդների տեսակետների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց գերակշիռ մասը կողմնակից է Հայաստանի՝ միաժամանակ և՛ ԱՊՀ կազմում մնալուն, և՛ Եվրամիությանը միանալուն⁷⁰ (Գծապատկեր 7.3): Հայաստանի՝ այս 2 ուղղություններով ընթանալու հավանության գնահատականները բավականին համասեռ են⁷¹: Ընդ որում՝ եթե ԱՊՀ կազմում մնալու առումով տարբեր բնակավայրերի երիտասարդների տեսակետները բավականին մոտ են, ապա Եվրամիությանը միանալու առումով որոշակի տարբերություններ են նկատվում երևանաբնակ և մարզաբնակ երիտասարդների դիրքորոշումների միջև⁷² (տես Հավելված 7, Աղյուսակ 7.15):

Տարբեր կրթական մակարդակ ունեցող երիտասարդների շրջանում Եվրամիությանը միանալու տրամադրվածության տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն գրանցվել:

Պետք է նկատել, որ ՀՀ արտաքին քաղաքական նախընտրելի ուղղվածության՝ ԱՊՀ-ին վերաբերող հարցի շուրջ դժվարացել է կարծիք արտահայտել հարցվածների 10,5%-ը, իսկ Եվրամիությանը միանալու հարցի շուրջ՝ հարցվածների 8,5%-ը:

7.3. ՀՀ արտաքին քաղաքական ուղղվածության վերաբերյալ դիրքորոշումները



70 Երիտասարդներին առաջարկվել են արտաքին քաղաքականությանն առնչվող դատողություններ, և դրանց հետ համաձայնությունը չափվել է 1-4 բալլով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն եմ»:

71 Գնահատականների ստանդարտ շեղումը համապատասխանաբար կազմում է 0.9 և 0.99:


72 Երևանաբնակ երիտասարդների շրջանում դատողության հետ համաձայնության միջինը կազմել է 3,12, մարզային քաղաքների երիտասարդների շրջանում՝ 2,97, գյուղաբնակ երիտասարդների շրջանում՝ 3,05:

Երիտասարդների 47,8%-ն այս կամ այն չափով համաձայն է Հայաստանի՝ ՆԱՏՕ-ին միանալու հեռանկարին (միջին գնահատականը կազմում է 2.52), այս հարցի վերաբերյալ դժվարացել է կարծիք հայտնել հարցվածների 15%-ը:

Հետաքրքիր է դիտարկել Ռուսաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ դիրքորոշումները: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդները մեծամասամբ դեմ են այն հեռանկարին, որ Ռուսաստանի համեմատ՝ Եվրոպյան ավելի մեծ ազդեցություն ունենա Հայաստանի վրա (այս դատողության հետ համաձայնության միջինը կազմում է 2,17): Միաժամանակ երիտասարդների գերակշիռ մասը դեմ է այն ծայրահեղ դատողությանը, որ «Հայաստանը պետք է դառնա Ռուսաստանի մի մասը» (միջինը 1,99 է⁷³): Հետաքրքիր է նաև նկատել, որ նշված դատողության հետ առավելապես համաձայն են մարզաբնակ, քան երևանաբնակ երիտասարդները. եթե երևանաբնակների շրջանում համաձայնության միջինը կազմում է 1,76, ապա մարզային քաղաքներում նույն ցուցանիշը 2,01 է, իսկ գյուղերում՝ 2,16 (տե՛ս Հավելված 7, Աղյուսակ 7.15): Նույն միտումն է պահպանվում նաև ԽՍՀՄ-ի վերականգնման գաղափարի հետ համաձայնության առումով:

Հարկ է նշել, որ ինչքան բարձր է հարցվողի կրթական մակարդակը, նա այնքան համաձայն է Ռուսաստանին միանալու դատողության հետ⁷⁴: Նույն միտումն առկա է նաև ԽՍՀՄ-ի վերականգնմանը վերաբերող դիրքորոշման առումով⁷⁵:

Ռուսաստանի հետ հարաբերությունները քննարկվել են նաև ֆոկլոր խմբերի շրջանակում: Ստորև ներկայացված մեջբերումը երիտասարդների զգալի մասի համար կարելի է տիպական համարել.

 **Արական.** «Ռուսաստանի հետ առաջինը... որ սահմաններն ուժեղ լինեն, օրինակ Ռուսաստանը մեզ զենք է տրամադրում, մենք ավելի ենք...»:

16-18 տ., Իջևան

Նշված մոտեցումը ցույց է տալիս, որ հայաստանյան երիտասարդները Ռուսաստանի Դաշնությունն ընկալում են որպես անկախ Հայաստանի Հանրապետությանը սատարող հզոր պետություն, որն էական դերակատարում ունի մեր երկրի անվտանգության ապահովման գործընթացում:

Հետազոտության շրջանակում դիտարկվել են նաև Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների վերաբերյալ դիրքորոշումները: Հարցվածների 99,3%-ը նշել է, որ դեմ է Ադրբեջանին որևէ տարածք զիջելուն, 0,7%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:

73 Զնայած միջին գնահատականը հակվում է սանդղակի՝ անհամաձայնություն արտացոլող գրադաջիային, այնուամենայնիվ երիտասարդների 31%-ն այս կամ այն չափով համաձայն է Ռուսաստանին միանալու դատողության հետ:

74 Կրթության և Ռուսաստանին միանալու դատողության հետ համաձայնության աստիճանի միջև կապի գործակիցը -0,256 է և վիճակագրորեն նշանակալի:

75 Կրթության և ԽՍՀՄ-ի վերականգնման դատողության հետ համաձայնության աստիճանի միջև կապի գործակիցը -0,268 է և վիճակագրորեն նշանակալի:

Թուրքիայի հետ հարաբերությունների՝ վերջերս ամենաքննարկվող հարցի, այն է՝ սահմանի բացման շուրջ երիտասարդների կարծիքը դիտարկվել է այդ սահմանի բացման համար հնարավոր զիջումների տեսանկյունից:

Ինչպես երևում է Աղյուսակ 7.5-ից, *երիտասարդների 91,9%-ը գտնում է, որ Հայաստանը չպետք է գնա ոչ մի զիջման*: Երիտասարդների 3,8%-ն էլ ընդունելի է համարում Արևմտյան Հայաստանի հողատարածքների պահանջից հրաժարվելու այլընտրանքը:

7.5. «Թուրքիայի հետ սահմանի բացման համար Հայաստանի կողմից ի՞նչ զիջումներ եք ընդունելի համարում» հարցի պատասխանները


Ոչ մի զիջման պետք չէ գնալ	91,9%
Հրաժարվել միայն հողերի վերադարձի պահանջից	3,8%
Հրաժարվել Ցեղասպանության ճանաչումից	1,1%
Դժվարանում եմ պատասխանել	1,1%
Թուրքիայի պահանջած ցանկացած զիջում	0,9%
Հողատարածքներ զիջել Արցախում	0,8%
Հրաժարվել Ցեղասպանության ճանաչումից և հողերի վերադարձի պահանջից	0,4%
Ընդամենը	100,0%

Պետք է նկատել, որ վերը նշված հարցի վերաբերյալ տարբեր սեռի, տարիքի և բնակավայրերի երիտասարդների դիրքորոշումների միջև եական տարբերություններ չկան:

Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների առումով ներկայացված դիրքորոշումների խորապատկերում հետաքրքիր է դիտարկել, թե երիտասարդներն առաջիկա 5 տարիների ընթացքում ինչ զարգացումներ են կանխատեսում: Հայաստանի այս և մյուս հարևանների հետ հարաբերությունների զարգացումները երիտասարդները գնահատել են 5 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «էականորեն կփոխվի դեպի վատը», իսկ «5»-ը՝ «էականորեն կբարելավվի»:

Ինչպես պարզ է դառնում Գծապատկեր 7.4-ից, երիտասարդներն առաջիկա 5 տարիների կտրվածքով Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերություններում կանխատեսում են վատթարացում. ընդ որում՝ ավելի շատ Ադրբեջանի, քան Թուրքիայի հետ:

☑ 7.4. ՀՀ հարևանների հետ հարաբերությունների կանխատեսումն առաջիկա 5 տարիների կտրվածքով. միջին գնահատականներ



ՀՀ մյուս հարևանների՝ Վրաստանի և Իրանի հետ հարաբերություններում առաջիկա 5 տարիներին կանխատեսվում են որոշակի բարելավումներ. 2 պետությունների հետ կանխատեսվող հարաբերությունների դեպքում էլ գերակշռում են այն հարցվածների պատասխանները, ովքեր գտնում են, որ «հարաբերությունները մի փոքր կբարելավվեն», «ամեն ինչ նույնը կմնա»:

Երիտասարդները որոշակի բարելավումներ են ակնկալում ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացման առումով. ակնկալվող փոփոխության միջին գնահատականը կազմում է 3,72՝ առավելագույն 5-ից (Գծապատկեր 7.4):

7.3. Երիտասարդների քաղաքացիական մասնակցությունը

Պետությունում ժողովրդավարական գործընթացների առանցքային չափորոշիչներից է հասարակության անդամների քաղաքացիական ներգրավվածությունը: Երիտասարդները, իրենց տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, հանդիսանում են քաղաքացիական ակտիվության դրսևորման գլխավոր սուբյեկտներից մեկը:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են երիտասարդների քաղաքացիական մասնակցության մակարդակը, հասարակական տարբեր ինստիտուտներում ներգրավվելու պատրաստակամությունը, այդ պատրաստակամության բացակայության պատճառները և խոչընդոտները:

Մինչ երիտասարդների քաղաքացիական ներգրավվածության աստիճանին վերաբերող տվյալներին անցնելը ներկայացնենք, թե հայաստանյան երիտասարդներն ինչպես են ընկալում «քաղաքացի» հասկացությունն առհասարակ: Այդ հասկացության ընկալումները բացահայտվել են ֆոկուս-խմբային քննարկումների շրջանակում:

- **Օրենքով առաջնորդվելը**

Քաղաքացի հասկացության սահմանման լայնորեն տարածված չափանիշներից է «**օրենքով ապրելը**»: Ըստ երիտասարդների՝ այս չափանիշը ներառում է այնպիսի գաղափարներ, ինչ-

պիսիք են՝ օրենքների իմացությունը, օրենքով գործելը, կարգապահությունը:

Ընդ որում՝ երիտասարդների զգալի մասը փաստել է, որ քաղաքացիության այս տարրը հասարակության անդամների մեծամասնության կողմից ներկայումս լայնորեն չի կիրառվում, քանի որ

- Օրենքը հավասար չափով չի տարածվում հասարակության բոլոր անդամների վրա: Այսինքն՝ օրենքը խախտողները հավասար կերպով չեն պատժվում: Ըստ այդմ՝ այդ համատեքստում որպես քաղաքացի ինքնանույնականանալու առումով բարձրացվում է պետության կողմից պաշտպանված լինելու զգացման կարևորությունը: Այսպես.

Արական. «...որ դու կարողանաս օրենքով շարժվել, օրենքը իմանաս, էս բանը անում ես, սրա համար իմանաս՝ քեզ ինչ ա սպասվում: ...արտասահմանում ոնց ա, ինքը նախարար, թե սովորական աշխատող լինի, էթե խախտում արեց, իրան էլ են պատժում, նրան էլ՝ հավասարաչափ: Այդ ժամանակ նոր իրան կարա՝ լիարժեք քաղաքացի համարի: Իսկ ստեղ տենց բան չկա»:

19-23 տ., Երևան

Իգական. «...հիմա մարդուն, ասենք, տվել են խոսքի ազատություն, բայց մարդ չի կարա՝ իրա ուզածը ասի, որովհետև լավ չի լինի հետո»:

16-18 տ., Երևան

Մեջբերումներ Ֆև քննարկումներից

- Առօրյա կյանքում հաճախ առավել ռացիոնալ է օրենքի շրջանցումը, քան դրանով առաջնորդվելը: Որպես օրինակ հաճախ քննարկվում էր ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքում, պետավտոտեսուչի հետ ոչ ֆորմալ համաձայնության գալով, առավել քիչ գումար վճարելու հնարավորությունը:

Ակնհայտ է, որ օրենքի գերակայությունը մեծամասամբ ընկալվում է որպես հայրենի պետությունում պաշտպանված զգալու էական գործոն, ինչը նաև տվյալ պետության նկատմամբ սեփականատիրական զգացում է առաջացնում:

Իգական. «Երկիրը իրա տանը նմանացնի, այսինքն՝ իրեն տեր զգա»:

**19-23 տ., Վաղարշապատ
Մեջբերում Ֆև քննարկումներից**

Հասարակությունում օրենքի գերակայության բացակայության ընկալումը հաստատվել է նաև քանակական հարցման տվյալներով: Երիտասարդների գերակշիռ մասը համաձայն չէ այն դատողության հետ, որ օրենքները ՀՀ բոլոր քաղաքացիների պարագայում գործում են հավասարապես. այս դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմել է 1,7՝ առավելագույն 4-ից (Աղյուսակ 7.6):

7.6. Օրենքի գերակայությանը վերաբերող դատողության հետ համաձայնության միջին գնահատականները

Օրենքները ՀՀ բոլոր քաղաքացիների պարագայում գործում են հավասարապես

Ընդհանուր միջին գնահատականը	Արական	Իգական
1,70	1,58	1,79
16-18	19-23	24-30
1,86	1,70	1,63
Երևան	Մարզային քաղաք	Գյուղ
1,55	1,69	1,85

• Հայրենասիրություն

Ինչպես վկայում են քննարկումների ժամանակ հնչեցված տեսակետները, երիտասարդները քաղաքացուն հաճախ բնութագրում են **«հայրենասիրություն»** հասկացության միջոցով: Այս հասկացությունը հաճախ սահմանվում է հայրենիքին նվիրվածության, սոցիալական դժվար պայմաններում հայրենիքը չլքելու, պատերազմական իրավիճակում զենք վերցնելու պատրաստակամության, թե՛ պատերազմական, թե՛ խաղաղ պայմաններում բանակում ծառայելու միջոցով: Այսպես.

Իգական. «...նվիրված իր ազգին»:
Իգական. «...այսինքն որ չթողնի, գնա՝ զուտ անձնական լավ ապրելու համար...»:
24-30 տ., Գյուղի Մեջբերումներ Ֆե քննարկումներից

• Հայրենիքի համար պիտանի լինել, օգտակար գործ անել

Այս ընկալումը ներառում է մի շարք իմաստներ. խոսվում է թե՛ անհատի կողմից առաքինի կյանք վարելու կարևորության, թե՛ հասարակական կյանքում նրա օգտակար գործունեության մասին: Երիտասարդների կողմից մասնավորապես քննարկվել են պիտանի և օգտակար լինելու այնպիսի ձևաչափեր, ինչպիսիք են՝ հասարակական աշխատանքները (օրինակ՝ ծառատունկ), անհատական կրթվածությունը, անձնական շահերից վեր կանգնելով՝ հանրօգուտ աշխատանք կատարելը և այլն: Այսպես.

Արական. «...այսինքն ինքը գիտակցում ա, որ ինքը լավ չի սովորել, պետք ա բանվոր լինի կամ տաքսու վարորդ, կամ եթե լավ ա սովորել, երկրի համար դառնա լավ մասնագետ»:
19-23 տ., Վաղարշապատ



Արական. «Իսկական քաղաքացին պետք ա մտածի ոչ թե մենակ իր լավի համար, իր օգուտի համար, իր շահի համար, այլ ինչ-որ բարեփոխումներ մտցնի Հայաստանում»:

**19-23 տ., Երևան
Մեջբերումներ Ֆե քննարկումներից**

● **ՀՀ-ում ծնվելը, ապրելը**

Քաղաքացու ընկալումներում երբեմն դերակատարություն է ունենում էթնիկ գործոնը կամ, ինչպես երիտասարդներից ոմանք էին նշում, «արյունը»: Այս դեպքում խոսվում է նաև տվյալ երկրում ապրելու, դաստիարակվելու կարևորության մասին: Այսպես.



Իգական. «...արյունով»:

- **Արյունը՝ մայրն ու հայրը մաքուր հայ լինե՞ն... Եթե, ասենք, հայրը գերմանացի լինի, ինքը հայ չէ՞:**

Արական. «Քաղաքացի...»:

- **Այդ դեպքում, ըստ Ձեզ, քաղաքացի չե՞ն լինում:**

Արական. «Լինում են, բայց մաքուր քաղաքացի լինեն...»:

Իգական. «...այստեղ ծնվել են, այստեղ մեծացել, ապրել, դաստիարակությունը ստանում են այստեղ...»:

Իգական. «...որ այստեղ են ապրում...»:

Արական. «...այն մարդը, որ ծնվել է Հայաստանում»:

Արական. «...Հայաստանի դաստիարակություն է ստանում ու ծնված է այն մարդկանցից, որ, ասենք, իր հայրը, եղբայրն այն մարդիկ են, որ, գիտես էլի, ծնվել են Հայաստանում»:

**16-18 տ., Իջևան
Մեջբերումներ Ֆե քննարկումներից**

Այսպիսով՝ երիտասարդների մեծամասնությունը կարծում է, որ իսկական քաղաքացին պետք է լինի օրենքով առաջնորդվող, հայրենասեր, պետության համար օգտակար գործունեություն ծավալող անձ: Միևնույն ժամանակ նշված հատկանիշների դրսևորման ճանապարհին առկա են մի շարք խոչընդոտներ, որոնց հաղթահարումը պայմանավորված է համակարգային բարեփոխումներով:

7.3.1. Երիտասարդների մասնակցությունը տարբեր կառույցների գործունեությանը

Քաղաքացիների մասնակցության մակարդակը չափվում է տարբեր կառույցներում նրանց ներգրավվածությամբ և մասնակցությամբ: *Ներգրավվածություն* հասկացությունը ներառում է տարբեր մակարդակներ, որոնք բնորոշում են ներգրավվածության տարբեր աստիճաններ:

Համաշխարհային բանկի մեթոդաբանության շրջանակում քաղաքացիական ներգրավվածությունը դիտարկվում է որպես «սանդուղք», որի մակարդակներն են *տեղեկացվածությունը, մասնակցությունը «հանրային խորհրդատվությանը», մասնակցությունը որոշումների համատեղ կայացմանը և շահառուների կողմից ծրագրերի նախածեռնումն ու վերահսկողությունը*⁷⁶: Մասնակցության չափանիշներից է նաև քաղաքացիների **անդամությունը** հասարակական կյանքում նշանակալի կառույցներին:

Այս հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդներն անդամության ամենաբարձր ցուցանիշը գրանցում են քաղաքական կուսակցություններում. ընտրանքում կուսակցական երիտասարդները կազմել են 9,1%: Հարցված երիտասարդների 6,6%-ը նշել է, որ ներգրավված է ուխտրիորդների աշխատանքներում, 5,7%-ն էլ՝ որպես կամավոր, ներգրավված է հասարակական կազմակերպություններում (Աղյուսակ 7.7):

Պետք է նշել, որ անդամության համեմատաբար բարձր տոկոս արձանագրած կառույցներում ուսանող-երիտասարդների անդամության ցուցանիշը դիտարկելիս մի փոքր այլ պատկեր է ստացվում: Այսպես՝ քաղաքական կուսակցությունների անդամ է ուսանողների 12,2%-ը, ուսանողական խորհուրդների անդամ՝ 20,5%-ը, իսկ ՀԿ-ներում որպես կամավոր է 10,7%-ը (Աղյուսակ 7.7):

7.7. Վերջին 1 տարվա ընթացքում երիտասարդների անդամությունը տարբեր կառույցներին

	Անդամ երիտասարդների տոկոսը	Անդամ ուսանողների տոկոսը
Քաղաքական կուսակցություններ	9,1%	12,2%
Թաղապետարանի, գյուղապետարանի, համատիրության աշխատանքներ	2,0%	
Հասարակական կազմակերպություններում որպես կամավոր (առանց վարձատրության)	5,7%	10,7%
Հասարակական կազմակերպություններ (վարձատրվող)	1,2%	2%
Մասնագիտական ասոցիացիաներ (օրինակ՝ բժիշկների, ուսուցիչների միավորումներ)	2,6%	
Ուսանողական խորհուրդներ	6,6%	20,5%
Բուհում գործող այլ կառույցներ (ուսանողական գիտական ընկերություններ, ակումբներ և այլն)	3,8%	
Արհմիություններ	1,2%	
Աշակերտական խորհուրդներ	2,0%	

76 Enabling environments for Civic Engagement in PRSP countries (ARVIN), Social Development Notes, Note No82, March, 2003, World Bank.

Դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում առկա է, այսպես կոչված, «պասիվ անդամություն» երևույթը. այսինքն՝ անձը պաշտոնապես գրանցված է այս կամ այն կառույցում, սակայն այդ կառույցի պաշտոնական և ոչ պաշտոնական միջոցառումներին չի մասնակցում: Այս երևույթի առկայությունը փաստելու համար երիտասարդներին տվյալ կառույցի աշխատանքներում իրենց մասնակցության աստիճանը գնահատելու վերաբերյալ հարց է առաջադրվել:

Ներկայացված կառույցների անդամ երիտասարդների փոքր քվի պատճառով հնարավոր չէ ներկայացուցչական համեմատություններ կատարել այդ կառույցների անդամ հանդիսացող և չհանդիսացող երիտասարդների մասնակցության աստիճանների միջև: Միայն նշենք, որ ուսումնասիրված երիտասարդների անդամակցության առումով 5%-ից բարձր ցուցանիշ ունեցող 3 կառույցներում (քաղաքական կուսակցություններ, ուսանողական խորհուրդներ, հասարակական կազմակերպություններ) մասնակցության գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ. քաղաքական կուսակցությունների անդամ երիտասարդների 37,6%-ը նշել է, որ ընդհանրապես չի մասնակցում կուսակցության գործունեությանը, նույն ցուցանիշը ՀԿ-ների և ուսանողական խորհուրդների մասով համապատասխանաբար կազմում է 15,9% և 8,8% (Աղյուսակ 7,8⁷⁷):

7.8. Մասնակցությունը 3 կառույցներում

	Ընդհանրապես չեն մասնակցում	Մասնակցում են հազվագույուտ միջոցառումների	Մասնակցում են միջոցառումների որոշ մասին	Մասնակցում են միջոցառումների մեծ մասին	Մասնակցում են բոլոր միջոցառումներին	Աշխատում են այնտեղ	Ընդամենը
Քաղաքական կուսակցություններ							
Անդամ են	37,6%	29,4%	22,9%	4,6%	5,5%	0,0%	100,0%
Անդամ չեն	94,8%	2,9%	1,4%	0,2%	0,0%	0,0%	100,0%
Ընդամենը	89,6%	5,3%	3,3%	0,6%	0,5%	0,0%	100,0%
Հասարակական կազմակերպություններում որպես կամավոր (առանց վարձատրության)							
Անդամ են	15,9%	20,3%	27,5%	14,5%	15,9%	1,4%	100,0%
Անդամ չեն	95,5%	2,1%	1,5%	0,3%	0,0%	0,6%	100,0%
Ընդամենը	90,9%	3,2%	3,0%	1,1%	0,9%	0,7%	100,0%
Ուսանողական խորհուրդներ							
Անդամ են	8,8%	10,0%	28,8%	31,3%	16,3%	5,0%	100,0%
Անդամ չեն	90,7%	3,8%	3,4%	1,3%	0,1%	0,0%	100,0%
Ընդամենը	76,6%	3,9%	4,8%	3,2%	1,2%	0,3%	100,0%

77 Այս դեպքում նույնպես նշենք, որ անդամության և մասնակցության աստիճանի հարաբերակցության գնահատականներում մեծ է սխալի տոկոսը, քանի որ ներկայացուցչական գնահատականներ ստանալու համար ընտրամիջոցում տվյալ կառույցների անդամների քանակը փոքր է:

Քաղաքական կուսակցություններում միայն ֆորմալ անդամության երևույթ դիտարկվել է մալ ֆոկուս խմբերի քննարկումների ընթացքում: Նմանօրինակ ձևաչափով այս կամ այն կուսակցությունում գրանցվելը երիտասարդները հիմնավորում էին այն հանգամանքով, որ ընդառաջել են որևէ ծանոթի, ում անհրաժեշտ էր տվյալ տարածքում տվյալ կուսակցության անդամների կրիտիկական քանակ ապահովել: Այսպես.

Իգալան. «Քայց ուղղակի եմ գրվել... կուսակցությունում»:

- **Ինչո՞ւ:**

Իգալան. «Եսիմ, ասացին գրվի, ես էլ գրվեցի»:

- **Ընկերներն են խնդրե՞լ:**

Իգալան. «Չէ: Ավելի շատ՝ ծանոթ մարդ: Ուղղակի իրան ինչ-որ պետք էր անդամների քանակ, ես ուղղակի գրվել եմ, բայց կոնկրետ մասնակցություն կամ բան... ես կոնկրետ հեռու եմ»:

19-23 տ., Մեղրաշեն Մեջբերում Ֆև քննարկումներից

Ներգրավվածության կոնկրետ հարթակում «պասիվ» մասնակցության մեկ այլ օրինակ է **աշակերտական խորհուրդների** օրինակը: Ֆև քննարկումներում ներկա էին այդ խորհրդի անդամ երիտասարդներ: Նրանց մեկնաբանությունները վկայում են, որ ավելի հաճախ այդ խորհուրդը չի ընկալվում որպես դպրոցի կառավարման գործընթացում որոշումների կայացման մեխանիզմ: Հաճախ այն ընկալվում է որպես ղեկավար անձնակազմի կողմից պարտադրված երևույթ. այս դեպքում խորհրդի ֆորմալ գործառույթները մասնակից աշակերտների համար մնում են չբացահայտված, և մասնակցությունն այդ խորհուրդներին կրում է ձևական բնույթ, կամ այն առավելագույնն ընկալվում է որպես կազմակերպչական գործառույթներ իրականացնող մարմին: Այսպես

Աշխուրդներում ներգրավված եք:

Իգալան. «Հա՛, ես կամ»:

- **Ի՞նչ է դա Ձեզ տալիս:**

Իգալան. «Ինձ, օրինակ, ոչ մի բան չի տալիս»:

- **Իսկ ինչո՞ւ ես անդամակցում:**

Իգալան. «Չգիտեմ, ինձ մի օր իմ դասղեկն էկավ ու ասաց, որ...»:

Արական. «Պարտադրական ա...»:

Իգալան. «...դասարանի ակտիվիստներին գրանցում են էտ դպրոցի... աշակերտական խորհրդի մեջ, հետո, ծիշտն ասած, դասերի հաշվին մեկ-մեկ լինում էր էդ խորհուրդը, գնում էինք ընդեղ...»:

16-18 տ., Երևան

Իզական. «Մենք հիմնականում քննարկում ենք դպրոցի հարցերը, դպրոցում, ասենք, ինչ-որ բան, որ կատարում ենք, ասենք, մրցույթներ, համերգներ, հանդեսներ, էդ հարցերն ենք քննարկում»:

**16-18 տ., Տանձուտ
Մեջբերումներ Ֆև քննարկումներից**

Բացի տվյալ պահին այս կամ այն կառույցին անդամակցելուց և մասնակցություն ցուցաբերելուց՝ չափվել է նաև երիտասարդների՝ 5 տիպի կառույցներում ներգրավվելու պատրաստականությունը՝ իրենց և իրենց համայնքի շահերը ներկայացնելու նպատակով: Ինչպես երևում է Աղյուսակ 7.9-ից, քաղաքական կուսակցությունների, ՏԻՄ-ների, ՀԿ-ների, քաղաքացիական նախաձեռնող խմբերի, ներբուհական/ներդպրոցական կառույցների աշխատանքներում ներգրավվել չցանկացողները գերակշիռ մաս են կազմում: Երիտասարդների մի փոքր տոկոսը միանշանակ կցանկանար մասնակցել ՀԿ-ների (8,6%) և քաղաքական կուսակցությունների (8,5%) աշխատանքներին: Ներգրավվելու որոշակի հակվածություն ունեցողներն էլ համեմատաբար առավել կնախընտրեին ՀԿ-ները, քաղաքացիական նախաձեռնող խմբերը և ներբուհական/ներդպրոցական կառույցները (Աղյուսակ 7.9):

7.9. Առաջարկված կառույցներում և խմբերում ներգրավվելու պատրաստականության աստիճանները

	Միանշանակ՝ ո՛չ	Ավելի շուտ՝ ո՛չ	Ավելի շուտ՝ այո՛	Միանշանակ՝ այո՛	Դժվ. պատ.	Ընդամենը
Քաղաքական կուսակցություն	57,5%	13,2%	16,4%	8,5%	4,5%	100,0%
Թաղապետարան, զյուղապետարան, համատիրություն	58,9%	15,9%	16,7%	6,6%	1,9%	100,0%
Հասարակական կազմակերպություն	45,0%	16,4%	27,7%	8,6%	2,2%	100,0%
Քաղաքացիական նախաձեռնող խումբ	51,9%	18,7%	22,1%	5,4%	1,9%	100,0%
Ներբուհական/ներդպրոցական կառույցներ (ուսվորհուրդ, ուսանողական/աշակերտական միավորումներ և այլն)	43,6%	15,6%	22,1%	11,0%	7,6%	100,0%

Ներգրավվելու պատրաստականության առումով որոշակի տարբերություններ են նկատվում տարբեր սեռերի, տարիքային խմբերի և բնակավայրերի երիտասարդների միջև: Այսպես՝ քաղաքական կուսակցություններում և ՏԻՄ-ների աշխատանքներում ներգրավվելու պատրաստականության առումով արական սեռի հարցվածները որոշ չափով գերազանցում են իզական սեռի հարցվածներին (ներգրավվել ցանկանալու աստիճանի՝ 4 բալով գնահատված միջինը համապատասխանաբար կազմում է 1,8 և 1,71): Եվ հակառակը՝ իզական սեռի հարցվածների

պատրաստականությունը գերազանցում է 34-ների, քաղաքացիական նախաձեռնող խմբերի և ներբուհական/ներդպրոցական կառույցներում ներգրավվելու առումով: Ընդ որում այս կառույցներում ներգրավվելու ցանկության միջին գնահատականները որոշակիորեն բարձր են 16-ից 18 տարիքային խմբում և գյուղերում (տես Հավելված 7, Աղյուսակներ 7.16-7.18):

Նշված կառույցներում ներգրավվել չցանկացողները նշել են նաև դրա հիմնավորումները, որոնցից առավել շատ հիշատակվել են «*հետաքրքիր չլինելը*», «*իմ ներգրավվածությունը ոչինչ չի փոխի*» կանխադրույթը, *ինչպես նաև ազատ ժամանակի բացակայությունը*: Տվյալ կառույցին չվստահելը՝ որպես պատճառ, առավել հաճախ նշվել է քաղաքական կուսակցությունների պարագայում (12,5%): (Երիտասարդների կողմից նշված պատճառների տոկոսային բաշխումը ներկայացված է Հավելված 7-ում՝ Աղյուսակ 7.19-ում):

Քանակական հետազոտությունից տեղեկություններ են ստացվել նաև այն մասին, թե երիտասարդները համայնքի/քաղաքի խնդիրների լուծման գործում իրենց մասնակցությունը որքանով են որպես պարտականություն ընկալում: «*Համայնքի/քաղաքի խնդիրների լուծման գործին մասնակցելն իմ պարտականությունն է*» դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմում է 2,81, այսինքն՝ հարցվածների պատասխանները հակվում են 4 բալանոց սանդղակի «*ավելի շուտ համաձայն եմ*» կետին: Համայնքի/քաղաքի խնդիրների լուծման գործին մասնակցելու պարտավորվածությունը որոշ չափով ավելի մեծ է աղջիկների, քան տղաների, վաղ տարիքի և գյուղաբնակ երիտասարդների շրջանում (Աղյուսակ 7.10):

7.10. Մասնակցությանը վերաբերող դատողության հետ համաձայնության միջին գնահատականներն ըստ սեռի, տարիքի, բնակավայրի

Իմ համայնքի/քաղաքի խնդիրների լուծման գործին մասնակցելն իմ պարտականությունն է

Ընդհանուր միջին գնահատականը	Արական	Իգական
2,81	2,77	2,83
16-18	19-23	24-30
2,95	2,82	2,73
Երևան	Մարզային քաղաք	Գյուղ
2,73	2,70	2,96

Հետազոտության տվյալներից պարզ է դառնում, որ նշված կառույցներում ներգրավվելու ցանկություն ունեցողներն էականորեն ավելի շատ են, քան դրանցում փաստացի ներգրավվածները: Այս տվյալները կարող են հիմք հանդիսանալ մի շարք ենթադրությունների համար, որոնց միանշանակ հաստատման կամ հերքման համար անհրաժեշտ են այս հարցի առավել խորը հետազոտություններ: Երևույթը որոշակիորեն պարզաբանում են ֆոկուսխմբային քննարկումների տվյալները, որոնց հիման վրա ուրվագծվում են երիտասարդների հետևյալ մոտեցումները.

- Երիտասարդների որոշ տոկոսը սկզբունքորեն դեմ չէ, իր շահերը ներկայացնելու նպատակով ներգրավվել որոշակի կառույցների աշխատանքներում, մասնակցել հասարակական գործընթացներին:
- Միևնույն ժամանակ երիտասարդները նշում են մասնակցության այս կամ այն հարթակներում ներգրավվելուց իրենց հետ պահող այնպիսի գործոններ, ինչպիսիք են.
 - *Ժամանակի բացակայությունը:* Սատնանշելով այս գործոնը՝ երիտասարդները փաստում են, որ իրենց ժամանակը հատկացնում են նյութական միջոցների հայթայթմանը:
 - Հասարակական հիմնախնդիրների լուծումների *կանխորոշված լինելու ընկալումը:* Երիտասարդների զգալի մասն իր պասիվությունը հիմնավորում է նրանով, որ հասարակական հնչեղություն ունեցող հարցերի շուրջ *«վերևներում»* որոշումն արդեն իսկ կայացված է, և այդ գործընթացին իրենց մասնակցությունը ոչինչ չի փոխի: Երբեմն մեկնաբանություններ են հնչել ժողովրդավարության սկզբունքների կիրառման ձևական լինելու վերաբերյալ, խոսվել է նաև մասնակցության արդյունքների նկատմամբ վստահության բացակայության մասին:
 - *Ենթադրվող սպառնալիքներից զերծ մնալու ձգտումը*, որն առօրեական մեկնաբանմամբ հնչում է հետևյալ կերպ՝ *«շառից-փորձանքից հեռու»:* Այս մոտեցումն ամենատարածվածն էր, երբ խոսքը վերաբերում էր քաղաքական հիմնախնդիրներին: Այսպես.



Իզակյան. «Դե՛, հայ-թուրքական հարաբերությունների մասին տարբեր երկրների հետ...»:

- Էլ ի՞նչ հարցերով կուզեիք մասնակցել...

Արակյան. «Ես կուզեի՝ միջոցներ ձեռնարկեի՜ն էլ հայկական պատմական արժեքները աշխարհին ի ցույց դնել... որովհետև մենք ունենք այնպիսի արժեքներ, որոնք թաքնված են... Մենակ մենք գիտենք»:

Արակյան. «Ուրիշ հարցերը արդեն վտանգավոր են կյանքի համար»:

**16-18 տ., Սյունիքի մարզ
Սեջբերումներ Ֆև քննարկումներից**

Այս համատեքստում հետաքրքիր է դիտարկել, թե երիտասարդներն ինչպես են մեկնաբանում հայաստանյան քաղաքացիական ակտիվության դրսևորումները, դրանց մասնակիցների շարժառիթները և նախաձեռնությունների արդյունքները: Ֆոկուս խմբերի քննարկումների ժամանակ հատկապես հակասական կարծիքներ էին հնչում քաղաքացիական ակցիաների մասնակիցների շարժառիթների վերաբերյալ: Շարժառիթների ընկալումների մի բևեռ էր հանդիսանում *ակտիվիստների շահը*. այն տարբեր նրբերանգներ էր ստանում՝ սկսած ակտիվության համար ֆինանսներ ստանալուց մինչև սեփական անձի ինքնահաստատում և հասարակությունում հայտնի դառնալու ձգտում: Սյուն կողմից երիտասարդների որոշ մասն ակտիվիստներին վերագրում էր նպատակասլացություն, սեփական շահերը պաշտպանելու ձգտում, կազմակերպվածություն, հայրենասիրություն, ինչպես նաև ավելորդ ժամանակի

առկայություն: Հնչել են նաև տեսակետներ այն մասին, որ ակտիվիստները, որպես կանոն, հովանավորվում են որոշակի ուժերի, մասնավորապես արտերկրի կամ ներքին քաղաքական շրջանակների կողմից:

Հետազոտության ընթացքում խմբային հարցազրույց է իրականացվել Հայաստանի տարբեր հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունների ներկայացուցիչների հետ՝ նրանց մասնակցության շարժառիթները և պատճառները վեր հանելու նպատակով:

Հարցազրույցի մասնակից ակտիվիստներն իրենց կողմից քաղաքացիական ակտիվության դրսևորման հիմնական **շարժառիթ** էին համարում **գաղափարը**, որը մեծամասամբ կապված է հասարակական կյանքի այս կամ այն ոլորտի բարելավման հետ: Ակտիվիստների հավաստմամբ՝ քաղաքացիական կոնկրետ նախաձեռնություններում իրենց ներգրավվումը տեղի է ունեցել, մի կողմից, իրենց իսկ անձնային-գաղափարական, մյուս կողմից, հասարակության որոշակի շերտերում այս կամ այն գաղափարի երկուստեք հասունացման արդյունքում:

Ակտիվիստները վերջին տարիներին քաղաքացիական ակտիվության աճին նպաստող գործոններից են համարում **ինտերնետը**, հատկապես՝ ինտերնետային սոցիալական ցանցերը, որոնք միաժամանակ իրականացնում են տեղեկատվության աղբյուրի, քաղաքացիական ուժերի համախմբման գործիքի, հիմնախնդիրների բարձրաձայնման արտահայտչամիջոցի և հարթակի գործառույթներ: Տեղեկատվության ստացումն ու ակտիվ փոխանակումը նպաստում են քաղաքացիների կողմից իրենց կյանքում ի հայտ եկած խնդիրների բազմազանության և այլընտրանքների առկայության գիտակցմանը, ինչն էլ հանգեցնում է որոշակի գործողությունների իրականացմանը:

Ակտիվիստները որպես համախմբման և քաղաքացիական պայքարի կազմակերպման առիթ են համարում հասարակական հնչեղության հիմնախնդրի հետ կապված որևէ **կոնկրետ դեպք**: Օրինակ՝ երկրում բնապահպանական խնդիրների բարձրաձայնումը համակարգված կերպով տեղի է ունենում հանքարդյունաբերողի կողմից անտառին վնաս հասցնելու կոնկրետ վտանգի կանխման շուրջ ձևավորված քաղաքացիական շարժման ձևաչափով:

Հետաքրքիր է դիտարկել, թե ՀՀ Կառավարությանն իրենց շահերը և պահանջները լսելի դարձնելու առումով երիտասարդներն ինչ քայլեր են անհրաժեշտ համարում: Քանակական հարցումը ցույց է տալիս, որ երիտասարդների ծայրը վեր հանելու ամենամախընտրելի ձևաչափը **երիտասարդների և պետական պաշտոնյաների մասնակցությամբ պարբերական քննարկումներն են** (36,1%): Այս նախընտրությունը պարզորոշ նկատվում էր նաև ֆոկլուս խմբերի քննարկումների ժամանակ. հատկապես մարզաբնակ երիտասարդները մատնանշում էին կենտրոնական իշխանությունների կողմից անտեսված լինելու զգացումը և իրենց բնակավայրում առկա խնդիրներն անձնական հաղորդակցության ձևաչափով ներկայացնելու հնարավորություն ունենալու ցանկություն հայտնում:

Աղյուսակ 7.11-ից երևում է, որ անհրաժեշտ քայլերի շարքում հարաբերականորեն ողջունելի են համարվում երիտասարդական հասարակական կազմակերպությունների ստեղծումը և պետական մարմիններին կից հանձնաժողովներում անհատ երիտասարդների ընդգրկումը (համապատասխանաբար՝ 26,7% և 24,1%):

7.11. «Չեր կարծիքով՝ ի՞նչ քայլեր է պետք ձեռնարկել՝ երիտասարդների շահերը և պահանջները ՀՀ Կառավարությանը լսելի դարձնելու համար» հարցի պատասխանները⁷⁸

Երիտասարդների և պետական պաշտոնյաների մասնակցությամբ քննարկումները պարբերական դարձնել	36,1%
Երիտասարդական հասարակական կազմակերպություն հիմնել	26,7%
Պետական մարմիններին կից հանձնաժողովներում ամհատ երիտասարդների ընդգրկել	24,1%
Պետական մարմիններին կից հանձնաժողովներում երիտասարդական հասարակական կազմակերպություններ ընդգրկել	17,9%
Հանրային քննարկումներ կազմակերպել	17,5%
Ակցիաներ, հանրահավաքներ, ստորագրահավաքներ կազմակերպել	15,7%
Անդամակցել երիտասարդական հասարակական կազմակերպություններին	15,4%
Պետական իշխանական մարմիններին դիմում ներկայացնել	14,4%
Սոցիալական ցանցերում ստեղծել նախաձեռնող խմբեր կամ միանալ դրանց	13,0%
Տեղական իշխանություններին դիմում ներկայացնել	9,7%
Կուսակցությունների երիտասարդական թևերում ընդգրկվել	8,3%
Քաղաքացիական նախաձեռնող խմբեր ստեղծել կամ միանալ դրանց	6,6%
Այդպիսի տարբերակներ չկան	6,0%
ՂԴ	4,4%
Այլ պատասխաններ	0,6%
ԸՆդամենը	216,3%

Իրենց ծայրը Կառավարությանը լսելի դարձնելու առումով որոշակի մեխանիզմներ արդյունավետ համարելուն զուգահեռ՝ երիտասարդների 90,8%-ը նշել է, որ վերջին 1 տարվա ընթացքում դրանցից որևէ մեկը չի կիրառել: Հարցվածների ընդամենը 1,7%-ը նշել է երիտասարդական ՀԿ-ի անդամակցելու փորձառության, 1,4%-ն էլ՝ սոցիալական ցանցերում նախաձեռնող խմբեր ստեղծելու կամ դրանց միանալու մասին (տե՛ս Հավելված 7, Աղյուսակ 7.20):

7.3.2. Մասնակցությունն ընտրություններին

Քանակական հարցման շրջանակում երիտասարդների՝ ընտրություններին մասնակցելու ազդեցության վերաբերյալ տված գնահատականները ցույց են տալիս, որ նրանք հակված են համաձայնելու, որ իրենց մասնակցությունը ոչինչ չի փոխի: Ընդ որում՝ ՏԻՄ և կենտրոնական

78 Պատասխանների տոկոսը գերազանցում է 100-ը, քանի որ 1 հարցվողը նշել է մի քանի տարբերակ:

իշխանությունների ընտրությունների վրա ազդեցություն ունենալու վերաբերյալ ընկալումներում առկա են տարբերություններ: Այս հարցի շուրջ առաջադրվել է 2 դատողություն, և երիտասարդները 1-4 բալանոց սանդղակով գնահատել են այդ դատողությունների հետ իրենց համաձայն լինելը կամ չլինելը («1»-ը նշանակում է «բացարձակապես համաձայն չեմ», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն եմ»): Այսպիսով՝ «Իմ համայնքի/քաղաքի խնդիրների լուծման գործին մասնակցելն իմ պարտականությունն է» դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմում է 2,82, իսկ «Խորհրդարանական և նախագահական ընտրություններին իմ մասնակցությունը, միևնույնն է, ոչինչ չի փոխի» դատողության հետ համաձայնության միջին գնահատականը՝ 2,93: Ընդ որում՝ ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն ունենալու առումով ավելի լավատես են արական սեռի հարցվածները: Համեմատաբար ավելի լավատես են նաև 16-ից 18 տարեկան և գյուղաբնակ երիտասարդները (Աղյուսակ 7.12):

7.12. Ընտրություններին վերաբերող դատողությունների հետ համաձայնության միջին գնահատականներն ըստ հարցվածների սեռի, տարիքի, բնակավայրի

Համայնքային ընտրություններին (ավագանի, գյուղապետ, քաղաքապետ) իմ մասնակցությունը, միևնույնն է, ոչինչ չի փոխի

Ընդհանուր միջին գնահատականը	Արական	Իգական
2,82	2,72	2,88
16-18	19-23	24-30
2,70	2,81	2,88
Երևան	Մարզային քաղաք	Գյուղ
2,99	2,79	2,70

Խորհրդարանական և նախագահական ընտրություններին իմ մասնակցությունը, միևնույնն է, ոչինչ չի փոխի

Ընդհանուր միջին գնահատականը	Արական	Իգական
2,93	2,86	2,97
16-18	19-23	24-30
2,85	2,90	2,99
Երևան	Մարզային քաղաք	Գյուղ
3,04	2,86	2,89

ՏԻՄ-ների և հանրապետական նշանակության ընտրություններում անձի ծայրի ազդեցության ընկալումների միջև տարբերություններն ակնհայտ էին նաև ֆոկլոսխմբային քննարկումների ժամանակ. համարվում էր, որ ինչքան փոքր է ընտրվող մարմնի իշխանության շրջանակը, այնքան կարող է 1 անձի ծայրը նշանակալի լինել:

Ընդհանուր առմամբ՝ ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ հաստատվել է երիտասարդների ընկալումը ընտրությունների *ելքի կանխորոշվածության* վերաբերյալ: Պետք է նկատել, որ չնայած ընտրությունների *ելքի կանխորոշվածության* ընկալմանը՝ երիտասարդների գերակշիռ մասն ընտրություններին մասնակցելու ցանկություն է հայտնում: Այդ ցանկությունը հիմնավորվում է հետևյալ գործոններով.

- Ընտրությունների գնալով և քվեարկելով՝ անձը նվազեցնում է իր փոխարեն այլ անձի քվեարկելու, այսինքն՝ իր ծայրը կեղծելու երևույթի հավանականությունը: Այսպես.

Իզական. «*Ղե, եթե չմասնակցեմ, իմ քվեն արդեն ուրիշը կլրացնի իրա օգտին*»:

19-23 տ., Երևան

Իզական. «*Գիտեմ ինչի եմ մասնակցում, որ չլնի, դատարկը կլրացվի, թեկուզ գնում եմ, անկապ իմ ազգանունով մեկին ընտրում եմ, որ չեմ էլ ճանաչում*»:

24-30 տ., Երևան

Մեջբերումներ Ֆև քննարկումներից

- Ընտրություններին մասնակցելով՝ անձը կիրառում է իր քաղաքացիական իրավունքը:
- Անձը պետության, համայնքի մասշտաբով որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն է ստանում:
- Ընտրությունների գնում եմ (հատկապես 16-ից 18 տարեկան երիտասարդները)՝ հետաքրքրությունից դրդված:

Ընդհանրացնելով երիտասարդների՝ պետության և քաղաքացիական մասնակցության ընկալումները՝ կարելի է եզրակացնել, որ երիտասարդների զգալի մասի կարծիքով Հայաստանի Հանրապետությունը, որպես պետություն, ներկայումս այս կամ այն պատճառով ոչ լիարժեք է կատարում իր գործառույթները: Այս ընկալումը հիմնավորվում է պետությունում առկա հիմնախնդիրներով:

Միաժամանակ երիտասարդները ցածր մասնակցություն ունեն քաղաքացիական նախաձեռնություններում, ինչը պայմանավորված է սեփական խնդիրների լուծման վրա կենտրոնացվածությամբ, ինչպես նաև մասնակցության արդյունքների նկատմամբ թերահավատ լինելով:

Երիտասարդների նմուշակները և սոցիալական սրամադրությունները

Երիտասարդների ձգտումների վրա էական ազդեցություն են ունենում նրանց միկրո և մակրոմիջավայրում տիրող իրավիճակի, առկա հիմնախնդիրների ընկալումները: Ներկայի իմաստավորումն իր հերթին պայմանավորում է ապագայի ընկալումները, կանխատեսումներն ու տրամադրությունները: Տվյալ բաժնում կանդրադառնանք այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ երիտասարդների բավարարվածությունն իրենց ներկա կյանքի տարբեր կողմերով, նրանց կյանքի ամենաառաջնային պլանները և դրանց հետ կապված սպասումները:



Առանձին ենթամասով կներկայացվի երիտասարդների սոցիալական տրամադրությունների վերլուծությունը, անդրադարձ կկատարվի անձնական և հասարակական կյանքի առանցքային ոլորտների զարգացման լավատեսական ու հոռետեսական մեկնաբանություններին:

8.1. Երիտասարդների բավարարվածությունն իրենց կյանքով և ապագայի պլանները

Երիտասարդների ձգտումները մեկնաբանելու և հասկանալու համար արժեքավոր տեղեկություն կարող է հանդիսանալ այն, թե որքանով են նրանք բավարարված իրենց ներկա կյանքի տարբեր կողմերով:

Քանակական հետազոտության շրջանակում ներկայացվել են երիտասարդների կենսագործունեության առանցքային մասը կազմող ոլորտներ, և ըստ անձնական ձեռքբերումների՝ երիտասարդներին առաջարկվել է յուրաքանչյուր ոլորտում գնահատել իրենց բավարարվածության աստիճանը⁷⁹:

Երիտասարդների գնահատականները ցույց են տալիս, որ նրանց ամենաբարձր գոհումնակությունն ընտանեկան կյանքում է (3,68), իսկ ամենացածրը՝ Հայաստանից դուրս կատարած ճամփորդությունների պարագայում (1.79) (Աղյուսակ 8.1): Գոհումնակության մակարդակը բավականին ցածր է նաև մարզական ակումբներ և մշակութային, զվարճանքի հաստատություններ հաճախելու առումով:

8.1. Տարբեր ոլորտներում ունեցած ձեռքբերումներով բավարարվածության միջին գնահատականներն ըստ հարցվածների սեռի

	Ընդհանուր միջինը	Արական	Իգական
Ընտանեկան կյանք	3,68	3,77	3,62
Ընկերների հետ շփում	3,57	3,76	3,44
Կրթություն	2,83	2,76	2,87
Նյութական բարեկեցություն	2,63	2,64	2,63
Առողջ ապրելակերպի կանոններին հետևելու չափ	2,55	2,6	2,52
Մշակութային, զվարճանքի հաստատություններ հաճախելու չափ	2,14	2,26	2,06
Աշխատանք/կարիերա	1,92	1,98	1,87
Մարզական ակումբներ հաճախելու չափ	1,86	2,33	1,56
Հայաստանից դուրս կատարած ճամփորդությունների չափ	1,79	1,98	1,67

79 Բավարարվածությունը գնահատվել է 1-4 բալով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես բավարարված չեմ», իսկ «4»-ը «լիովին բավարարված եմ»:

Հատկապես ուշագրավ է աշխատանքով/կարիերայով բավարարվածության ցածր գնահատականը՝ 1,92, որը մեկ անգամ ևս փաստում է զբաղվածության խնդրի՝ հայաստանյան երիտասարդների կյանքում հիմնարար լինելու մասին:

Հետաքրքիր տարբերություններ են նկատվում տարբեր սեռերի հարցվածների գնահատականներում. առաջադրված գրեթե բոլոր ոլորտներում արական սեռի հարցվածները գոհունակության համեմատաբար առավել բարձր գնահատականներ են նշում: Իգական սեռի հարցվածների գնահատականը գերազանցում է միայն ներկայումս ունեցած կրթությամբ գոհ լինելու պարագայում (Աղյուսակ 8.1):

Հետաքրքիր է դիտարկել նաև տարբեր տարիքային խմբերի երիտասարդների գնահատականների միջև եղած տարբերությունները: Այս դեպքում ամենաակնառու միտումն այն է, որ որքան մեծ է հարցվողի տարիքը, այնքան ուսումնասիրվող չափանիշների մեծ մասով բավարարվածության գնահատականը ցածր է. բացառություն են կազմում աշխատանքի/կարիերայի և Հայաստանից դուրս կատարած ճամփորդությունների չափի չափանիշները (Աղյուսակ 8.2):

8.2. Տարբեր ոլորտներում ունեցած ձեռքբերումներով բավարարվածության միջին գնահատականներն ըստ հարցվածների տարիքի

	Ընդհանուր միջինը	16-18 տ.	19-23 տ.	24-30 տ.
Ընտանեկան կյանք	3,68	3,82	3,71	3,58
Ընկերների հետ շփում	3,57	3,77	3,68	3,37
Կրթություն	2,83	2,96	2,93	2,66
Նյութական բարեկեցություն	2,63	3,00	2,67	2,43
Առողջ ապրելակերպի կանոններին հետևելու չափ	2,55	2,83	2,61	2,37
Մշակութային, զվարճանքի հաստատություններ հաճախելու չափ	2,14	2,27	2,28	1,96
Աշխատանք/կարիերա	1,92	1,77	1,86	1,99
Մարզական ակումբներ հաճախելու չափ	1,86	2,14	1,98	1,63
Հայաստանից դուրս կատարած ճամփորդությունների չափ	1,79	1,82	1,78	1,79

Ակնառու տարբերություններ են առկա նաև տարբեր բնակավայրերի երիտասարդների՝ ձեռքբերումների մակարդակով ունեցած գոհունակության գնահատականներում: Հետաքրքիր է փաստել, որ գյուղաբնակ երիտասարդները, քաղաքաբնակ իրենց տարեկիցների համեմատ, առավել բարձր գոհունակություն են արտահայտում ընտանեկան կյանքի, ընկերների հետ շփման և առողջ ապրելակերպի կանոններին հետևելու չափի առումով: Գյուղաբնակ երիտասարդները, սակայն, ավելի ցածր են գնահատում իրենց կրթությամբ, աշխատանքով, հատկապես մարզական և մշակութային հաստատություններ այցելելու հաճախականությամբ պայմանավորված բավարարվածությունը (Աղյուսակ 8.3):

Չետաքրքիր է համեմատել նյութական բարեկեցության մակարդակով բավարարվածության գնահատականները. այս առումով ամենաբիչը բավարարված են երևանաբնակ երիտասարդները (2,51), որոնցից մի փոքր ավելի՝ գյուղաբնակները (2,66) և մարզային քաղաքներում բնակվող երիտասարդները (2,74):

8.3. Տարբեր ոլորտներում ունեցած ձեռքբերումներով բավարարվածության միջին գնահատականներն ըստ հարցվածների բնակավայրի

	Ընդհանուր միջինը	Երևան	Մարզային քաղաքներ	Գյուղեր
Ընտանեկան կյանք	3,68	3,64	3,63	3,74
Ընկերների հետ շփում	3,57	3,53	3,53	3,63
Կրթություն	2,83	2,9	2,86	2,73
Նյութական բարեկեցություն	2,63	2,51	2,74	2,66
Առողջ ապրելակերպի կանոնների հետևելու չափ	2,55	2,49	2,51	2,63
Մշակութային, զվարճանքի հաստատություններ հաճախելու չափ	2,14	2,43	2,18	1,87
Աշխատանք/կարիերա	1,92	1,95	2	1,82
Մարզական ակումբներ հաճախելու չափ	1,86	2,05	1,83	1,75
Հայաստանից դուրս կատարած ճամփորդությունների չափ	1,79	1,88	1,86	1,67

Վերը ներկայացված տվյալները դիտարկելիս պետք է հաշվի առնել հետևյալը. *պարտադիր չէ, որ տարբեր սեռերի, տարիքային խմբերի և բնակավայրերի հարցվածների միջև կյանքի տարբեր կողմերով բավարարվածության առումով առկա տարբերությունները պայմանավորված լինեն վերոնշյալ ոլորտներում ունեցած «օբյեկտիվ» ձեռքբերումներով: Այդ տարբերությունները կարող են նաև պայմանավորված լինել տարբեր սեռերի և տարիքային խմբերի երիտասարդների հավակնություններով ու սպասումներով:*

Ներկայում ունեցած ձեռքբերումները և դրանցով բավարարվածության աստիճանը նաև որպես ապագան պլանավորելու շարժառիթներ հանդես գալու որոշակի պոտենցիալ ունեն: Ինչպես ցույց են տալիս քանակական հարցման արդյունքները, *ներկայումս հայաստանյան երիտասարդների ամենաառաջնային պլանները կապված են աշխատանքի և կրթության հետ*⁸⁰ (Աղյուսակ 8.4):

80 Առաջիկա 3 տարիների կտրվածքով աշխատանքի և կրթության հետ կապված կոնկրետ պլանները համապատասխանաբար ներկայացրել ենք 3-րդ և 4-րդ բաժիններում:

8.4. Երիտասարդների կյանքի ամենաառաջնային պլանները

	Ամենաառաջնային նպատակը	Երկրորդ կարևոր նպատակը	Երրորդ կարևոր նպատակը
Աշխատանքի հետ կապված պլաններ	39,7%	27,6%	5,0%
Կրթության հետ կապված պլաններ	20,3%	7,1%	1,7%
Ստեղծել ընտանիք	12,7%	16,3%	14,7%
Բնակարան ձեռք բերել	6,9%	6,5%	5,6%
Սեփական բիզնես հիմնել	3,8%	5,9%	7,4%
Երեխաների համար լավ ապագա ապահովել	3,1%	1,0%	0,5%
Իր և ընտանիքի համար նյութական բարեկեցություն ապահովել	2,7%	2,1%	0,9%
Ծառայել ՀՀ բանակում	1,4%	1,1%	0,4%
Ճամփորդել, հանգստանալ, ժամանց կազմակերպել	1,2%	4,4%	7,6%
Զուգընկեր գտնել	1,2%	2,4%	2,0%
Ավտոմեքենա և այլ թանկարժեք գույք գնել	1,1%	3,2%	4,5%
Այլ պատասխաններ	2,2%	3,8%	5,3%
Ես երբևէ չեմ մտածել այդ մասին/ԴՊ	3,6%		
Ընդամենը	100,00%	81,40%	50,60%

Կյանքի ամենաառաջնային նպատակի վիճակագրության կառուցվածքում *ընտանիք կազմելը* զբաղեցնում է 3-րդ տեղը, միևնույն ժամանակ այդ նպատակն ամենաշատ տոկոսն է հավաքել կյանքի 2-րդ և 3-րդ կարևոր նպատակների շարքում (Աղյուսակ 8.4): Երիտասարդների 3,6%-ը նշել է, որ չի մտածել կյանքի առաջնային նպատակների մասին:

Երիտասարդների ձգտումներին զուգահեռ՝ կարևոր է բացահայտել նաև ապագայում այդ ձգտումների իրականացման աստիճանի սպասումները: Քանակական հարցման շրջանակում երիտասարդներն առաջիկա 3 տարվա կտրվածքով գնահատել են իրենց գերակա նպատակների իրականացման հավանականությունը: Ըստ այդ հավանականությանը վերաբերող հարցին տված պատասխանների՝ երիտասարդների գերակշիռ մասն աշխատանքի հետ կապված նպատակների առումով լավատեսորեն է տրամադրված. 73,4%-ը լիովին կամ ինչ-որ չափով հավանական է համարում այդ նպատակի իրականացումը (Աղյուսակ 8.5):

8.5. Առաջիկա 3 տարվա կտրվածքով երիտասարդների՝ իրենց առաջնային պլանների իրականացման հավանականությանը վերաբերող գնահատականները

	Բոլոր նպատակները (1-ին, 2-րդ և 3-րդ կարևորությամբ)	Ընդհանրապես հավանական չեն համարում	Ավելի շուտ հավանական չեն համարում	Ավելի շուտ հավանական են համարում	Լիովին հավանական են համարում	ԸՆԴՈՒՄ
Աշխատանքի հետ կապված պլաններ	72,3%	5,9%	20,6%	52,6%	20,9%	100,0%
Ստեղծել ընտանիք	43,7%	6,9%	11,1%	42,6%	39,3%	100,0%
Կրթության հետ կապված պլաններ	29,2%	2,0%	10,5%	50,9%	36,6%	100,0%
Բնակարան ձեռք բերել	18,9%	14,3%	33,2%	39,9%	12,6%	100,0%
Սեփական բիզնես հիմնել	17,1%	9,8%	18,5%	51,7%	20,0%	100,0%
Ծամփորդել, հանգստանալ, ժամանց կազմակերպել	13,2%	5,7%	17,6%	49,7%	27,0%	100,0%
Իր և ընտանիքի համար նյութական բարեկեցություն ապահովել	11,4%	12,1%	16,7%	53,0%	18,2%	100,0%
Զուգընկեր գտնել	5,7%	4,5%	4,5%	39,4%	51,5%	100,0%
Երեխաների համար լավ ապագա ապահովել	5,6%	3,8%	11,3%	49,1%	35,8%	100,0%
Ես երբևէ չեմ մտածել այդ մասին/ԴՊ	4,6%	-	-	-	-	-
Ծառայել ԴԴ բանակում	3,6%		8,6%	25,7%	65,7%	100,0%
Առողջական խնդիրները լուծել	2,9%		16,7%	45,8%	37,5%	100,0%

Հոռետեսական գնահատականների առումով ամենաառաջնայինը մոտակա 3 տարում բնակարան ձեռք բերելու հավանականության գնահատականն է. հարցվածների 47.5%-ն այդ նպատակի իրականացումը հավանական չի համարում:

Հետաքրքիր է դիտարկել, թե որոնք են տարբեր սեռերի հարցվածների ամենաառաջնային նպատակները: Ըստ հարցման տվյալների՝ իգական և արական սեռերի հարցվածների համար ամենաառաջնային տեղում են աշխատանքի հետ կապված պլանները (համապատասխանաբար՝ 36,0% և 45,3%): Թեև ըստ նշելու հաճախականության՝ հաջորդ գերակայություններն աղջիկների և տղաների շրջանում նույնպես համընկնում են (2 դեպքում էլ դրանք կրթության, ընտանիք ստեղծելու պլաններն են), սակայն նկատելի է, որ կրթական նպատակների առումով աղջիկները գերազանցում են տղաներին (22,9%՝ 16,5%-ի համեմատ): Տղաներն էլ իրենց հերթին աղջիկներին գերազանցում են ընտանիք կազմելու նպատակների առումով (14,0%՝ 11,9%-ի համեմատ) (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ 8.13): Կյանքի առաջնային նպատակների

գերակայությունների կառուցվածքը (աշխատանք, կրթություն, ընտանիք) կրկնվում է մաև երևանաբնակ և մարզաբնակ երիտասարդների շրջանում (տես Չավելված 8, Աղյուսակ 8.15):

Գենդերային դերերի ավանդական բաշխմանը հակասող տվյալներ են ստացվել այն առումով, որ, օրինակ, բնակարան ձեռք բերելու և ընտանիքի համար նյութական բարեկեցություն ապահովելու նպատակների դեպքում աղջիկների տոկոսը գերազանցում է տղաների տոկոսին. բնակարան ձեռք բերելու նպատակ ունեցող աղջիկները կազմում են 7,9%, տղաները՝ 5,4%, իսկ նյութական բարեկեցություն ապահովելու նպատակի դեպքում՝ աղջիկները՝ 3,4%, տղաները՝ 1,7%:

Չարզվածների կյանքի առաջնային պլաններն ըստ տարիքային խմբերի համեմատելիս՝ ստացվել են օրինաչափ տվյալներ: Ինչպես կարելի էր ակնկալել, 16-ից 18 տարեկանների նպատակների կառուցվածքում գերակայում են կրթական պլանները (59,5%), իսկ 19-ից 30 տարիքի երիտասարդների շրջանում՝ աշխատանքի հետ կապված պլանները (տես Չավելված 8, Աղյուսակ 8.14):

8.2. Երիտասարդների հիմնախնդիրների ընկալումները

Երիտասարդների վարքի մեկնաբանման և կանխատեսման համար առանցքային նշանակություն ունի նրանց սոցիալական տրամադրությունների ուսումնասիրությունը:

Սոցիալական տրամադրություններ հասկացությունը սահմանվում է որպես *կյանքի ընկալման ամբողջական ձև*, որն արտացոլում է անհատների, սոցիալական խմբերի կողմից սոցիալական դիրքորոշումների, սոցիալական նպատակների և շահերի զգացմունքային ու գիտակցական ընկալման մակարդակը, շարունակականությունը և աստիճանը: Սոցիալական տրամադրությունը ձևավորվում է աշխարհի ընկալումից, աշխարհայացքային տարրերից, անձի *սոցիալական փորձի ու նպատակների և շահերի* գնահատականից, ինչն արտացոլվում է անհատների սոցիալական սպասումների մեջ⁸¹: Սոցիալական տրամադրությունն անհատների և սոցիալական խմբերի գործունեության որոշակի վեկտոր է. օրինակ՝ հասարակության գործառնության այս կամ այն փուլում կարող են գերակայել լավատեսական կամ հոռետեսական տրամադրությունները, որոնք արտացոլվում են սոցիալական գործողությունների մեջ⁸²:

Սոցիալական տրամադրությունները բացատրելու համար նշանակալի տեղեկություն է այն, թե երիտասարդների ընկալմամբ՝ որոնք են այս պահին իրենց առջև ծառայած առաջնային խնդիրները: Եթե ընդհանրացված տեսքով ներկայացնենք քանակական հարցման ընթացքում երիտասարդների կողմից նշված 1-ին, 2-րդ և 3-րդ արդիական հիմնախնդիրները, ապա դրանց եռյակը հետևյալ տեսքը կունենա. *գործազրկություն (81,5%), ցածր աշխատավարձեր (47,4%) և բնակարանային խնդիր (35,8%)* (Աղյուսակ 8.6):

81 Тощенко Ж. Т., “Социальное настроение-феномен современной социологической теории и практики”.

82 Дитятев А. Ю., “Методологический потенциал концепции социального настроения в изучении феноменов оптимизма и пессимизма в современном обществе”.

8.6. Երիտասարդների առջև ծառայած ամենահիմնական 3 խնդիրները

	Հիմնախնդիրների ընդհանրացված տոկոսը ⁸³	Ամենաառաջնային հիմնախնդիրը	Երկրորդ հիմնական խնդիրը	Երրորդ հիմնական խնդիրը
Գործազրկություն	81,5%	64,2%	12,1%	5,1%
Ցածր աշխատավարձեր	47,4%	9,4%	27,8%	10,2%
Բնակարանային խնդիր	35,8%	6,5%	15,5%	13,8%
Պետության կողմից երիտասարդությանն աջակցության բացակայություն	21,6%	2,9%	6,1%	12,6%
Կրթության հասանելիություն	17,4%	6,2%	6,3%	4,8%
Առողջական խնդիրներ	13,0%	1,4%	5,0%	6,6%
Մարդու իրավունքների պաշտպանվածության ցածր մակարդակ, անօրինականություններ	12,2%	1,2%	4,7%	6,3%
Կրթության որակ	12,0%	1,7%	4,6%	5,6%
Ինքնաարտահայտման սահմանափակ հնարավորություններ	10,2%	1,9%	4,2%	4,1%
Թմրամոլություն	8,7%	1,5%	2,5%	4,7%
Ծխելու սովորություն	8,4%	1,0%	3,1%	4,3%
Ժամանցի կազմակերպման խնդիրներ	7,0%	0,5%	2,4%	4,1%
Այլ պատասխաններ	3,2%	0,7%	1,2%	1,2%
Սահմանափակ հասանելիություն համայնքի/քաղաքի/երկրի մասշտաբով որոշումների կայացման գործընթացին	2,1%	0,2%	0,9%	1,0%
Հարևան որոշ պետությունների հետ չլուծված հակամարտություններ	1,4%	0,1%	0,3%	1,0%
Ոչ մի խնդիր չկա	0,6%	0,3%	0,1%	0,2%
ԴՊ	0,2%	0,2%		
Ընդամենը	282,6%	100,0%	96,8%	85,7%

Զգալի տոկոս են կազմում նաև այն երիտասարդները, ովքեր որպես ամենաառաջնային խնդիր նշում են պետության կողմից երիտասարդությանն աջակցության բացակայությունը (21,6%):

83 Տոկոսը հաշվարկված է ըստ հարցվածների թվի:

Պետք է նկատել, որ ամենաեական հիմնախնդիրների եռյակը նմանատիպ է տարբեր սեռերի, տարիքային խմբերի և բնակավայրերի երիտասարդների ընկալումներում (տես Չավելված 8, Աղյուսակներ 8.16-8.18):

Քանակական հարցումների շրջանակում վեր հանված խնդիրների աստիճանակարգությունը հաստատվել է նաև *Ֆոկլուս խմբերի քննարկումների* ժամանակ:

Երիտասարդների առջև ծառայած խնդիրները քննարկելիս գրեթե բոլոր հարցվողները, անկախ իրենց տարիքից, սեռից և բնակավայրից, առաջին հերթին նշում էին *գործազրկությունը, աշխատատեղերի բացակայությունը*: Թվարկվող մյուս խնդիրները դիտարկվում էին որպես այս խնդրի ածանցյալ: Ըստ նշվելու հաճախականության՝ հաջորդ տեղերում հիշատակված խնդիրները մեծամասամբ բխում էին զբաղվածության խնդրից: Խոսքը մասնավորապես վերաբերում է աշխատանքի տեղավորման ժամանակ ոչ ֆորմալ կապերի դերի գերակայությանը, ցածր աշխատավարձերին, օրենքով չկանոնակարգված աշխատանքային հարաբերություններին, ինչպես նաև աշխատանքի բացակայության պատճառով ծնողներից կախվածությանը, բնակարանային խնդրին. վերջինը, ֆինանսների սղության հետ մեկտեղ որպես խոչընդոտ է դիտարկվում ամուսնության ճանապարհին:

Գրեթե բոլոր երիտասարդների կողմից վերը նշված հիմնարար խնդրի լուծման պատասխանատուն համարվում է պետությունը, ավելի կոնկրետ՝ Կառավարությունը: Միևնույն ժամանակ առկա հիմնախնդիրների լուծման առումով *ակտիվ դիրքորոշում* է նկատվում երիտասարդների մեծամասնության շրջանում. այսինքն՝ ցանկալի մյուսական բարեկեցության հասնելու հիմնական միջոցը համարվում է աշխատանքը: Պետությանը վերագրվող պատասխանատվությունն էլ հենց այդ միջոցով, այն է՝ աշխատանքով ապահովումն է:

Մարզային երիտասարդների կողմից հաճախ բարձրացվել է ժամանցային վայրերի բացակայության խնդիրը: Ընդ որում՝ եթե ամենաեականը համարվող՝ աշխատատեղերի ստեղծման հիմնական պատասխանատու է համարվում ՀՀ Կառավարությունը, ապա մարզերում ժամանցային ենթակառուցվածքների բացակայության պատասխանատվությունը դրվում է համայնքային/քաղաքային իշխանությունների վրա:

Քննարկումների ժամանակ երիտասարդների կողմից նշվել են նաև այնպիսի մասնավոր հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ երկրում առկա ճնշող մթնոլորտը, կյանքի տարբեր ոլորտներում չափից ավելի պահպանողականությունը, շրջապատի կարծիքի վրա սևեռվածությունը:

Հետազոտության իրականացման ընթացքում որակական հարցազրույցի մեթոդով ուսումնասիրվել են նաև **հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների հիմնախնդիրները**:

Այդ երիտասարդների հետ կայացած խմբային հարցազրույցի ժամանակ նրանք վեր են հանել իրենց առանցքային հիմնախնդիրները: Կենսագործունեության տարբեր ոլորտներին առնչվող գրեթե բոլոր հիմնախնդիրների բարձրաձայնման հիմքում մեծ մասամբ ընկած է հանրային շինությունների և տրանսպորտի՝ այս խմբի անձանց հարմարեցված չլինելու իրողությունը:

Զբաղվածության խնդիրը մասնավորապես վեր է հանվում ոչ միայն և ոչ այնքան աշխատատեղերի բացակայության, որքան հետևյալ 2 գործոնի տեսանկյունից.

- Հատուկ կարիքներով երիտասարդները, հասարակության այլ անդամների համեմատ, գտնվում են անհավասար պայմաններում, եթե նույնիսկ գիտելիքներով և հմտություններով գերազանցում են նրանց: Այսինքն՝ խոսքը վերաբերում է հատուկ կարիքներով

երիտասարդների նկատմամբ առկա խտրական վերաբերմունքին, որը մեծամասամբ դրսևորվում է նրանց հանդեպ կանխատրամադրվածությամբ, նրանց աշխատանքային ունակությունների թերագնահատմամբ:

- Մուտքի և աշխատանքային պայմանների ապահովման առումով շինությունները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող անձանց համար:

Այս խմբի երիտասարդները մատնանշում են նաև **կրթություն ստանալու** անհավասար հնարավորությունների հիմնախնդիրը՝ փաստելով, որ ուսումնական հաստատությունները և ուսումնական գործընթացը հարմարեցված չեն իրենց հատուկ կարիքներին: Խոսքը մասնավորապես վերաբերում է թե՛ ուսումնական հաստատությունների ֆիզիկական պայմաններին (տեղաշարժման խնդիրներ ունեցող ուսանողների համար դրանց հարմարեցված չլինելուն), թե՛ հատուկ կարիքներով ուսանողների համար ուսումնական ձեռնարկների բացակայությանը (օրինակ՝ տեսողության խնդիր ունեցող ուսանողների համար):

Ոչ պակաս կարևոր է **ժամանցի կազմակերպման** հիմնախնդիրը. շինություններ մտնելու և դրանցում տեղաշարժվելու սահմանափակումների պատճառով այս խմբի երիտասարդներն ինքնաբերաբար դուրս են մնում մշակութային անցուղարձից:

Հատուկ կարիքներ ունեցող երիտասարդները նշված խնդիրների լուծման հիմնական պատասխանատու են համարում ՀՀ Կառավարությանը, որից ակնկալվում է.

- հանրային շինությունները տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց հարմարեցնելու պահանջի առաջադրում և դրա կատարման վերահսկողություն,
- հատուկ կարիքներով երիտասարդներին աշխատանքի ընդունելու հարցում գործատուների խրախուսում, վերջիններիս որոշակի պահանջների առաջադրում և դրանց կատարման վերահսկողություն:

Հատուկ կարիքներով երիտասարդների մատնանշմամբ՝ վերջին տարիներին նկատվում է հենց իրենց կողմից դրսևորվող քաղաքացիական ակտիվություն, որը և միտված է իրենց խմբի խնդիրների բարձրածայնմանն ու լուծմանը: Այդ ակտիվության արդյունքները նրանք գնահատում են որպես հատվածական և ոչ մասշտաբային:

Հետազոտության շրջանակում փորձագիտական հարցազրույցի ձևաչափով ուրվագծվել են նաև **ազգային փոքրամասնությունների երիտասարդների** հիմնախնդիրները: Ազգային փոքրամասնությունների հիմնահարցերով զբաղվող մասնագետի կարծիքով՝ նշված խմբի երիտասարդների առջև ծառայած խնդիրները համանման են հայաստանյան մյուս երիտասարդների հիմնախնդիրներին: Մասնագետը որպես հատուկ ուշադրության արժանի խնդիրներ է նշել ազգային ինքնության պահպանումը, մշակութային ժառանգության պահպանումը և վերարտադրումը: Այդ խնդիրների առաջացման պատճառների շարքին է դասվում մարզերում մշակութային ենթակառուցվածքների զարգացվածության ցածր մակարդակը, որը պայմանավորված է ֆինանսական միջոցների սահմանափակությամբ:

Փորձագետի կարծիքով՝ ազգային փոքրամասնությունները մեծ մասամբ չեն բախվում իրենց ազգային պատկանելիությամբ պայմանավորված խնդիրների, մասնավորապես խտրականության հետ:

Այսպիսով՝ հետազոտության թե՛ քանակական, թե՛ որակական տվյալներից պարզ է դառնում,

որ երիտասարդները համակարծիք են իրենց առջև ծառայած էական հիմնախնդիրների հարցում: Այդ հիմնախնդիրների ընկալումների խորապատկերում լավատեսություն-հոռետեսություն չափանիշով հետաքրքիր է դիտարկել երիտասարդների կողմից իրենց ապագայի կանխատեսումները: Հետազոտության շրջանակում երիտասարդներն առաջիկա 5 տարվա կտրվածքով գնահատել են թե՛ իրենց անձնական, թե հասարակական մի շարք ոլորտների ապագան⁸⁴:

8.3. Երիտասարդների սոցիալական տրամադրությունները

Քանակական հարցման տվյալները ցույց են տալիս, որ *հայաստանյան երիտասարդների գերակշիռ մասն առաջիկա 5 տարվա կտրվածքով լավատեսորեն է գնահատել իր ապագան*. կանխատեսումների միջին գնահատականը կազմել է 4,12 առավելագույն 5-ից: Երիտասարդների 50,7%-ը գտնում է, որ իր կյանքն էականորեն կբարելավվի, իսկ 31,4%-ը կարծում է, որ որոշ չափով կբարելավվի (Աղյուսակ 8.7 և Գծապատկեր 8.1): Ընդ որում լավատեսության առումով առավել աչքի են ընկնում աղջիկները, 16-ից 18 տարիքային խմբի և երևանաբնակ երիտասարդները: Այս հարցի պատասխանները, ըստ հարցվածների սեռի, տարիքի և բնակավայրի, ներկայացված են Հավելված 8-ում (Աղյուսակ 8.19): Պետք է նշել նաև, որ այս հարցի շուրջ երիտասարդների գնահատականները բավականին համասեռ են⁸⁵:

8.7. Առաջիկա 5 տարվա կտրվածքով անձնական ապագայի կանխատեսման միջին գնահատականները


Առաջիկա 5 տարվա կտրվածքով անձնական ապագայի կանխատեսումը 5 բալով

Ընդհանուր միջին գնահատականը	Արական	Իգական
4,12	4,07	4,16
16-18	19-23	24-30
4,39	4,23	3,90
Երևան	Մարզային քաղաք	Գյուղ
4,21	4,10	4,07

84 Ապագայի ընկալումները գնահատվել են 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ից 5 թվերն ունեն հետևյալ նշանակությունը. 5-ը՝ «էականորեն կբարելավվի», 4-ը՝ «մի փոքր կբարելավվի», 3-ը՝ «ամեն ինչ կմնա նույնը», 2-ը՝ «մի փոքր կփոխվի դեպի վատը», 1-ը՝ «էականորեն կփոխվի դեպի վատը»:

85 Դիսպերսիան կազմում է 0,18:

☑ 8.1. Առաջիկա 5 տարվա կտրվածքով անձնական ապագայի կանխատեսումները



Վերլուծությունը ցույց է տալիս, որ ապագայի կանխատեսումների և միգրացիոն մտադրությունների միջև առկա է վիճակագրորեն նշանակալի կապ⁸⁶. Խարցվածները որքան լավատեսորեն են գնահատում իրենց ապագան, այնքան փոքրանում է մեկնելու ցանկությունների տարածվածությունը:

Անձնական ապագայի գնահատականներին զուգահեռ՝ հետաքրքիր է դիտարկել երիտասարդների՝ երկրի մի շարք ոլորտների զարգացումներին վերաբերող գնահատականները: Քանակական հարցումների համաձայն՝ առաջիկա 5 տարիներին երիտասարդներն էական փոփոխություններ չեն կանխատեսում հատկապես երկրի սոցիալ-տնտեսական պայմաններում և արդարադատության համակարգում. այս 2 ոլորտների կանխատեսման միջին գնահատականներն ավելի մոտ են սանդղակի՝ «ամեն ինչ կմնա նույնը» կետին (համապատասխանաբար կազմում են 3,55 և 3,3) (Աղյուսակ 8.8): Մյուս ոլորտների փոփոխության միջին գնահատականները գտնվում են «ամեն ինչ կմնա նույնը» և «մի փոքր կբարելավվի» կետերի միջև: Ընդ որում՝ երիտասարդները համեմատաբար ավելի շատ դրական փոփոխություններ են կանխատեսում բանակի մարտունակության գործընթացում (3,82), այնուհետև՝ մշակութային կյանքում (3,72):

📊 8.8. ՀՀ մի շարք ոլորտների ապագայի կանխատեսումների միջին գնահատականներն ըստ հարցվածների սեռի, տարիքի և բնակավայրի

	Ընդամենը	Արական	Իգական	16-18	19-23	24-30	Երևան	Մարզային քաղաք	Չյուր
Սոցիալ-տնտեսական պայմաններ	3,55	3,46	3,61	3,74	3,57	3,44	3,48	3,63	3,55
Կրթական համակարգ	3,67	3,64	3,69	3,77	3,74	3,56	3,54	3,66	3,78
Արդարադատության, դատական համակարգ	3,30	3,31	3,29	3,38	3,30	3,26	3,24	3,32	3,33
Բանակի մարտունակություն	3,82	3,93	3,75	3,90	3,83	3,78	3,71	3,81	3,92
Բանակի կարգապահություն	3,58	3,59	3,57	3,51	3,59	3,60	3,51	3,61	3,61
Մշակութային կյանք	3,72	3,68	3,74	3,74	3,74	3,68	3,74	3,76	3,66

86 Այս 2 փոփոխականների միջև կապի գործակիցը 0.11 է և վիճակագրորեն նշանակալի:

Երկրի առանցքային համակարգերի զարգացումներին վերաբերող գնահատականներում լավատեսական տրամադրություններն առանձնահատուկ միտումներ են դրսևորում՝ կախված հարցվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներից: Այսպես՝ սոցիալ-տնտեսական պայմանների, կրթական համակարգի, բանակի մարտունակության և մշակութային կյանքի փոփոխությունների նկատմամբ համեմատաբար ավելի լավատեսորեն են տրամադրված իգական սեռի հարցվածները: 16-ից 18 տարեկան երիտասարդներն իրենց բնորոշ լավատեսությունը մեծամասամբ պահպանում են. սոցիալ-տնտեսական պայմանների, կրթական համակարգի, արդարադատության համակարգի, բանակի մարտունակության առումներով նրանց միջին գնահատականները գերազանցում են մյուս տարիքային խմբերի երիտասարդների գնահատականներին: Միևնույն ժամանակ փոքր է այս երիտասարդների լավատեսությունը բանակի կարգապահության փոփոխության նկատմամբ (Աղյուսակ 8.8):

Անձնական և հասարակական մի շարք ոլորտների ապագայի կանխատեսումներում զգալի տարբերությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ երիտասարդներն իրենց ապագան դիտարկում են երկրի ապագայից անկախ: Այսինքն՝ երիտասարդներն իրենց ապագան բարելավելու համար հակված են ապավինել սեփական նախաձեռնություններին:

Չնայած երիտասարդներն իրենց ապագան որոշակիորեն առանձնացնում են պետության ապագայից, այնուամենայնիվ պետությունում առկա արդիական հիմնախնդիրների վերաբերյալ մտահոգության բավականին բարձր մակարդակ են արձանագրում: Երիտասարդներին առաջարկվել է գնահատել, մի կողմից, իրենց ընտանիքին վերաբերող հիմնախնդիրներով, մյուս կողմից՝ հասարակական որոշակի հիմնախնդիրներով մտահոգության աստիճանը⁸⁷: Հարցվածների գնահատականները ցույց են տալիս, որ երիտասարդների՝ առաջադրված միկրո և մակրոմակարդակի հիմնախնդիրներով մտահոգության աստիճանը բարձր է սանդղակի 3-րդ՝ «ավելի շուտ մտահոգում է» կետից: Ընդ որում՝ բոլոր հիմնախնդիրներով մտահոգության առումով հարցվածների կարծիքները բավականին համասեռ են⁸⁸: Բացի դրանից.

- Երիտասարդներն ամենից շատ մտահոգվում են իրենց և իրենց ընտանիքի անդամների առողջությամբ և նյութական ապահովվածությամբ. մտահոգության միջին գնահատականները կազմել են 3,9 և 3,81՝ առավելագույն 4-ից (Աղյուսակ 8.9): Ընդ որում՝ 2 ցուցանիշով էլ արական սեռի հարցվածների մտահոգության աստիճանը գերազանցում է իգական սեռի հարցվածների մույն ցուցանիշին:
- Երիտասարդներն ավելի մտահոգված են «Երկրի անկախությամբ» (3,6), քան, օրինակ, անձնական մասնագիտական աճով (3,55) և իրենց ու իրենց հարազատների ֆիզիկական պաշտպանվածությամբ (3,49): Երկրի անկախությունն ավելի շատ մտահոգում է 16-ից 18 տարեկան երիտասարդներին (միջինը 3,71 է՝ մյուս տարիքային խմբերի 3,66-ի և 3,49-ի համեմատ) (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ 8.20):
- Մակրոմակարդակի հիմնախնդիրներով ավելի շատ մտահոգված են մարզաբնակ երիտասարդները, քան իրենց երևանաբնակ հասակակիցները (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ 8.21):

87 Մտահոգության աստիճանը գնահատվել է 4 բալով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես չի մտահոգում», իսկ «4»-ը՝ «չափազանց մտահոգում է»:

88 Դիսպերսիան չի գերազանցում 0,25-ը:

8.9. Աճճնական և հասարակական հիմնախնդիրներով մտահոգության միջին գնահատականներն ըստ հարցվածների սեռի

Աճճնական հիմնախնդիրներ	Ընդամենը	Արական	Իգական
Իմ և ընտանիքիս անդամների առողջությունը	3,9	3,91	3,88
Իմ և ընտանիքիս նյութական ապահովվածությունը	3,81	3,85	3,78
Աճճնական մասնագիտական աճը	3,55	3,49	3,59
Իմ և մտերիմներիս ֆիզիկական պաշտպանվածությունը	3,49	3,50	3,48
Հասարակական հիմնախնդիրներ	Ընդամենը	Արական	Իգական
Երկրի անկախությունը	3,6	3,61	3,60
Մեր երկրում անձի ազատությունների և իրավունքների ապահովումը	3,51	3,51	3,52
Բարոյական արժեքների կորուստը	3,5	3,45	3,54
Երկրում առկա կաշառակերությունը և հովանավորչությունը	3,45	3,27	3,57
Պատերազմի հավանականությունը	3,38	3,30	3,43
Տնտեսական ճգնաժամի հետևանքները	3,23	3,17	3,28
Ազգային ավանդույթների պահպանումը	3,21	3,29	3,15
Արցախում ազատագրված տարածքների կորուստը	3,2	3,27	3,16
Մշակութային գործերի, հուշարձանների պահպանումը	3,2	3,25	3,17

8.4. Երիտասարդների արժեքային կողմնորոշումները

Ցանկացած սոցիալական խմբի, այդ թվում՝ նաև երիտասարդության ձգտումները հասկանալու և մեկնաբանելու համար էական դեր ունի այդ խմբի անդամների արժեհամակարգի ուսումնասիրությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արժեհամակարգի համապարփակ նկարագրությունը ենթադրում է արժեքների տարբեր մակարդակների խորը ուսումնասիրություն (ինչը տվյալ հետազոտության հիմնական նպատակը չէր), այս աշխատանքի շրջանակում շեշտադրվել է այն արժեքների ուսումնասիրությունը, ինչպիսիք են տարբեր սոցիալական խմբերի նկատմամբ հանդուրժողականությունը և քննադատական մտածելակերպը: Այս արժեքների շեշտադրումը պայմանավորված է ժամանակաշրջանի մարտահրավերներով կապված միջազգային զարգացումներին ինտեգրվելու, միջմշակութային հաղորդակցության հմտությունների արդիականության հետ:

Քանակական հետազոտության ընթացքում հարցվողները գնահատել են կրոնի ազատության, արտասահմանցիների, այլ մշակույթների նկատմամբ հետաքրքրությունն ու հաղորդակցության փորձառությունը, սեռական կողմնորոշման ազատության իրավունքի հանդեպ իրենց դիրքորոշումը: Ինչպես պարզ է դառնում արդյունքներից, հայաստանյան երիտասարդ-

ները բավականին հանդուրժողական վերաբերմունք են արտահայտել կրոնի ազատության դրույթի նկատմամբ. «ցանկացած մարդ կարող է հետևել իր նախընտրած կրոնին» դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմում է 3,04՝ առավելագույն 4-ից: Ընդ որում՝ հանդուրժողականության համեմատաբար ավելի մեծ աստիճան են ցուցաբերում 16-ից 18 տարեկան, ինչպես նաև երևանաբնակ երիտասարդները (Աղյուսակ 8.10): Բացի դրանից՝ երիտասարդները բավականին հանդուրժող են նաև այլախոհության նկատմամբ. հարցվածների 85%-ը փաստում է, որ դիմացինի կարծիքը հարգում է նույնիսկ այն դեպքում, երբ այն իր անձնական կարծիքից կտրուկ տարբերվում է:

8.10. Հանդուրժողականություն և մշակութային հետաքրքրասիրություն արտահայտող դատողությունների հետ համաձայնության միջին գնահատականները

	Նորամեր	Արական	Իգական	16-18	19-23	24-30	Երևան	Մարզային բաղաթ	Գյուղ
Ցանկացած մարդ կարող է հետևել իր նախընտրած կրոնին	3,04	3,06	3,03	3,11	3,00	3,05	3,11	3,08	2,96
Ցանկացած մարդ իր սեռական կողմնորոշումն ընտրելու իրավունք ունի (օրինակ՝ լիքել համասեռամոլ)	2,26	2,14	2,34	2,23	2,26	2,28	2,30	2,29	2,22
Եթե դիմացինի կարծիքը կտրուկ տարբերվում է իմ կարծիքից, ես, միևնույնն է, հարգում եմ այն	3,25	3,11	3,34	3,29	3,22	3,25	3,31	3,21	3,25
Հայաստանում արտասահմանցիների չափազանց շատ քանակը վատ է ազդում մեր հասարակության բարոյականության վրա	2,46	2,46	2,46	2,35	2,41	2,56	2,49	2,31	2,56
Ինձ շատ են հետաքրքրում այլ ազգերի մշակույթը, նրանց ավանդույթները	2,73	2,47	2,90	2,92	2,71	2,66	2,81	2,76	2,65
Ես միշտ դժվարանում եմ անկաշկանդ շփվել արտասահմանցիների հետ	2,55	2,50	2,58	2,51	2,51	2,60	2,27	2,58	2,76

Երիտասարդները հակված են չհամաձայնելու այն դատողության հետ, ըստ որի՝ «ցանկացած մարդ իր սեռական կողմնորոշումն ընտրելու իրավունք ունի» (միջինը 2,26 է). ընդ որում՝ տղաները, 16-ից 18 տարեկանները և գյուղաբնակ երիտասարդներն ավելի անհանդուրժող են համասեռամոլության նկատմամբ (Աղյուսակ 8.10):

Երիտասարդները հանդուրժողականության բարձր աստիճան են ցուցաբերում հայ հասարակությունում արտասահմանցիների ներկայության նկատմամբ. նրանք այնքան էլ համաձայն չեն

այն դատողության հետ, որ «Չայաստանում արտասահմանցիների չափազանց շատ քանակը վատ է ազդում մեր հասարակության բարոյականության վրա» (2,46): Միևնույն ժամանակ երիտասարդները գտնում են, որ արտասահմանցիների հետ անկաշկանդ հաղորդակցվելու առումով այնքան էլ չեն դժվարանում (2,55):

Ինչ վերաբերում է երիտասարդների՝ այլ ազգերի մշակույթներով հետաքրքրվածության մակարդակին, ապա այն այնքան էլ բարձր չէ, «ինձ շատ են հետաքրքրում այլ ազգերի մշակույթը, նրանց ավանդույթները» դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմում է 2,73 (այսինքն՝ մոտ է սանդղակի «ավելի շուտ համաձայն են» կետին):

Քանակական հարցման շրջանակում չափվել են նաև երիտասարդների կողմից **սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ ընդունելի սոցիալական հեռավորության ընկալումները**: Դրանք չափվել են Բոգարդուսի սանդղակով, որը 7 բալանոց է, և դրա յուրաքանչյուր միջև բնութագրում է սոցիալական հարաբերության մի տիպ: Սանդղակում «1» միջև բնութագրում է ամենամտերին, իսկ «7»-ը՝ ամենահեռու սոցիալական հեռավորությունը: Ներկայացնում ենք կիրառված սանդղակի միջերը և դրանց մեկնաբանությունները.

- 1 Ամուսնանալ
- 2 Մտերմություն, ընկերություն անել
- 3 Միևնույն աշխատավայրում աշխատել
- 4 Միևնույն բնակավայրում ապրել հարևանությամբ
- 5 Պարզապես ծանոթ լինել
- 6 Ապրել միևնույն պետությունում
- 7 Ոչ մի հարաբերություն

Չարցման շրջանակում երիտասարդներին առաջարկվել է գնահատել ազգային, ռասայական, կրոնական, սեռական կողմնորոշման և սոցիալական կարգավիճակի չափանիշներով առանձնացված 15 սոցիալական խմբերի հետ հարաբերությունների՝ իրենց համար ընդունելի ձևաչափերը:

Երիտասարդների՝ տարբեր **էթնիկ և ռասայական խմբերի** հետ հնարավոր հարաբերություններին տված գնահատականները ցույց են տալիս.

- Առաջադրված խմբերից և ոչ մեկի ներկայացուցիչների հետ ամուսնությունն ու մտերմությունն այնքան էլ ընդունելի չեն,
- Ամենամոտ հեռավորությունն արձանագրվել է *ռուսների և սլավոնական ազգերի հետ* հարաբերությունների առումով, ինչը, սակայն, մոտ է գտնվում «միևնույն աշխատավայրում աշխատել» հարաբերությանը և կազմում է 3,41. Ընդ որում՝ հարցվածների կարծիքները բավականին ցրված են (դիսպերսիան կազմում է 0,52):
- Գրեթե նույնչափ հեռավորությունն ընդունելի է նաև ամերիկացիների և Արևմտյան Եվրոպայի ազգերի ներկայացուցիչների հետ հարաբերություններում (միջինները համապատասխանաբար 3,78 և 3,79 են):
- Չայաստանյան երիտասարդները ծագում են ամենամեծ հեռավորությունը պահպանել ադրբեջանցիների և թուրքերի հետ հարաբերություններում (Աղյուսակ 8.11):

8.11. Էթնիկ և ռասայական խմբերից ընդունելի սոցիալական հեռավորության միջին գնահատականներն ըստ հարցվածների սեռի

	Ընդամենը	Արական	Իգական
Ռուսներ և սլավոնական այլ ազգեր	3,41	3,17	3,56
Արևմտաեվրոպացիներ (օրինակ՝ անգլիացիներ, ֆրանսիացիներ և այլն)	3,78	3,81	3,75
Ամերիկացիներ (ԱՄՆ)	3,79	3,79	3,79
Վրացիներ	4,18	4,08	4,25
Այլ ռասաների ներկայացուցիչներ	4,74	4,72	4,75
Յնդիկներ	5,07	5,27	4,93
Արաբներ	5,47	5,33	5,56
Պարսիկներ	5,62	5,43	5,75
Թուրքեր	6,45	6,29	6,56
Ադրբեջանցիներ	6,59	6,51	6,65

Տարբեր չափանիշներով առանձնացված սոցիալական խմբերի հետ երիտասարդների համար ընդունելի հարաբերությունների գնահատականները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ՝

- նրանք ավելի մոտ հարաբերություններ կարող են ունենալ «ժայրահեղ աղքատների», քան «շատ հարուստների» հետ (միջինները համապատասխանաբար 3,65 և 4,48 են),
- նրանց համար ամենաանընդունելի են համասեռամուլների և ՄԻՎ/ՉԻԱՀ վարակակիրների հետ հարաբերություններն են: Ընդ որում՝ այս առումով երիտասարդների կարծիքները միմյանց բավականին մոտ են (բոլոր խմբերի դեպքում դիսպերսիան չի գերազանցում 0,25-ը) (Աղյուսակ 8.12):

8.12. Սոցիալական տարբեր խմբերից ընդունելի սոցիալական հեռավորության միջին գնահատականներն ըստ հարցվածների սեռի

	Ընդամենը	Արական	Իգական
Ծայրահեղ աղքատներ	3,65	3,44	3,78
Շատ հարուստներ	4,48	4,36	4,55
Այլ կրոն դավանողներ	5,93	5,91	5,93
ՄԻՎ/ՉԻԱՀ վարակակիրներ	6,21	6,4	6,08
Համասեռամուլներ	6,71	6,88	6,59

Տվյալները ցույց են տալիս, որ գրեթե սոցիալական բոլոր խմբերի հետ հարաբերությունների առումով առավել բաց են տղաները, քան աղջիկները: Այս դեպքում, սակայն, բացառություն են կազմում համասեռամուկները և ՄԻՎ/ՉԻԱՀ վարակակիրները, որոնցից արական սեռի ներկայացուցիչները գերադասում են առավել մեծ տարածություն պահպանել:

Դիտարկված բոլոր էթնիկ խմբերի հետ հարաբերություններում, բացառությամբ արաբների, պարսիկների, թուրքերի, համեմատաբար ավելի բաց են 16-ից 18 տարեկան երիտասարդները: Այս օրինաչափությունը չի պահպանվում մյուս սոցիալական խմբերից՝ համասեռամուկների առումով (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ 8.22):

Երևանաբնակ երիտասարդները, մարզաբնակ իրենց հասակակիցների համեմատ, ավելի բաց են ամերիկացիների, արևմտաեվրոպացիների, այլ ռասաների ներկայացուցիչների, այլ կրոն դավանողների առումով: Որոշ տարբերություններ են նկատվում նաև համասեռամուկների և ՄԻՎ/ՉԻԱՀ վարակակիրների հետ հարաբերությունների պարագայում (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ 8.23):

Ինչպես նշել ենք, այս հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են որոշակի արժեքների կարևորությունը երիտասարդների կյանքում: Այդ արժեքներն են՝ կրթվածությունը, հարստությունը, քննադատական մտածելակերպը, անհատականությունը, ինքնուրույնությունն ու անկախությունը, սոցիալական շրջապատի նշանակալիությունը: Ստորև, ըստ հարցվածների համար դրանց նշանակալիության նվազման, կներկայացնենք նշված արժեքների աստիճանակարգությունը⁸⁹ (Աղյուսակ 8.13)⁹⁰:

Արժեքների կառուցվածքում գերակայում է **կրթվածությունը** (միջինը՝ 3,63). հարցվածների 93,3%-ի համար այս արժեքը կարևոր է: Ընդ որում՝ հարցվածները բավականին միակարծիք են այս հարցի շուրջ (դիսպերսիան կազմում է 0,17): Պետք է նկատել, որ այս արժեքն առավել էական է իգական (3,68), քան արական սեռի հարցվածների համար (3,55): 16-ից 18 տարեկան երիտասարդներն էլ մի փոքր ավելի են արժևորում կրթվածություն արժեքը (3,73՝ տարիքային մյուս 2 խմբերի 3,60-ի համեմատ) (տե՛ս Հավելված 8, Աղյուսակներ 8.24-8.26):

Քննադատական մտածելակերպը՝ իր բաղադրիչներով հանդերձ, երիտասարդների համար նույնպես էական արժեք է: Այսպես՝ երիտասարդները նշում են, որ պատրաստ են պայքարել իրենց տեսակետի համար (միջինը՝ 3,59), դժվար են համոզվում, քանի դեռ դիմացինը չի հիմնավորել իր տեսակետը (3,34), հակված չեն այն բանին, որ մեծամասնության ազդեցությամբ կանխակալ կարծիք կազմեն մարդու մասին: Ընդ որում՝ արական սեռի հարցվածների քննադատական մտածելակերպ մատնանշող ցուցանիշներն ավելի բարձր են, քան իգական սեռի հարցվածներինը (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ 8.24):

Ուշադրության է արժանի «երբեք կասկածի տակ չեն դնում դարերից եկած ավանդույթները» դատողությունը, որը չափում է մտածողության իներցիոն լինելը և հանդես է գալիս որպես քննադատական մտածելակերպի մի բնութագրիչ: Այս դատողության հետ երիտասարդները

89 Առաջադրված արժեքները չափվել են որոշակի դատողությունների հետ համաձայնության աստիճանի միջոցով: Համաձայնությունն իր հերթին չափվել է 4 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «4»-ը՝ «լիովին համաձայն եմ»:

90 Արժեքների ուսումնասիրության ժամանակ պետք է նկատի ունենալ այն գործոնը, որ հարցվողները պատասխանելիս կարող են առաջնորդվել սոցիալապես ընդունելի և ցանկալի պատասխաններ տալու սկզբունքով: Սա վերաբերում է հատկապես ինքնըստինքյան ենթադրվող այնպիսի արժեքների, ինչպիսիք են՝ կրթությունը, ընտանիքը, առողջությունը և այլն:

մեծամասամբ «ավելի շուտ համաձայն են»։ միջինը կազմում է 3,17: Նշված պատկերը հիմք է տալիս եզրակացնելու, որ երիտասարդների կյանքում ավանդույթները շարունակում են էական դերակատարում ունենալ՝ ճնայած անձնական տեսակետի համար պայքարելու, փաստարկված տեսակետներ լսելու սկզբունքներին և մեծամասնության ազդեցությանը չենթարկվելու կարողությանը:

Հետաքրքիր է նկատել, որ երիտասարդների համար **սոցիալական շրջապատի նշանակալիությունը** բավականին էական է, երբ խոսքը վերաբերում է այդ շրջապատի կողմից նրանց ձեռքբերումների ճանաչմանը և գնահատմանը (3.27): Միևնույն ժամանակ շրջապատից տարբերվելը (ինչը նույնպես չափում է սոցիալական շրջապատի դերը), կարելի է ասել, չի դիտարկվում որպես էական խնդիր (2,25):

Երիտասարդների պնդմամբ՝ իրենց համար պակաս կարևորություն է ներկայացնում **«հարուստ լինելը»**: «Ինձ համար չափազանց կարևոր է հարուստ լինելը» դատողության հետ համաձայնության միջին գնահատականը կազմել է 2,3 (հարցվածների 42,7%-ն է այս կամ այն չափով համաձայնել դատողության հետ):

8.13. Երիտասարդների արժեքների աստիճանակարգությունն ըստ դատողությունների հետ համաձայնության միջին գնահատականների

Արժեք	Արժեքն արտահայտող դատողություն	Դատողության հետ համաձայնության միջին գնահատական
Կրթվածություն	Ինձ համար չափազանց կարևոր է կրթված, զարգացած լինելը	3,63
Քննադատական մտածելակերպ	Ես միշտ ձգտում եմ պայքարել իմ տեսակետի համար	3,59
Անհատականություն	Կյանքում հաջողության են հասնում նրանք, ովքեր հույսն իրենց վրա են դնում	3,54
Ինքնուրույնություն	Ինձ համար չափազանց կարևոր է ինքնուրույն որոշում կայացնելը	3,44
Անկախություն	Ինձ համար չափազանց կարևոր է ազատ լինելը, ոչ ոքից կախում չունենալը	3,35
Քննադատական մտածելակերպ	Ինձ սովորաբար դժվար է համոզելը, քանի դեռ զրուցակիցս չի հիմնավորել իր կարծիքը	3,34
Սոցիալական շրջապատի նշանակալիություն	Ինձ համար չափազանց կարևոր է, որ շրջապատն ընդունի և ճանաչի իմ ձեռքբերումները, այն, ինչին հասել եմ	3,27
Ավանդապաշտություն/ օրինապահություն	Ես կարծում եմ, որ մարդիկ միշտ պետք է հետևեն օրենքներին և ավանդույթներին նույնիսկ այն դեպքում, երբ շրջապատում ոչ ոք դրանց չի հետևում	3,21
Քննադատական մտածելակերպ	Երբեք կասկածի տակ չեմ դնում դարերից եկած ավանդույթները	3,17
Հարստություն	Ինձ համար չափազանց կարևոր է հարուստ լինելը	2,30
Սոցիալական շրջապատի նշանակալիություն	Ինձ համար չափազանց կարևոր է շրջապատից տարբերվելը	2,25
Քննադատական մտածելակերպ	Եթե շրջապատում մեծամասնությունը կարծում է, որ տվյալ մարդը վատն է, ուրեմն դա այդպես էլ կա	1,83

Այսպիսով՝ հայաստանյան երիտասարդների հիմնական ձգտումները կապված են աշխատանքի և կրթության հետ: Ընտանիք կազմելու ձգտումը հաջորդում է այդ երկուսին:

Չնայած հասարակությունում առկա բազմաթիվ հիմնախնդիրներին՝ երիտասարդների մեծամասնությունը լավատեսորեն է նայում իր կյանքի առաջիկա 5 տարիների զարգացումներին: Լավատեսական որոշակի երանգներ կան նաև հայաստանյան որոշ ոլորտների զարգացմանը վերաբերող գնահատականներում, սակայն այդ գնահատականներն անձնական ապագայի լավատեսական գնահատականներից զգալիորեն ցածր են: Անձնական և հասարակական մի շարք ոլորտների ապագայի կանխատեսումներում առկա զգալի տարբերությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ երիտասարդներն իրենց ապագան դիտարկում են երկրի ապագայից անկախ: Այսինքն՝ երիտասարդներն իրենց ապագան բարելավելու համար հակված են ապավինել սեփական նախաձեռնություններին:



ԲԱԺԻՆ 9.

Երիտասարդների ժամանցը

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են մաև երիտասարդների կենսագործունեության բաղկացուցիչ մասերից մեկին՝ ժամանցի կազմակերպմանը վերաբերող հարցեր, մասնավորապես՝ ժամանցի վայրերը և հաճախելու պարբերականությունը, երաժշտական նախասիրությունները, ինտերնետային սոցիալական ցանցերի օգտագործումը և այլն:

9.1. Ժամանցի վայրերը

Քանակական հարցման շրջանակում հարցվածները նշել են, թե առաջարկված ձևերից յուրաքանչյուրով ինչ հաճախականությամբ են կազմակերպում իրենց ժամանցը: Ինչպես պարզ է դառնում ստացված տվյալներից, հայաստանյան երիտասարդների առօրեական ժամանցի (ամեն օր և շաբաթը 1-2 անգամ) ամենատարածված ձևերից են ինտերնետային սոցիալական ցանցեր մտնելը (47,1%), զբոսնելը (19,8%) և ընկերների տուն հաճախելը (16,7%) (Աղյուսակ 9.1): Ընդ որում՝ ժամանցի ամենատարածված այս 3 ձևերի դեպքում էլ արական սեռի հարցվածներն էականորեն գերազանցում են իգական սեռի հարցվածներին (տե՛ս Հավելված 9, Աղյուսակ 9.7):

Երիտասարդների 19%-ի պնդմամբ՝ իրենք շաբաթը 1-2 անգամ հաճախում են սրճարաններ, ակումբներ, բարեր, ռեստորաններ: 18,9%-ն էլ նշված վայրերը հաճախում է ամիսը 2-3 անգամ:

Մշակութային հաստատություններ (կինոթատրոն, թատրոն, թանգարան, պատկերասրահ, համերգ) երիտասարդների 12,6%-ն այցելում է ամիսը 2-3, 17,9%-ն էլ՝ ամիսը 1 անգամ: Երիտասարդների 34,1%-ը նշել է, որ երբեք մշակութային հաստատություններ չի հաճախում:

9.1. Ժամանցի վայրեր այցելելու հաճախականությունը

	Ամեն օր	Շաբաթը 1-2 անգամ	Ամիսը 2-3 անգամ	Ամիսը 1 անգամ	3 ամիսը 1 անգամ	Ավելի հազվադեպ, քան 3 ամիսը 1 անգամ	Երբեք	ԴՊ
Ընկերներից որևէ մեկի տուն գնալ	16,7%	39,9%	17,3%	11,6%	3,2%	8,2%	2,9%	0,2%
Սրճարաններ, ակումբներ, բարեր, ռեստորաններ	2,2%	19,0%	18,9%	14,1%	9,1%	12,3%	24,0%	0,2%
Գյուղի կենտրոնական վայրերում հավաքույթներ	3,4%	3,2%	3,2%	2,6%	1,1%	3,9%	82,6%	0%
Զբոսանքներ Չեր քաղաքում/գյուղում	19,8%	26,7%	13,4%	10,4%	4,5%	6,2%	18,7%	0,4%
Մշակութային հաստատություններ (կինոթատրոն, թատրոն, թանգարան, պատկերասրահ, համերգ)	0,1%	4,7%	12,6%	17,9%	11,1%	19,4%	34,1%	0,2%
Ինտերնետային սոցիալական ցանցեր, chat-եր	47,1%	15,9%	3,0%	2,4%	1,0%	1,5%	28,9%	0,2%
Համատեղ մասնակցություն տոներին (ծննդյան արարողություն, Նոր տարի և այլն)	1,2%	7,2%	34,0%	27,0%	16,2%	10,5%	2,9%	1,0%
Հանգիստ քաղաքից դուրս՝ բնության գրկում	0,4%	2,3%	8,6%	10,2%	20,7%	38,3%	19,1%	0,4%
Գեղարվեստական, երաժշտական, մշակութային խմբակներ հաճախել	0,5%	2,1%	1,1%	2,1%	2,3%	8,6%	82,7%	0,7%

Բավականին ցածր է նաև գեղարվեստական, երաժշտական, մշակութային խմբակներ հաճախելիության մակարդակը. ամիսն առնվազն 1 անգամ այդպիսի խմբակներ է այցելում երիտասարդների 5,2%-ը:

Առանձնակի ուշադրության է արժանի ժամանցի կազմակերպումն ըստ հարցվածների բնակավայրերի տիպերի դիտարկելը: Ժամանցի ամենատարածված ձևերի առաջին եռյակը, համամասնության որոշակի տարբերություններով հանդերձ, ըստ էության, 3 տիպի բնակավայրերում էլ նույնն է (տես Հավելված 9, Աղյուսակ 9.8): Ժամանցի որոշ ձևերի առումով, սակայն, մարզերի և երևանի երիտասարդության վարքագծում առկա են զգալի տարբերություններ: Գյուղերի երիտասարդության 49,2%-ը նշում է, որ երբեք չի հաճախում մշակութային հաստատություններ: Մարզային քաղաքների երիտասարդների շրջանում նույն ցուցանիշը կազմում է 33%, այնինչ Երևանում այդպիսի երիտասարդները 16,5% են կազմում: Մարզաբնակ երիտասարդները գերակշռում են նաև գեղարվեստական, երաժշտական, մշակութային խմբակներ երբեք չհաճախելու առումով:

Մարզաբնակ երիտասարդների կողմից մշակութային և ժամանցի այլ վայրերի հաճախելիության ցածր աստիճանը պայմանավորված է նրանց բնակավայրերում համապատասխան ենթակառուցվածքների բացակայությամբ: Այս խնդիրը բազմիցս նշվել է նաև ֆոկլորաբանական քննարկումների ժամանակ. իրենց համար ամենաէական զբաղվածության և կրթության հիմնախնդիրներից հետո երիտասարդները հաճախ բարձրաձայնում էին ժամանցի վայրերի (օրինակ՝ զբոսայգիների) բացակայության կամ դրանց դժվար հասանելիության խնդրի մասին: Ընդ որում՝ համապատասխան ենթակառուցվածքներ զարգացնելու պատասխանատվությունը երիտասարդները դնում էին համայնքային իշխանությունների վրա:

Բացի ժամանցից՝ ուսումնասիրվել է նաև երիտասարդների կողմից առողջ ապրելակերպի որոշ կանոնների պահպանումը: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների 45,1%-ը երբեք չի զբաղվում մարմնամարզությամբ կամ որևէ մարզաձևով: Մյուս կողմից հարցվածների 10,2%-ն ամեն օր զբաղվում է ինչ-որ մարզաձևով, իսկ 14,8%-ը՝ շաբաթը մի քանի անգամ (Աղյուսակ 9.2): Պետք է նկատել, որ սպորտով զբաղվելու առումով զգալիորեն ավելի պասիվ են իգական սեռի հարցվածները, իսկ տարիքային խմբերից ամենապասիվը 24-ից 30 տարեկանների խումբն է: Սպորտով երբեք չզբաղվողները գերակշռում են գյուղերում, միևնույն ժամանակ գյուղերի երիտասարդների զգալի տոկոսն ամեն օր կամ շաբաթը մի քանի անգամ զբաղվում է ինչ-որ մարզաձևով (տես Հավելված 9, Աղյուսակներ 9.9-9.11):

Երիտասարդների 91%-ը երբեք չի հաճախում այլ տիպի ֆիզիկական և մտավոր վարժանքների դասընթացների (յոգայի, մեդիտացիայի և այլն):

9.2. Առողջ ապրելակերպի կանոններին հետևելու ըստ հարցվածների սեռի

	Ամեն օր	Շաբաթը մի քանի անգամ	Շաբաթը 1 անգամ	Ամիսը մի քանի անգամ	Ամիսը առնվազան 1 անգամ	Ավելի հազվադեպ, քան ամիսը 1 անգամ	Երբեք
Մարմնամարզությամբ և սպորտով զբաղվել							
Արական	14,0%	17,7%	6,1%	7,7%	4,8%	9,4%	40,3%
Իգական	7,7%	12,8%	7,6%	6,6%	6,3%	10,6%	48,3%
Բոլոր հարցվածները	10,2%	14,8%	7,0%	7,1%	5,7%	10,1%	45,1%
Այլ տիպի ֆիզիկական և մտավոր վարժանքների դասընթացների հաճախել (յոգայի, մեդիտացիայի և այլն)							
Արական	1,7%	0,6%	0,6%	0,6%	0,6%	2,3%	93,3%
Իգական	1,1%	1,5%	0,3%	1,9%	1,5%	3,9%	89,5%
Բոլոր հարցվածները	1,3%	1,2%	0,4%	1,4%	1,2%	3,2%	91,0%
Ծխախոտ օգտագործել							
Արական	49,9%	3,5%	0,6%	0,4%	1,0%	2,1%	42,4%
Իգական	0,8%	0,1%	0,0%	0,1%	0,0%	0,4%	98,5%
Բոլոր հարցվածները	20,3%	1,5%	0,2%	0,2%	0,4%	1,1%	76,2%
Ալկոհոլ օգտագործել							
Արական	1,5%	9,2%	7,9%	17,3%	16,7%	21,9%	25,5%
Իգական	0,3%	1,0%	1,7%	7,3%	10,9%	25,0%	53,9%
Բոլոր հարցվածները	0,7%	4,2%	4,2%	11,3%	13,2%	23,8%	42,6%

Հետաքրքիր է նկատել, որ հարցվածների 76,2%-ը նշում է, թե ընդհանրապես չի ծխում, ընդ որում՝ երբեք ծխախոտ չի օգտագործում իգական սեռի հարցվածների 98,5%-ը, իսկ արական սեռի հարցվածների դեպքում՝ 42,4%-ը: Վերջիններին 49,9%-ն էլ նշել է, որ ամեն օր ծխախոտ է օգտագործում⁹¹: Ինչպես կարելի էր ենթադրել, ամեն օր ծխախոտ օգտագործողները գերակշռում են 19-ից բարձր տարիքային խմբերում: Համեմատաբար ավելի քիչ են ծխախոտ օգտագործում մարզային քաղաքներում (տես Հավելված 9, Աղյուսակներ 9.9-9.11):

Ստացված տվյալներից պարզ է դառնում, որ երիտասարդների 42,6%-ը երբեք ալկոհոլ չի օգտագործում (համեմատաբար ավելի տարածված է ամիսը մեկ կամ մի քանի անգամ օգտագործելը): Ալկոհոլի օգտագործումն ավելի տարածված է արական սեռի, 19-ից բարձր տարիքային խմբերի և երևանաբնակ երիտասարդների շրջանում (տես Հավելված 9, Աղյուսակներ 9.9-9.11):

91 Ծխախոտի օգտագործմանը վերաբերող հարցի պատասխանները (մասնավորապես իգական սեռի և 16-ից 18 տարեկան երիտասարդների կողմից) կարող են այնքան էլ անկեղծ չլինել:

9.2. Երիտասարդների երաժշտական նախասիրությունները

Երիտասարդների կենսաոճն ու աշխարհայացքը նկարագրող չափանիշ կարող է լինել նրանց երաժշտական ճաշակը:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հայ երիտասարդներն առավել հաճախ լսում են երաժշտական հետևյալ ոճերը՝ ռափիս (37,8%), հայկական (36,3%) և արևմտյան պոպուլյար երաժշտություն (23,3%) (Աղյուսակ 9.3): Հետաքրքիր է արական և իգական սեռերի հարցվածների նախընտրած ոճերի առաջատար եռյակի համեմատությունը: Արական սեռի հարցվածների շրջանում ոճերի աստիճանակարգության առաջին տեղում է ռափսը (51,4%), որին համապատասխանաբար հաջորդում են հայկական պոպուլյար (36,3%) և արևմտյան պոպուլյար ոճերը (23,3%): Իգական սեռի հարցվածների նախընտրություններում առաջատարը հայկական պոպուլյար ոճն է (43,6%), երկրորդ տեղը կիսում են ռափիս և արևմտյան պոպուլյար ոճերը (2 ոճերն էլ՝ 28,8%):

9.3. Երաժշտական ոճերի նախասիրություններն ըստ հարցվածների սեռի⁹²

Երաժշտական ոճ	Ոճի մասն	Արական	Իգական
Ռափիս	37,8%	51,4%	28,8%
Հայկական պոպուլյար	36,3%	25,3%	43,6%
Արևմտյան պոպուլյար	23,3%	14,8%	28,8%
Ռուսական պոպուլյար	9,5%	7,1%	11,0%
Հիպ-հոպ	9,2%	14,2%	5,9%
Արևմտյան ռոք	8,9%	6,7%	10,3%
Հայ դասական	7,8%	5,0%	9,7%
Արտասահմանյան դասական	7,6%	7,1%	7,9%
Գործիքային երաժշտություն	6,2%	6,3%	6,2%
Ռուսական/հայկական շանսոն	5,7%	8,8%	3,7%
Հայկական ազգային երգեր	4,9%	4,2%	5,4%
Հայկական ազգագրական երգեր	4,6%	5,6%	3,9%
R & B	3,8%	1,9%	5,1%
Քաղաքային ֆոլկ	3,8%	5,4%	2,8%
Ռուսական ռոք	2,6%	3,5%	1,9%
Ջազ	2,2%	1,9%	2,3%
ԴՊ	2,0%	2,9%	1,4%
Այլ ոճեր	9,6%	8,8%	10,1%

92 Տոկոսների գումարը գերազանցում է 100-ը, քանի որ մեկ հարցվողը մշել է մի քանի պատասխան:

Փաստենք, որ երաժշտական ոճերի՝ վերը ներկայացված առաջատար եռյակը պահպանվում է տարիքային բոլոր խմբերում և բնակավայրերում, չնայած նախասիրությունների համամասնությունների միջև առկա են որոշակի տարբերություններ: Այսպես՝ ռաբիս և հայկական պոպուլյար երաժշտություն համեմատաբար ավելի շատ են լսում 19-ից 23 և 24-ից 30 տարեկան երիտասարդները, քան 16-ից 18 տարեկանները: Վերջիններս էլ տարիքային մյուս խմբերին գերազանցում են արևմտյան պոպուլյար երաժշտություն լսելու առումով՝ 31,8%՝ 19-23 խմբի 25%-ի և 24-30 խմբի 17,6%-ի համեմատ (տես Հավելված 9, Աղյուսակ 9.12):

Ռաբիս ոճի նախընտրության տարածվածության առումով մարզաբնակ երիտասարդները գերազանցում են երևանաբնակ երիտասարդներին: Եթե երևանում ռաբիս երաժշտություն է լսում երիտասարդների 25,3%-ը, ապա մարզային քաղաքներում՝ 39%-ը, իսկ գյուղերում՝ 47,1%-ը: Նույն համամասնությունը պահպանվում է նաև հայկական պոպուլյար երաժշտություն նախընտրողների պարագայում: Ի հակադրություն նշված երկու ոճերի՝ արևմտյան պոպուլյար ոճն ավելի տարածված է քաղաքաբնակ, քան գյուղաբնակ երիտասարդների շրջանում (տես Հավելված 9, Աղյուսակ 9.13):

Հետաքրքիր է դիտարկել ոչ մասսայական ճաշակ բնորոշող՝ դասական երաժշտության նախընտրությունների տոկոսը: Բոլոր հարցվածների շրջանում այդպիսի նախընտրություն ունեցող երիտասարդները մոտ 14,4% են կազմում: Ինչ վերաբերում է ռոքի՝ որպես պրոգրեսիվ երիտասարդությանը բնորոշող երաժշտության ոճի նախընտրությանը, ապա այդ ոճի երաժշտություն պարբերաբար լսում է երիտասարդների 8,9%-ը:

9.3. Լրատվամիջոցների սպառումը

Երիտասարդների աշխարհայացքի ձևավորման առանցքային ինստիտուտներից է *զանգվածային լրատվամիջոցների (ՁԼՄ-ներ)* համակարգը: Դրանց սպառման առանձնահատկությունների ուսումնասիրությունն օգտակար է ոչ միայն երիտասարդների նախընտրությունները բացահայտելու, այլև այս սոցիալական խմբին առավել արդյունավետ կերպով որոշակի հաղորդագրություններ ուղարկելու տեսանկյունից:

Քանակական հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների կողմից ամենօրյա սպառման լրատվամիջոցների շարքում գերակայում են հայկական հեռուստաալիքները (83,6%) և ինտերնետային սոցիալական ցանցերը (47,1%): Այս լրատվամիջոցներին հաջորդում են արտասահմանյան և մալուխային հեռուստաալիքները (31,0%), ինտերնետային հայաստանյան լրատվական կայքերը (20,8%), ինտերնետային ժամանցային կայքերը (20,8%): Ամեն օր ռադիո է լսում երիտասարդների 13%-ը (Աղյուսակ 9.4): Նշենք, որ ամեն օր հայկական հեռուստաալիքներ դիտողները դրանք օրական դիտում են միջին հաշվով 180 րոպե, իսկ սոցիալական ցանցերից ամեն օր օգտվողներն այդ ցանցերում անցկացնում են օրական 150 րոպե:

Մնացած ՁԼՄ-ներից յուրաքանչյուրի ամենօրյա սպառումը չի գերազանցում 10%-ը: Նշված և այլ լրատվամիջոցների սպառման հաճախականությունը, միջին, նվազագույն և առավելագույն տևողությունները ներկայացված են Հավելված 9-ում՝ Աղյուսակ 9.18-ում:

9.4. Երիտասարդների կողմից առավել հաճախ սպառվող լրատվամիջոցները

	Ամեն օր	Շաբաթը մի քանի անգամ	Շաբաթը 1 անգամ	Ամիսը մի քանի անգամ	Ամիսը առնվազն 1 անգամ	Ավելի հազվադեպ, քան ամիսը 1 անգամ	Երբեք
Հայկական հեռուստաալիքներ	83,6%	7,8%	2,6%	1,3%	0,7%	0,9%	2,8%
Ինտերնետային սոցիալական ցանցեր	47,1%	13,5%	3,3%	3,4%	1,7%	2,0%	28,9%
Արտասահմանյան և մալուխային հեռուստաալիքներ	31,0%	9,8%	3,0%	1,7%	1,1%	2,6%	50,8%
Ինտերնետային հայաստանյան լրատվական կայքեր	20,8%	10,7%	7,0%	4,2%	1,3%	1,8%	54,2%
Ինտերնետային ժամանցային կայքեր	20,8%	10,7%	7,0%	4,2%	1,3%	1,8%	54,2%
Ռադիո	13,0%	7,0%	3,4%	2,5%	2,1%	3,9%	68,2%

Հայաստանյան իրականությունում համեմատաբար նոր երևույթի, այն է՝ սոցիալական ցանցերի լայն կիրառման պատճառներն ընկալելու համար կարևոր է հասկանալ, թե այդ ցանցերից օգտվող երիտասարդներն ինչ գործառույթ են վերագրում դրանց:

Հարցման տվյալները ցույց են տալիս, որ սոցիալական ցանցերը մեծ մասամբ (հարցվածների 48,9%-ի համար) հանդես են գալիս որպես հեռու գտնվող ծանոթների/հարազատների հետ շփվելու միջոց, ինչպես նաև՝ ինֆորմացիայի աղբյուր (հարցվածների 34,2%-ի համար) (Աղյուսակ 9.5): Ընկերներ ձեռք բերելու նպատակով սոցիալական ցանցերից օգտվում է հարցվածների 20,8%-ը: Հարցվածների 13,5%-ն էլ սոցիալական ցանցերի միջոցով կազմակերպում է իր ժամանցը: Հետաքրքիր է նկատել, որ սոցիալական ցանցերը՝ որպես ժամանցի և հակառակ սեռի հետ ծանոթանալու միջոց, ավելի շատ դիտարկում են տղաները, քան աղջիկները: Առավելապես 16-ից 18 և 19-ից 23 տարեկան երիտասարդներն էլ դրանց միջոցով շատ ընկերներ ունենալու, հակառակ սեռի ներկայացուցիչների հետ ծանոթանալու հնարավորություն են տեսնում (տես՝ Հավելված 9, Աղյուսակ 9.14-9.15):

9.5. Սոցիալական ցանցերի դերի ընկալումներն ըստ հարցվածների սեռի⁹³

Սոցիալական ցանցերի դերի ընկալումները	Ընդամենը	Արական	Իգական
Զեռու գտնվող ծանոթների/հարազատների հետ շփվելու միջոց	48,9%	50,3%	48,0%
Ինֆորմացիայի աղբյուր	34,2%	29,4%	37,4%
Շատ ընկերներ ունենալու միջոց	20,8%	22,8%	19,6%
Դրանց միջոցով արագ տեղեկանում ես նորություններին և ստանում քեզ հուզող հարցերի պատասխանները	16,9%	14,2%	18,8%
Ժամանցի միջոց	13,5%	19,0%	9,9%
Հակառակ սեռի ներկայացուցիչների հետ ծանոթանալու և շփվելու միջոց	9,9%	19,4%	3,6%
Ոչ մի դեր չունեն	9,0%	7,5%	9,9%
Հաղորդակցվելու միջոց	5,8%	3,8%	7,2%
Ինքնաարտահայտման միջոց	2,9%	3,8%	2,3%
Դրանց միջոցով կարելի է կիսվել ունեցած խնդիրների և ձեռքբերումների շուրջ	2,9%	2,7%	2,8%
Սոցիալական ինտերնետ կայքերում հեշտորեն կարելի է հաղորդակցվել կյանքում անմիջական հաղորդակցության համար դժվար հասանելի մարդկանց հետ (հայտնի մարդկանց)	2,5%	3,1%	2,1%
Սոցիալական ինտերնետ կայքերում առավել հեշտ է սեփական կարծիքը ներկայացնել և առաջ տանել, քան անմիջական իրականությունում	1,7%	1,3%	1,9%
Հանրության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի լուծման վրա ազդեցություն ունենալու միջոց են	1,3%	1,0%	1,5%
Այլ պատասխաններ	3,2%	3,6%	2,7%
ԴՊ	10,0%	17,1%	14,3%

Քանակական հարցման շրջանակում երիտասարդները գնահատել են ՋԼՍ-ների որոշ հատկանիշներ⁹⁴: Նրանց մեծամասնությունը համաձայն է այն դատողության հետ, որ հայաստանյան հեռուստատեսությունում չափից ավելի շատ են ժամանցային ծրագրերը (ֆիլմեր, սերիալներ, համերգներ, հունորային հաղորդումներ և այլն): Դատողության հետ համաձայնության միջինը 3,44 է, հարցվածների կարծիքներն այս հարցի շուրջ համասեռ են, չնայած այս դատողության հետ ավելի շատ համաձայն են 24-ից 30 տարեկան երիտասարդները, քան տարիքային մյուս

93 Պատասխանների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ մեկ հարցվողը նշել է մի քանի պատասխան:

94 Հարցվողներին առաջարկվել են ՋԼՍ-ներին վերաբերող դատողություններ, որոնց հետ համաձայնության աստիճանը գնահատվել է 4 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «բացարձակապես համաձայն չեմ», իսկ «4»-ը «լիովին համաձայն եմ»:

խմբերի ներկայացուցիչները⁹⁵ (տե՛ս Հավելված 9, Աղյուսակներ 9.16-9.17):

Երիտասարդները հակված են համաձայնել նաև այն դատողության հետ, ըստ որի՝ հայաստանյան հեռուստատեսությունը բավարար չափով չի անդրադառնում երիտասարդների խնդիրներին (միջինը 3,03 է): Բացի դրանից՝ հայաստանյան հեռուստատեսությունը, ըստ երիտասարդների, մշակույթի և կրոնի վերաբերյալ բավարար չափով հաղորդումներ չի ցուցադրում (Աղյուսակ 9.6.):

Միևնույն ժամանակ երիտասարդները չեն գտնում, որ հայաստանյան ՁԼՄ-ներում խոսքի ազատության մակարդակը բարձր է:

9.6. ՁԼՄ-ներին վերաբերող դատողությունների հետ համաձայնության միջին գնահատականներն ըստ հարցվածների սեռի

	Միջին գնահատականը	Արական	Իգական
Կարծում են, որ հայաստանյան հեռուստատեսությունում չափից ավելի շատ են ժամանցային ծրագրերը (ֆիլմեր, սերիալներ, համերգներ, հունորային հաղորդումներ և այլն)	3,44	3,44	3,44
Հայաստանյան հեռուստատեսությունը բավարար չափով չի անդրադառնում երիտասարդների խնդիրներին	3,03	3,04	3,02
Ես սովորաբար տեղեկությունը ստուգում եմ տեղեկատվական մի քանի աղբյուրների հիման վրա	2,77	2,80	2,75
Հեռուստատեսությամբ չափից ավելի շատ են ցուցադրվում տխուր նորություններ, ֆիլմեր, հաղորդումներ	2,67	2,61	2,71
Կարծում են, որ հայաստանյան ՁԼՄ-ներում խոսքի ազատության մակարդակը բարձր է	2,43	2,39	2,45
Հայաստանյան հեռուստատեսությունը բավարար չափով ցուցադրում է մշակութային հաղորդումներ	2,38	2,44	2,34
Ես գնալով ավելի ու ավելի շատ ժամանակ եմ անցկացնում ինտերնետում	2,25	2,44	2,12
Հայաստանյան հեռուստատեսությունը բավարար չափով հաղորդումներ է ցուցադրում կրոնի վերաբերյալ	2,02	2,06	1,99

95 24-ից 30 տարեկանների համաձայնության միջինը կազմում է 3,55՝ 16-ից 18 տարեկանների 3,27-ի և 19-ից 23 տարեկանների 3,41-ի համեմատ:

Փաստորեն երիտասարդները ցանկանում են, որ հայաստանյան ՋԼՍ-ներում ավելի քիչ լինեն զվարճալի, իսկ ավելի շատ՝ մշակութային հաղորդումները:

Այսպիսով՝ հայաստանյան երիտասարդների առօրեական ժամանցի (ամեն օր և շաբաթը 1-2 անգամ) ամենատարածված ձևերից են ինտերնետային սոցիալական ցանցեր մտնելը, զբոսնելը և ընկերների տուն հաճախելը: Ուրրտի ամենաարդիական խնդիրներից է մարզաբնակ, հատկապես գյուղաբնակ երիտասարդների ժամանցի կազմակերպման հնարավորությունների սահմանափակությունը, որի պատճառը նշված բնակավայրերում ժամանցային ենթակառուցվածքների բացակայությունը կամ զարգացած չլինելն է:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ⁹⁶

Հավելված 1.

Նարցվածների սոցիալ- ժողովրդագրական սլյալները

96 Հավելվածները կազմվել են ըստ համապատասխան բաժինների համարակալման:

1.5. Հարցվածների սեռը

	Տոկոս
Արական	39,8%
Իգական	60,2%
Ընդամենը	100,0%

1.6. Հարցվածների տարիքը

	Տոկոս
16-18 տարեկան	20,1%
19-23 տարեկան	37,5%
24-30 տարեկան	42,4%
Ընդամենը	100,0%

1.7. Հարցվածների բնակավայրը

	Տոկոս
Երևան	31,2%
Մարզային քաղաքներ	30,5%
Գյուղեր	38,3%
Ընդամենը	100,0%

1.8. Հարցվածների էթնիկ ինքնանույնականացումը

Հայ	1177	97,8%
Ասորի	4	0,3%
Եզդի	15	1,2%
Ռուս	3	0,2%
Քուրդ	4	0,3%
Հնդիկ	1	0,1%
Ընդամենը	1204	100,0%

Հավելված 3.

**ԸՆՏԱՆԻՖԻՆ
ՎԵՐԱԲԵՐՈՂ
ԱՊՂՈՍԱԿՆԵՐ**



3.5. Ամուսնության նախընտրելի տարիքի ընկալումներն ըստ հարցվածների կրթության

Կրթական մակարդակը	Ձեր կարծիքով՝ ո՞րն է ամուսնության համար ամենանախընտրելի տարիքը աղջկա դեպքում	Ձեր կարծիքով՝ ո՞րն է ամուսնության համար ամենանախընտրելի տարիքը տղայի դեպքում
Կրթություն չունեն	19,00	20,00
Թերի միջնակարգ (1-8 դասարան)	21,30	24,60
Միջնակարգ (10-12 դասարան)	21,91	25,18
Միջին մասնագիտական	22,84	26,15
Թերի բարձրագույն (ուսանող)	22,44	25,80
Բարձրագույն (բակալավր)	23,12	26,67
Բարձրագույն (մագիստրատուրա)	24,03	28,21
Ընդամենը	22,38	25,76

3.6. Ընտանիք կազմելու ճանապարհին առկա խոչընդոտների հաղթահարման նախընտրելի մեխանիզմներն ըստ հարցվածների սեռի

Նախընտրելի մեխանիզմները	Արական	Իգական
Բարձր վարձատրվող աշխատանք ունենալը	42,5%	35,2%
Ցանկացած կայուն աշխատանք ունենալը	21,1%	23,1%
Առնվազն միջին վարձատրությամբ աշխատանք ունենալը	9,5%	8,6%
Պետության կողմից անվճար բնակարանի տրամադրումը	7,6%	10,5%
Պետական աջակցությունը երիտասարդ ընտանիքներին մատչելի գներով բնակարաններ ձեռք բերելու հնարավորություն տալով	6,3%	8,9%
Սեփական քրտնաջան աշխատանքը	4,2%	4,8%
Ծնողների/հարազատների կողմից բնակարանի տրամադրումը	3,8%	4,2%
Այլ պատասխաններ	1,9%	1,4%
Պետության կողմից երիտասարդներին աշխատանքով ապահովելը	1,1%	1,7%
Պետական աջակցությունը երիտասարդ ընտանիքներին շահավետ պայմաններով վարկեր տրամադրելով	0,8%	0,7%
Ծնողների/հարազատների ֆինանսական օժանդակությունը	0,6%	0,6%
Դժվարանուն եմ պատասխանել	0,4%	0,4%
Ընդամենը	100,0%	100,0%

3.7. Երիտասարդների համար ընտանիք կազմելու ճանապարհին ընկած ամենաառաջնային խոչընդոտներն ըստ հարցվածների բնակավայրի

Ամենաառաջնային խոչընդոտները	Բոլոր հարցվածները	Երևան	Սարգսյան քաղաքներ	Գյուղեր
Աշխատանք չունենալը	57,0%	45,7%	61,6%	62,5%
Բնակարանային խնդիրները (առանձին բնակարանի բացակայություն, առկա բնակարանի փոքր մակերես)	24,8%	33,8%	21,0%	20,4%
Աշխատանքի/եկամտի աղբյուրների անկայունությունը	6,4%	7,2%	6,3%	5,9%
Ցածր վարձատրությունը/եկամուտները	4,7%	6,4%	4,6%	3,3%
Համապատասխան զուգընկերոջ բացակայությունը	3,3%	3,5%	3,0%	3,5%
Երկրի տնտեսական անկայունությունը	1,8%	1,3%	2,5%	1,7%

3.8. Երիտասարդների համար ընտանիք կազմելու ճանապարհին ընկած խոչընդոտների հաղթահարման նախընտրելի տարբերակներն ըստ հարցվածների բնակավայրի

Նախընտրելի տարբերակները	Երևան	Սարգսյան քաղաքներ	Գյուղեր	Ընդամենը
Բարձր վարձատրվող աշխատանք ունենալը	32,1%	31,0%	36,9%	100,0%
Ցանկացած կայուն աշխատանք ունենալը	27,0%	31,5%	41,6%	100,0%
Պետության կողմից երիտասարդներին աշխատանքով ապահովելը	30,4%	27,7%	42,0%	100,0%
Առնվազն միջին վարձատրությամբ աշխատանք ունենալը	21,5%	34,6%	43,9%	100,0%
Պետական աջակցությունը երիտասարդ ընտանիքներին մատչելի գներով բնակարաններ ձեռք բերելու հնարավորություն տալով	42,6%	27,7%	29,8%	100,0%
Սեփական քրտնաջան աշխատանքը	25,5%	34,5%	40,0%	100,0%
Պետության կողմից անվճար բնակարանի տրամադրումը	52,1%	16,7%	31,3%	100,0%

3.9. Երիտասարդների ընտանիքի կազմը

	Բոլոր հարցվածները	Երևան	Մարզային քաղաքներ	Գյուղեր
Միայնակ ապրող	0,5%	0,8%	0,3%	0,4%
Սեփական մուկլեար	8,1%	7,7%	10,6%	6,5%
Ծնողների մուկլեար	36,2%	39,9%	37,1%	32,5%
Սեփական ընդլայնված	19,3%	14,9%	22,1%	20,6%
Ծնողների ընդլայնված	16,3%	14,9%	15,0%	18,4%
Այլ	19,6%	21,8%	15,0%	21,5%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%



Հավելված 4.

**Կրթությանը
վերաբերող
աղյուսակներ**

4.5. Ուսումնական հաստատության ընտրության շարժառիթները

Շարժառիթները	Առաջին պատճառ	Երկրորդ պատճառ	Երրորդ պատճառ
Այնտեղ ամենաորակյալ կրթությունն է իմ նախընտրած մասնագիտությամբ	22,3%	2,3%	
Այն առավել մոտ է մեր բնակավայրին	12,6%	4,1%	0,5%
Այնտեղ ընդունվելն ավելի հեշտ է	9,3%	0,1%	
Ծնողներիս, ընկերներիս, բարեկամներիս խորհրդով	9,2%	2,7%	1,1%
Չեղինակավոր է	8,9%		
Միայն այնտեղ են պատրաստում իմ նախընտրած մասնագիտությամբ մասնագետ	8,9%	3,6%	1,7%
Այնտեղ ուսման վարձերը համեմատաբար ցածր են	8,5%		
Հավաքած միավորներն այստեղի համար են բավարարել	5,2%	1,2%	0,8%
Այլ	5,2%	2,7%	0,5%
ԴՊ	2,9%		
Այնտեղ դասավանդում է/են իմ ծանոթը/ները	2,4%	0,1%	
Այնտեղ են սովորում իմ ընկերները/մտերիմները	2,0%	0,9%	1,1%
Այնտեղ սովորելը հեշտ է	1,3%	1,2%	
Անվճար էր	0,8%	0,5%	0,1%
Այդ բուհում հնարավոր էր զորակոչից տարկետում ստանալ	0,4%	2,4%	0,1%
ԸՆդամենը	100,0%	19,5%	6,0%

4.6. Ուսումնական հաստատություն ընտրելու շարժառիթներն ըստ դրանց տիպի

	Միջին մասնագիտական հաստատություն, քոլեջ, ուսումնարան	Դեռավան բարձրագույն ուսումնական հաստատություն	Մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն՝ պետական մեռ.շի դիպլոմով	Մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ոչ պետական մեռ.շի դիպլոմով	Միջպետական բարձրագույն ուսումնական հաստատություն	Կարճաժամկետ դասընթացներ, քոլեջներ որևէ կազմակերպությունում	Մասնագիտություն ապահովող դասընթացներ անմատի մոտ (օրինակ՝ արհեստավոր)	Կրտսերկույա բուհի մասնաճյուղ 77-ում	Ընդամենը
Չեղիմնակավոր է	2,4%	15,8%	2,5%						8,9%
Այնտեղ ընդունվելն ավելի հեշտ է	13,8%	5,4%	17,7%	16,7%			4,0%		9,3%
Այնտեղ սովորելը հեշտ է	2,8%	0,8%							1,3%
Այնտեղ ամենաորակյալ կրթությունն է իմ նախընտրած մասնագիտությամբ	16,7%	27,6%	17,7%	16,7%	25,0%	14,3%	20,0%	25,0%	22,3%
Այդ բուհում հնարավոր էր զորակոչից տարկետում ստանալ		0,3%			25,0%			25,0%	0,4%
Այնտեղ ուսման վարձերը համեմատաբար ցածր են	11,4%	5,1%	13,9%	16,7%		21,4%	8,0%		8,5%
Այն առավել մոտ է մեր բնակավայրին	20,3%	9,7%	1,3%	16,7%		21,4%	16,0%		12,6%
Այնտեղ դասավանդում է/են իմ ծանոթը/ները	3,3%	0,8%	5,1%	16,7%		7,1%	4,0%		2,4%
Ծնողներիս, ընկերներիս, բարեկամներիս խորհրդով	11,4%	5,4%	16,5%	16,7%		7,1%	24,0%		9,2%
Անվճար էր	0,8%	0,8%				7,1%			0,8%
Միայն այնտեղ են պատրաստում իմ նախընտրած մասնագիտությամբ մասնագետ	5,7%	12,6%	5,1%			7,1%	4,0%		8,9%
Այնտեղ են սովորում իմ ընկերները/մտերիմները	2,8%	1,3%	2,5%				4,0%		2,0%
Հավաքած միավորներն այստեղի համար են բավարարել	0,8%	7,5%	10,1%					25,0%	5,2%
Այլ	4,9%	4,8%	6,3%		25,0%	7,1%		25,0%	5,2%
ԴՊ	2,8%	2,1%	1,3%		25,0%	7,1%	16,0%		2,9%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

4.7. Կրթության հետ կապված պլաններն ըստ հարցվածների տարիքի և սեռի

	Արական				Իգական			
	16-18	19-23	24-30	Ընդամենը	16-18	19-23	24-30	Ընդամենը
Կրթության հետ կապված պլաններ չունեն	19,8%	40,9%	73,1%	48,2%	7,8%	34,5%	73,1%	47,2%
Ստանալ բարձրագույն կրթություն (առաջին բարձրագույն կրթություն)	49,5%	9,9%	5,7%	16,7%	44,7%	9,6%	5,4%	14,5%
Ստանալ հավելյալ բարձրագույն կրթություն		4,9%	1,1%	2,5%	2,8%	2,4%	1,5%	2,1%
Ուսումը շարունակել մագիստրատուրայում (Հայաստանում)	5,0%	17,7%	5,7%	10,6%	11,3%	20,5%	3,3%	10,8%
Ուսումը շարունակել մագիստրատուրայում (արտերկրում)	2,0%	1,5%	0,6%	1,3%	0,7%	4,4%	1,8%	2,5%
Ուսումը շարունակել ասպիրանտուրայում (Հայաստանում)			1,1%	0,4%		2,8%	1,8%	1,8%
Ուսումը շարունակել ասպիրանտուրայում (արտերկրում)		0,5%	1,7%	0,8%		0,8%	0,9%	0,7%
Ընդունվել միջին մասնագիտական հաստատություն (քոլեջ, տեխնիկում և այլն)	5,9%	1,5%	0,6%	2,1%	7,1%	2,4%	0,6%	2,5%
Հայաստանում հաճախել կարճաժամկետ դասընթացների, թրեյնինգների	3,0%	2,0%	2,3%	2,3%	7,8%	5,6%	7,2%	6,8%
Արտերկրում հաճախել կարճաժամկետ դասընթացների, թրեյնինգների			0,6%	0,2%			0,9%	0,4%
Զբաղվել ինքնակրթությամբ	1,0%	1,0%	1,7%	1,3%		0,4%	0,6%	0,4%
Ընդունվել պետական բուհ (մասնավոր բուհից հետո)	1,0%	0,5%	1,1%	0,8%	2,1%	3,2%	0,9%	1,9%
Ավարտել ներկայիս ուսումնական հաստատությունը	7,9%	18,7%	4,6%	11,3%	11,3%	11,6%	1,2%	6,8%
Այլ պատասխաններ					1,4%		0,3%	,4%
ԴՊ	5,0%	1,0%		1,5%	2,8%	1,6%	0,6%	1,4%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

4.8. Ուսումնական հաստատություններում բարելավման ենթակա ամենաառաջնային կողմերն ըստ դրանց տեսակի

	Ավագ դպրոց/հիմնական դպրոց	Միջին մասնագիտական հաստատություն, քոլեջ, ուսումնարան	Պետական բարձրագույն ուսումնական հաստատություն	Մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն	Օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություն	Կարճաժամկետ դասընթացներ որևէ կազմակերպությունում
Ոչինչ բարելավելու կարիք չկա, ամեն ինչ կարգին է	31,6%	19,1%	10,7%	15,3%	55,6%	35,7%
Ուսումնական ծրագիրը և ներկայացվող նյութը դարձնել արդիական	3,8%	2,8%	8,6%	7,1%	0,0%	0,0%
Դասավանդվող նյութը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին	2,2%	2,4%	7,2%	5,9%	0,0%	0,0%
Օգտագործել ժամանակակից ուսուցման մեթոդներ (ինտերակտիվ գործիքներ, ցուցադրական նյութեր և այլն)	6,6%	11,0%	8,6%	12,9%	0,0%	7,1%
Սովորողներին ինքնուրույն աշխատանք կատարելու ավելի շատ հնարավորություն ընձեռել	3,8%	6,9%	6,4%	9,4%	0,0%	7,1%
Ավելի շատ շեշտադրել գործնական հմտությունների և կարողությունների զարգացումը, պրակտիկան	1,5%	8,1%	4,8%	11,8%	22,2%	0,0%
Բարձրացնել դասավանդողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը	6,4%	3,7%	8,8%	7,1%	0,0%	0,0%
Բարելավել գրադարանների հագեցվածությունը, այդ թվում՝ էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները	4,6%	5,7%	9,4%	5,9%	0,0%	7,1%
Բարելավել համակարգչային սրահների, լաբորատորիաների հագեցվածությունը	7,1%	3,7%	5,1%	3,5%	11,1%	7,1%
Վերանորոգել շենքը, լսարաններն ու այլ օժանդակ տարածքները, ապահովել հարմարություններով (ջեռուցում, հիգիենիկ պայմաններ և այլն)	22,1%	20,3%	9,7%	7,1%	0,0%	21,4%
Արտասահմանյան կրթական հաստատությունների հետ ընդլայնել համագործակցությունն ու փոխանակման ծրագրերը	0,7%	1,6%	6,2%	2,4%	0,0%	0,0%

	Ավագ դպրոց/հիմնական դպրոց	Միջին մասնագիտական հաստատություն, քոլեջ, ուսումնարան	Պետական բարձրագույն ուսումնական հաստատություն	Մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն	Օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություն	Կարճաժամկետ դասընթացներ որևէ կազմակերպությունում
Վերացնել կաշառքը	5,5%	8,1%	9,1%	9,4%	0,0%	7,1%
Վերացնել «ծանոթների» միջոցով հարցեր կարգավորելու երևույթը	2,4%	2,4%	3,5%	2,4%	0,0%	7,1%
Այլ պատասխաններ	0,4%	1,6%	1,6%	0,0%	11,1%	0,0%
Դժվարանում են պատասխանել	1,1%	2,4%	0,3%	0,0%	0,0%	0,0%
ԸՆԴԱՄԵՆՆԸ	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

Հավելված 5.

**Երիտասարդների
գրադպրագրությանը
վերաբերող
աղյուսակներ**



5.6. Աշխատանքի հատկանիշների կարևորության միջին գնահատականներն ըստ հարցվածների սեռի

	Արական	Իգական	Ընդամենը
Նյութատեխնիկական հագեցվածությունը, պայմանները	3,24	3,32	3,28
Աշխատանքի համապատասխանությունը մասնագիտությանը	3,22	3,38	3,32
Դիրքի բարձրացման հնարավորությունները	3,44	3,32	3,37
Անձնական-մասնագիտական աճի հնարավորությունները	3,53	3,50	3,51
Աշխատանքի հետաքրքրությունը	3,55	3,58	3,57
Հաճելի կուլեկտիվը	3,65	3,62	3,64
Վերադասների վերաբերմունքն աշխատակիցների նկատմամբ	3,72	3,64	3,68
Աշխատողի իրավունքների պաշտպանվածությունը	3,70	3,75	3,73
Աշխատավարձը	3,81	3,72	3,75

5.7. Աշխատանքային հարաբերություններին վերաբերող դատողությունների հետ համաձայնության միջին գնահատականներն ըստ հարցվածների սեռի

	Արական	Իգական	Ընդամենը
Հայաստանում լավ մասնագետները միշտ էլ կարողանում են իրենց մասնագիտությամբ աշխատանքի անցնել	2,44	2,65	2,57
Աշխատանքում հաջողության հասնելու համար առավել կարևոր է բախտ ունենալը, քան աշխատելը	2,57	2,70	2,65
Ես գերադասում եմ միայնակ կատարել աշխատանքը, քան ներգրավել այլ մարդկանց	2,93	3,01	2,98
Աշխատողների իրավունքներին վերաբերող օրենքները միայն «թղթի վրա» են և չեն գործում	3,16	3,13	3,14
Հայաստանում հնարավոր չէ բարեկեցության հասնել առանց քրտնաջան աշխատելու	3,11	3,21	3,17
Աշխատանքում հաջողության հասնելու համար առավել կարևոր է լավ ծանոթներ ունենալը, քան քրտնաջան աշխատելը	3,2	2,83	2,98

5.8. Աշխատանքային հարաբերություններին վերաբերող դատողությունների հետ համաձայնության միջին գնահատականներն ըստ հարցվածների տարիքի

	16-18	19-23	24-30	Ընդամենը
Հայաստանում լավ մասնագետները միշտ էլ կարողանում են իրենց մասնագիտությամբ աշխատանքի անցնել	2,59	2,52	2,60	2,57
Աշխատանքում հաջողության հասնելու համար առավել կարևոր է բախտ ունենալը, քան աշխատելը	2,39	2,70	2,73	2,65
Հայաստանում հնարավոր չէ բարեկեցության հասնել առանց քրտնաջան աշխատելու	3,13	3,19	3,16	3,17
Աշխատողների իրավունքներին վերաբերող օրենքները միայն «թղթի վրա» են և չեն գործում	2,91	3,14	3,26	3,14
Ես գերադասում եմ միայնակ կատարել աշխատանքը, քան ներգրավել այլ մարդկանց	2,87	2,91	3,09	2,98
Աշխատանքում հաջողության հասնելու համար առավել կարևոր է լավ ծանոթներ ունենալը, քան քրտնաջան աշխատելը	2,62	2,88	3,04	2,90

5.9. Աշխատանքային հարաբերություններին վերաբերող դատողությունների հետ համաձայնության միջին գնահատականներն ըստ հարցվածների բնակավայրի

	Երևան	Մարզային քաղաք	Գյուղ	Ընդամենը
Հայաստանում լավ մասնագետները միշտ էլ կարողանում են իրենց մասնագիտությամբ աշխատանքի անցնել	2,48	2,50	2,68	2,57
Աշխատանքում հաջողության հասնելու համար առավել կարևոր է բախտ ունենալը, քան աշխատելը	2,58	2,68	2,69	2,65
Հայաստանում հնարավոր չէ բարեկեցության հասնել առանց քրտնաջան աշխատելու	2,94	3,23	3,30	3,17
Աշխատողների իրավունքներին վերաբերող օրենքները միայն «թղթի վրա» են և չեն գործում	3,24	3,15	3,05	3,14
Ես գերադասում եմ միայնակ կատարել աշխատանքը, քան ներգրավել այլ մարդկանց	2,94	2,94	3,04	2,98
Աշխատանքում հաջողության հասնելու համար առավել կարևոր է լավ ծանոթներ ունենալը, քան քրտնաջան աշխատելը	2,90	2,95	2,86	2,90

5.10. Նախընտրելի աշխատանք գտնելու համար անհրաժեշտ նախապայմաններն ըստ կրթության

	Բոլոր հարցվածները	Անավարտ միջնակարգ	Միջնակարգ	Միջին մասնագիտական	Բարձրագույն (ուսանողներ)	Բարձրագույն
Որակյալ կրթությունը	35,7%	29,4%	36,1%	34,1%	42,4%	33,2%
Ազդեցիկ ծանոթները	16,7%	18,6%	15,0%	18,0%	11,7%	22,4%
Մասնագիտական բարձրակարգ գիտելիքները և հմտությունները	10,3%	4,9%	7,1%	10,2%	17,6%	12,8%
Աշխատանքային փորձը	6,1%	9,8%	5,8%	5,4%	4,9%	6,8%
Համապատասխան աշխատատեղերի առկայությունը	6,1%	4,9%	7,1%	10,2%	2,0%	5,6%
Դիպլոմը	4,2%	5,9%	5,6%	3,0%	2,9%	2,4%
Կաշառքը	3,9%	2,9%	3,5%	3,6%	4,4%	4,8%
«Բախտը բերելը»	3,9%	8,8%	3,5%	3,6%	2,9%	3,6%
Նպատակասլաց լինելը	3,9%	1,0%	5,0%	4,8%	3,9%	2,4%
Ճարպիկ լինելը	3,6%	6,9%	4,4%	1,2%	2,9%	2,8%
Ցանկացած կրթություն	2,3%	6,9%	2,9%	1,8%	1,5%	
Երիտասարդ տարիքը	1,3%		1,3%	2,4%	1,0%	1,6%
Բարետես արտաքինը	0,8%		0,8%	1,2%	1,5%	0,4%
Այլ պատասխաններ	0,6%		0,8%	0,60%		0,8%
Լավ երաշխավորագրերը	0,4%		0,6%		0,5%	0,4%
ԸՆԴՀԱՄԵՆՆԸ	99,9%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%



Հավելված 6.

**Երիտասարդների
միգրացիոն
սրամադրությունների
վերաբերող
աղյուսակներ**

6.5. Արտերկիր ձեկնելու նպատակներն ըստ տարիքի

Նպատակները	Բոլոր երիտասարդների տոկոսը			Մեկնել ցանկացողների տոկոսը		
	16-18 տ.	19-23 տ.	24-30 տ.	16-18 տ.	19-23 տ.	24-30 տ.
Սովորելու	24,8%	19,0%	9,2%	30,3%	23,6%	12,3%
Աշխատելու	34,3%	47,3%	46,5%	41,9%	58,6%	62,0%
Մշտական բնակություն հաստատելու	15,3%	17,3%	20,8%	18,7%	21,4%	27,7%
Բարեկամներին, հարազատներին, ընկերներին այցելելու	16,1%	13,1%	13,3%	19,7%	16,2%	17,8%
Ընտանիքի անդամին այցելելու	2,9%	4,9%	3,1%	3,5%	6,0%	4,2%
Հանգստանալու, շրջագայելու	45,5%	34,3%	26,9%	55,6%	42,5%	35,9%
Այլ պատասխաններ	1,2%	0,4%	1,0%	1,5%	0,5%	1,3%
ԴՊ	0,0%	0,0%	0,2%	0,0%	0,0%	0,3%
Ընդամենը	140,1%	136,3%	121,0%	122,2%	123,8%	133,5%

6.6. Արտերկիր ձեկնելու նպատակներն ըստ հարցվածների բնակավայրի

Նպատակները	Բոլոր երիտասարդների տոկոսը			Մեկնել ցանկացողների տոկոսը		
	Երևան	Մարզային քաղաք	Գյուղ	Երևան	Մարզային քաղաք	Գյուղ
Սովորելու	25,5%	15,3%	8,9%	32,4%	19,3%	11,4%
Աշխատելու	49,5%	41,4%	42,5%	62,8%	52,4%	54,3%
Մշտական բնակություն հաստատելու	17,0%	19,3%	18,7%	21,6%	24,5%	23,8%
Բարեկամներին, հարազատներին, ընկերներին այցելելու	16,8%	14,2%	11,1%	21,3%	17,9%	14,1%
Ընտանիքի անդամին այցելելու	4,0%	3,5%	3,7%	5,1%	4,5%	4,7%
Հանգստանալու, շրջագայելու	40,2%	35,1%	26,5%	51,0%	44,5%	33,8%
Այլ պատասխաններ	1,3%	0,8%	0,4%	1,7%	1,0%	0,6%
Ընդամենը	154,0%	130,0%	112,0%	195,9%	164,1%	142,7%

6.7. Մեկնելու պլաններ ունեցողներն ըստ տարիքի

	Մեկնելու պլան ունեցողների տոկոսը			Բոլոր հարցվածների տոկոսը		
	16-18 տ.	19-23 տ.	24-30 տ.	16-18 տ.	19-23 տ.	24-30 տ.
Միանշանակ՝ ոչ	37,2%	22,3%	22,0%	30,6%	17,9%	16,5%
Ավելի շուտ՝ ոչ	19,1%	17,9%	20,4%	15,7%	14,4%	15,3%
Ավելի շուտ՝ այո	23,6%	29,9%	28,3%	19,4%	24,1%	21,2%
Միանշանակ՝ այո	17,6%	28,0%	26,7%	14,5%	22,6%	20,0%
ԴՊ	2,5%	1,9%	2,6%	2,1%	1,5%	2,0%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	82,2%	80,5%	74,9%

6.8. Մեկնելու պլաններ ունեցողներն ըստ բնակավայրի

	Մեկնելու պլան ունեցողների տոկոսը			Բոլոր հարցվածների տոկոսը		
	Երևան	Մարզային քաղաք	Գյուղ	Երևան	Մարզային քաղաք	Գյուղ
Միանշանակ՝ ոչ	21,8%	27,5%	26,3%	17,0%	21,8%	20,6%
Ավելի շուտ՝ ոչ	17,1%	20,3%	19,9%	13,3%	16,1%	15,6%
Ավելի շուտ՝ այո	31,4%	27,8%	25,2%	24,5%	22,1%	19,7%
Միանշանակ՝ այո	27,0%	21,6%	26,9%	21,0%	17,2%	21,0%
ԴՊ	2,7%	2,7%	1,7%	2,1%	2,2%	1,3%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	77,9%	79,3%	78,3%

6.9. Մեկնելու պլաններ ունեցողների վերադառնալու մտադրություններն ըստ սեռի

	Մեկնելու պլան ունեցողների տոկոսը		Բոլոր երիտասարդների տոկոսը	
	Արական	Իգական	Արական	Իգական
Միանշանակ չեմ վերադառնա	18,2%	10,5%	9,4%	3,7%
Ավելի շուտ չեմ վերադառնա	13,0%	18,8%	6,7%	6,6%
Ավելի շուտ կվերադառնամ	32,0%	29,7%	16,5%	10,5%
Միանշանակ կվերադառնամ	25,5%	30,1%	13,2%	10,6%
ԴՊ	11,3%	10,9%	5,8%	3,9%
Ընդամենը	100,0%	100,0%	51,6%	35,3%

6.10. Մեկնելու պլաններ ունեցողների վերադառնալու մտադրություններն ըստ տարիքի

	Մեկնելու պլան ունեցողների տոկոսը			Բոլոր երիտասարդների տոկոսը		
	16-18 տ.	19-23 տ.	24-30 տ.	16-18 տ.	19-23 տ.	24-30 տ.
Միանշանակ չեն վերադառնա	8,5%	15,2%	15,7%	2,9%	7,1%	6,5%
Ավելի շուտ չեն վերադառնա	18,3%	14,7%	16,2%	6,2%	6,9%	6,7%
Ավելի շուտ կվերադառնան	36,6%	31,8%	27,6%	12,4%	14,8%	11,4%
Միանշանակ կվերադառնան	28,0%	27,5%	28,1%	9,5%	12,8%	11,6%
ԴՊ	8,5%	10,9%	12,4%	2,9%	5,1%	5,1%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	33,9%	46,7%	41,2%

6.11. Մեկնելու պլաններ ունեցողների վերադառնալու մտադրություններն ըստ բնակավայրի

	Մեկնելու պլան ունեցողների տոկոսը			Բոլոր երիտասարդների տոկոսը		
	Երևան	Մարզային քաղաք	Գյուղ	Երևան	Մարզային քաղաք	Գյուղ
Միանշանակ չեն վերադառնա	15,8%	9,7%	16,5%	7,2%	3,8%	6,7%
Ավելի շուտ չեն վերադառնա	21,1%	13,2%	13,3%	9,6%	5,2%	5,4%
Ավելի շուտ կվերադառնան	28,1%	32,6%	31,9%	12,8%	12,8%	13,0%
Միանշանակ կվերադառնան	26,9%	26,4%	29,8%	12,2%	10,4%	12,1%
ԴՊ	8,2%	18,1%	8,5%	3,7%	7,1%	3,5%
